



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱԾ

ՈՂԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹ

Դ 383 թ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՅԱՍՏՈՅ Բ. ԱԶԱՏԵԱՆ ի թի

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅԱԽ-ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՍՑԵՓԱՆՈՍ ԱԻԱԳ-ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ծխական - եկեղեցական ուսումնարանների բոլոր բաժանմունքների և միջնակարգ ուսումնարանների առաջին դաստունների համար:

Բ. ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Ի Տպարանի Յովհաննեաւ Մարտիրոսեան

1880

Дозволено Цензурою. Тифлисъ 10 Іюля 1880 г.



Типог. Мартиросіанца, на Орбакіановской улицѣ. д. № 5

**ՀԱՅԱՍՏԱՆ Բ. ԱԶԱՏԵԱՆԻ Ք. ԹԻ.**

ՀԱԽԱԲՈՆ ք. ԱԶԱՏՅԱՆ ի բհ.

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ դպրոցը, բացի ուսում մատակարարելուց, պարտաւոր է նաև բարոյապէս կրթել իւր սաներին, ապա ուրեմն նորանում աւանդուող առարկաների շարքում առաջին տեղը պիտի պատկանի քրիստոնէական կրօնի ուսման, որ իւր բարոյական վսեմ և պարզ սկզբունքներով բարձրացնում և ազնուացնում է մարդուս բնական ընդունակութիւնները և կրթում է նորան ամենատեսակ կատարելութեանց մէջ։ Կրօնագիտութիւնը այն ժամանակ միայն լինում է արդիւնաւոր և հասնում է իւր նպատակին, երբ նորա դասախոսութիւնը հասաւուած է մանկավարժական խոհեմ սկզբունքների վերայ։

Խոհեմութիւնը կրօնի դասախոսութեան, իբրև առարկայի, որ մարդուս կեանքի ուղեցցցն է, ՚ի հարկէ չէ կայանում նորանում, որ աշակերտը բերան անելով տւանդած դասը, թութակի պէս կրկնէ այն, այլ պիտի զգայ նոյն ուսման ահրաժեշտութիւնը և կարելութիւնը միանդամայն իւր կեանքի հետ յարմարացնելու այն։ Միով բանի՝ կրօնի և մարդուս կեանքի մէջ եղած կապը պէտք է ամուր պահպանել որի վերայ, ապաբազդաբար, ոչինչ ուշադրութիւն չէ դարձնվում մեզանում։ — Նատից վերցնենք մի օրինակ. Երեխային բառ առ բառ սովորեցնում են Հաւատոյ հանդանակը և ապա պատուէրները, բայց

մի և նոյն ժամանակ չեն ցոյց տալիք այն սերտ և անքակտելի կապը, որ տեղի պիտի ունենայ հաւատոց և բարի դործերի մէջ։ Ի՞նչ է լինում արդեօք սորա հետևանքը՝ —որովհետեւ երեխայի երևակայութեան մէջ կրօնագիռութիւնը և բարոյագիտութիւնը չեն կապուած մէկ մէկու հետ, ուստի և նորա հաւատը մնում է անսպոռող—մեռեալ։

Յաւով սրտի պիտի խոստովանինք, որ մեր ազգային ծխական—եկեղեցական դպրոցներում չէ թէ չէ պահպանվում կրօնի կանոնաւորեալ, մանկավարժական սկըզբուների վերայ հիմնուած դասախոսութիւնը, այլ մէծ մասամբ, մինչև 1874 թուականը, երբ լոյս տեսաւ, նորին վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսի պատուական կոնդակը ծխական դպրոցների բարեկագութեան մասին—այսպիսի կարևոր առարկայն բաց էր թողուած աւանդելի առարկաների շարքից։ Այս զդալի պակասութեան պատճառը պէտք է աեսնել՝ ի միջի այլոց, նաև պիտանացու կամ, լաւ ևս ասել, նպատակայարմար դասագրքերի սակաւութեան մէջ։

Այս իսկ հանդամանքը, որի մասին մէնք՝ իբրև երկու տարի շարունակ թեմական վերատեսչութեան պաշտօն կատարող, անձամբ վերահասու եղանք, հարկադրեց մէկ՝ Ռուսաց Դիմիդրի Սօկոլով Աւագ քահանայի «Սկըզբնական խրատ քրիստոնէական ուղղափառ հաւատոց մէջ» կրօնագիտութեան դասագիրքը, որ յօրինել է նա ժողովական տարրական դպրոցների համար, փոխել՝ ի Հայլեղու, յարմարեցնելով միանգամայն Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնների և դաւանութեան հետ։

Սօկոլովի անունը, իբրև հմուտ մանկավարժի, արդէն

յայտնի է ամբողջ Ռուսաստանին և մէնք կարող ենք խոստովանել հրապարակօրէն, որ նա առաջինը Ռուսաց հոգեորական մանկավարժներից կարողացաւ այսպիսի վսեմ սուարկայն, որպիսի է կրօնը, մատչելի անել մանկական հասկացողութեանը։

Անք կարող չյայնել այս տեղ նորին բարձրապատուութեան հայր հեղինակին մեր խորին շնորհակալութիւնն այն պատրաստականութեան համար, որ նա ցոյց տուեց իւր զրբի պատկերների կապարները Ուտերբուրդից Տիվիս հացնելով և միանգամայն գրաւոր կերպով մեղ թոյլատրեց, որ իւր աշխատանքը ի լոյս ածենք հայերէն լեզուով, առանց որ և է վարձատրութեան, ահաւասիկ սորա մասին նորա պատասխանը մեր նամակին։ Այն միտքը, թէ իմ գուգնաքեայ և թոյլ աշխատանքը կարող է օգտակար լինել Հայ մանկուոյն, ինձ համար ամեն վարձատրութիւնից էլ բարձր է։

Այսպէս ուրեմն նոյն գիրքը—պատկերադարդ—ներկայացնելով Հայ հասարակութեան անուամբս՝ «Սկըզբնք քրիստոնէական ուղղափառ հաւատոց Հայաստանեայց եկեղեցւոյ»—մեր նպատակն էր գլխաւորապէս Հայոց ծխական դպրոցներին առաջարկել մի ամփոփ դասագիրք կրօնագիտութեան, որպէս զի նոյն դպրոցների աղքատ աշակերտները, որոնք միջոց չունին, այնաեղեց գուրս գալուց յետոյ, այլևս շարունակել իւրեանց ուսումը բարձրակարգ դպրոցներում, զուրկ չմնան այսպիսի կարեոր և անհրաժեշտ ուսումից։

Այս գիրքը պարունակում է իւր մէջ՝ Սբազան պատմութիւն հին և նոր կտակարանի, վարդապետութիւն քրիստոնէական հաւատոց և բարոյականութեան,

գրաւելով նաև մանկանց հետաքրքրութիւնը, այնուհետեւ  
չափից աւելի վարձատրուած կըհամարենք մեզ մեր այս  
ամենաշնչին աշխատանքի համար։

Կրօնուսոց անդրկովկասեան ուսուցական դպրանոցի։

### ՍՏԵՓԱՆՈՍ ԱՒԱԴ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԿԱՆ

այն է՝ տեղեկութիւնք եկեղեցւոյ և նորա խորհրդոց վերայ. քրիստոնէական հաւատոյ տարածումն առհասարակ. Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը Հայաստանում. Քրիստոնէութեան յաղթական տարածումն Հայաստանի մէջ. Գրիգոր լուսաւորիչ, Սուրբ գիրքը և հաւատոյ հանգանակը, այլև ամենատարեսոր աղօթքներ նախ գրաբառ և ապա նորա գէմ աշխարհաբառ թարդմանութիւնը։

Կրօնուսոց վարժապետը պիտի աշխատի հին և նոր կոսակաթանի պատմութեանց օգնութեամբ զարգացնել մանկան մէջ կրօնական առաջն զգացմունքները և նոյն պատմութեանց հետ ՚ի միասին ուսուցանել նաև աղօթքներ պատմութեան իմաստին համեմատ, ինչպէս դասաւորուած է սոյն գասագրքի մէջ։

Սոյն գասագրքով կարելի է պարապել նաև այնպիսի երեխաների հետ, որոնք դեռևս կարդալ չգիտեն, բայց ոչ սխտեմատիկաբար, այլ պատկերների օգնութեամբ ծանօթացնելով նրանց սրբազն պատմութեան զանազան իրողութիւնների հետ, այն ևս ժամանակի հանգամանքներին յարմարեցնելով, ինչպէս՝ Սուրբ կոյս Մարիամի աւետաման և Քրիստոսի ծննդեան տօներից առաջ պատմել նոյն տօների անցքը, սովորեցնելով և նոցա յարմար երգաբառնութիւնքը՝ «ուրախ լեր բերկրեալդ»—«խորհուրդ մեծ» և այն, որելիցէ ծանօթ մարդու հիւանդութեան պատճառով—Քրիստոսի ձեռքով հրաշալի բժշկութեանց անցքերը. —որ և իցէ հարսանեաց առիթով—կանայ քաղաքում հարսանեաց ժամանակ արած առաջն հրաշքը։

Եթէ այս գասագիրքը կարող կը լինի, գոնէ մասմբ, կանոնաւորել և արդիւնաւորել կրօնագիտութեան գասախօսութիւնը մեր ազգային ծխական դպրոցներում,

## ԱՎՋԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ


ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

## 1. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Աստուած գերագոյն և ամենակատարեալ էակ է: Զէ  
եղել այնպիսի ժամանակ՝ որ Աստուած եղած չլինէր:  
Յաւիսենական է Աստուած, և չկոյ աշխարհիս մէջ մի  
տեղ ուրը զգտնուի նա. Աստուած ամենային տեղ է: Ա. Ենաբարբէ  
է Աստուած (որովհետեւ ամէնքի համար գերագոյն բարի  
է կամենում), Ա. Ենի մասս է (մեր գործած յայտնի և  
գաղտնի գործելը զիտէ), նոյնպէս և Ա. Ենակարող է: Բատ  
իւր էութեան անմարմին հօգի է Աստուած:

ինքն Աստուած յայտնած է մեզ թէ, ըստ բնութեան մի է, և ունի երեք անձինք, որք են՝ Հայր Աստուած, Որդի Աստուած և Հոգի սուրբ Աստուած, թէ այս անձինքը ունին հաւասար զօրութիւն և պատիւ, և թէ երեք անձինք մի Աստուած են և ոչ երեք։ Երեք և մի լինելու հեռաւոր նմանութիւնը բնութեան մէջ ևս տեսն վում է։ Օրինակի համար, արեգակից ծնվում է լրաց և

բղկառւմ է ջերմութիւն, նոյնպէս Հայր Աստուծուց ծընվում է Որդին և բղկառւմ է Հոգին Սուրբ. և ինչպէս չէ



կարելի արեգակից բաժանել ոչ լրյօնը և ոչ տաքութիւնը, այնպէս ևս Հայր Աստուծուց չէ կարելի բաժանել Որդին

Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին  
քեզ այլ աստուածք բաց յինչէն:—

Ես եմ քո Տէր Աստուածը և ինձանից զատ ուրիշ  
աստուածներ չունենաս:

Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո  
՚ի վերայ մնատեաց.

Աստուծոյ անունը չյիշես ունայն տեղը Հայութ

Փառք Քեզ, Սստուած, փառք Քեզ  
յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ:

Փառք Հօր և Որդոյ և Հոգոյն սըր-  
բոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
նից ամէն:

Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն  
սրբոյ. ամեն:

2. ԹԵ ԻՆՉ ԵՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ:

Ակզեռմ Աստուած ստեղծեց՝ այսինքն ոչնչից դպրեց, շատ հրեշտակներ: Հրեշտակները անմարմին (ուրեմն և անտեսանելի), անմահ, խմացական և ազատ հոգիք են: Նոքա հրեշտակ (այսինքն համբաւարեր) ասվումեն այն պատճառաւ, որ Աստուծոյ հրամանով մարմնաւոր կերպարանք են ստանում և Աստուծոյ կամքը յայտնում են: Ամէն հրեշտակ նոյն աստիճանի զօրութիւն և փառք չունի: Հրեշտակները բաժանվումեն ինն դասակարգ, և այս պատճառով զանազան անուններ ունին, ոմանք հրեշտակնեն ասվում, ոմանք հրեշտակողներ, և ոմանք սերութեն և ժերութեն:

Աստուած հրեշտակներին բարի ստեղծեց, բայց վերին դասակարգի հրեշտակներից մինը հպարտացաւ, կամեցաւ Աստուծոյ հաւասար լինիլ ուստի սկսաւ հակառակիլ նորան և տրտնջալ նորա դէմ, կարողացաւ գէպի չարը մոլորացնել ուրիշ շատ հրեշտակներին, որոնք նորա հետերկնքից թօթափեցան: Այն չար հրեշտակին ստուածոյ ենք ասում (որ կընշանակէ հակառակորդ), իսկ նորա մոլորեցրած հրեշտակներին դեռ և արբանեկն ստուածոյ: Այսպէս հրեշտակները բաժանուեցան բարի և չար: Բարի հրեշտակները Աստուծոյ կամքը յայտնումեն մարդկանց, ամէն բարի գործերի մէջ օգնումեն նոցա: Չար բաներից պահպանումեն մեզ. իսկ չար հրեշտակները ամէն բարի բանին թշնամի են:

Ամենաբարին Աստուած իւրաքանչիւր մարդու մի հրեշտակ է տալիս, որ ասվում է պահպան հրեշտակ: Առան դիմումենք մենք մեր աղօթքով: Երբ քնից արթնանումենք՝ խնդրումենք, որ այն օրը օգնէ մեզ բարեգոր-

ծութիւն անելու. իսկ քնելու ժամանակ խնդրում ենք, որ մեզ ազատ պահէ ստանայի փորձութիւններից և արժանի անէ Աստուածային ողորմութեան:

Հրեշտակի խարագութեան յանձնիր կանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխոռվս 'ի տուէ և ի գիշերի, յարթնութեան և 'ի հանգստեան մերում, զի՞ Դրուեա արարիչ լուսոյ և հաստիչ զիշերի:

3. ՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀՅԱ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՍՏԷՂՄԱ-ԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Հրեշտակն եոից յետոյ Աստուած ստեղծեց վեց օրուայ մէջ այն բոլու բաները, որ մենք տեսնում ենք: Առաջին օրը ստեղծեց լոյսը: Նրկրորդ օրը ստեղծեց տեսանելի երկինքը: Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց, և հրամայեց որ հողը բուսուցանէ բայսեր, ըրրորդ օրը ստեղծեց արեգակը, լուսինը և ասղերը, հինգերորդ օրը՝ թռչունները և ձկները, վեցերորդ օրը ստեղծեց բոլոր կենդանիները և յետոյ մարդը:

Աստուած մարդու մարմինը հողից ստեղծեց և փր-

չելով տուեց նորան բանական, ավատ և անմահ հոգի:  
Այս հոգով մարդը զանազանուեցաւ կենդանիներից: Աս-  
տուած մարդու հոգին ստեղծեց իւր կերպին և նմանու-  
թեան պէս, շնորհելով նորան անարատ միտք և սուրբ  
կամք:

Աստուած առաջին մարդու կօդքից ստեղծեց նորա-  
համար կին, այսինքն այնպիսի մարդ, որպէս նա ինքն էր:  
Աստուած այս արաւ, որպէս զեւ մարդիկ սիրեն միմեանց  
այնպէս, ինչպէս իւրեանց անձը: Աստուած առաջին մար-  
դուն Առաջ անուանեց, իսկ նախամօրը Եւայ:

Եօմներորդ օրը Աստուած ոչինչ չստեղծեց, վասնո-  
րոյ այն օրը կոչուեցաւ շաբաթ. (որ կընշանակէ հանդըս-  
տութիւն): Աստուած օրհնեց և սրբեց այն օրը և հրա-  
մայեց որ տօն և սուրբ պահուի՝ ՚ի յիշատակ աշխարհի  
ստեղծագործութեան:

Աստուած աշխարհը ստեղծելուց յետոյ անխնամ-  
չմողեց նորան, այլ իւր հովանաւորութեան ներքոյ պա-  
հելով, նախախնամում է և ամէն բարի բանին օգնում է:  
Այս պատճառով մենք Աստծուն անուանումնք Տէր,  
Երկնաւոր թագաւոր, Արարիչ, Ամենակալ և Նախախնա-  
մող: Եւ մեր ամէն կարօտութիւնների ժամանակ աղօթ-  
քով դիմումնք դէպի նա:

Ամենայն բարի գործի համար մենք խնդրում ենք  
Արարիչ Աստուծոյ և Ամենակալի օրհնութիւնը և  
շնորհակալ ենք լինում նորանից այն ամէն բանի համար,  
ինչ որ նա տալիս է մեզ:

**Օրհնեա տէր:**  
Գոհանամ զքէն (շնորհակալ եմ քե-  
զանից), Տէր Աստուած իմ:

Մէր դէպի Ամենակալ և Արարիչ Աստուածն ունե-  
ցած հաւասար յայտնում ենք այսպէս:

Հաւատամբ ՚ի մի Աստուած, ՚ի Հայրն  
Ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի ե-  
րևելեաց և աներեւութից:

Երևելի անուանում ենք Աստուծոյ այն արարած-  
ները, որոնց կարող ենք տեսնել—երկիրը և ամենը՝ ինչ  
որ նորա վերայ կայ. իսկ աներեւոյթ—հրեշտակներին:

Աստուծոյ պատրիկանը էօլներուր օրուայ համեն:

Յիշեա սրբնլ զօր շաբաթու, զվեց օր գոր-  
ծեսցես և արասցես զամենայն զգործս քո.  
իսկ յաւուրն Եօմներորդի շաբաթ Տեառն  
Աստուծոյ քոյ:

Միտդ պահիր շաբաթ օրը, որ սրբութեամբ պա-  
հես նորան, այսինքն այն օրը նուիրես բարի գործերի:  
Վեց օր աշխատիր, այսինքն արա քո գործերը, իսկ Եօմ-  
ներորդ օրը դադարիր այդ գործերից ՚ի պատիւ քո Տէր  
Աստուծոյ:

Առաւտեան ազօթք:

Գոհանամ գի՞էն,  
Տէր Աստուած իմ,  
որ զարթուցեր զիս  
՚ի հանգստենէ քնոյ  
շնորհիւ ողորմութեան  
Քո: Օարթո զմիտս  
իմ արդարութեամբ  
առ Քեզ, Տէր Աս-  
տուած իմ, զի տես-  
ցեն աչք իմ զփըր-  
կութիւն Քո: Եկես-  
ցէ և բնակեսցի յիս  
Աստուածութիւն Քո.  
և ողորմութիւն Քո  
հովանի և պահապան  
լիցի ՚ի վերայ իմ: Եւ  
զիս արժանի արա ՚ի  
տուէ և ՚ի գիշերի և  
յամենայն ժամու միշտ  
խորհիլ ՚ի սէր պա-  
տուիրանաց Քոց. և  
գոհանալով փառա-  
ւորել զայր և զիլը-  
դի և զսուրբ նո-

Նորհակալեմ Քե-  
զանից, Տէր Աստու-  
ած իմ, որ Քո ողոր-  
մութեան շնորհիւր  
զարթեցրիր ինձ հան-  
գիստ քնից: Օար-  
թեցրու իմ միտքը  
արդարութիւնով դէ-  
պի Քեզ, Տէր Աս-  
տուած իմ, որ իմ  
աչքերը տեսնեն Քո  
փրկութիւնը, գայ և  
բնակուի իմ մէջ Քո  
Աստուածութիւնը. և  
Քո ողորմութիւնը  
հովանի և պահապան  
լինի իմ վրայ: Եւ  
ինձ արժանի արա  
գիշեր և ցերեկ և ա-  
մէն ժամանակ Քո  
պատուիրանների վրայ  
մտածել և Քո պա-  
տուիրանները կատա-  
րել: Եւ շնորհակա-

գիդ, այժմ և միշտ  
և յաւիտեանս յա-  
վիտենից, ամէն:

լութեամբ փառաւո-  
րել որը և Որդուն և  
սուրբ ոգուն. այժմ  
և միշտ և յաւիտեանս  
յաւիտենից ամէն:

4 ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԸ ԴՐԱԽՏԻ ՄԷԶ

73 83 ՀՀ

Աստուած Ադամին ու Նւային բնակեցրեց զրախափ  
մէջ, որ արեւելեան կողմը գեղեցիկ պարտէզ էր: Նորա  
մէջ մի ծառ ևս կար, որի պտուղներն ուտողները հի-  
ւանգութիւնից և մահից ազատ էին լինում: Այս ծառի  
անունն էր Ծառ Հենաց: Աստուած առաջին մարդոց գլ-  
րախոր տանելով, օրհնեց նրանց և ասաց. Յնազմացէք,  
լորէք երկիրս և նորան տիրեցէք:» Առաջին մարդիկը եր-  
ջանիկ կեանք ունէին զրախափ մէջ և ոչ մէկ բանի կարօ-  
տութիւն չէին զգում, հոգեկան զբաղմունք ունէին որ  
ձանաշում էին Աստուծոյ արարածները և սովորում էին  
սիրել Աստուծուն Սորանից զատ ինքն Աստուած ե-  
րեւումէր նրանց, և յայտնում էր այն բաները, որ իրենք  
իրենց չէին կարող խմանալ. ունէին նաև մարմնական  
զբաղմունք, այսինքն գրախատը պահպանում և մշակում  
էին: Նոքա ոչ թշնամութիւն գիտէին և ոչ խարէու-  
թիւն, և անմեղ մանկանց նման ամօթ չէին զգում:

Որպէս զի մարդիկ հնազանդութիւն և բարեխառն  
կեանք վարել սովորին, Աստուած պատուէր տուաւ նոցա:  
Պատուիրեց որ չուտեն այն ծառի պտուղը որի անունն էր  
ծառ գիտութեան բարեց և չափէ, ամելով որ եթէ ուտեն,  
կը մեռնին:



Ողորմած Աստուածը մեզ ևս կարողութիւն ե ոյց  
է տալիս բարի բան սովորելու, իւր կամքը մեզ ևս յայտ-  
նում է և տալիս է Աստուածային անվելցութիւն; Վասն  
որոյ մենք ևս մեր դասառութիւնից առաջ աղօթք ասե-  
լով խնդրում ենք, որ օգնէ մեզ աւանդուած ուսմունքը  
սովորելու: Իսկ դասառութիւնից յետոյ աղօթք ասելով  
շնորհակալ ենք լինում մեզ պարզեած ողօրմութեան հա-  
մար, և օրհնութիւն ենք խնդրում նոցա համար, որոնք  
օգնեցին մեզ սովորելու:

## Աղօթք դասից առաջ:

Ամենաբարի Աս-  
տուած, առաքեալ առ  
մեզ զշնորհս Հոգւոյդ  
Քո սրբոյ, որ պարզեէ,  
մեզ զմիտս և կազ-  
դուրէ զզօրութիւնս  
Հոգւոց մերոց, որպէս  
զի մեք ընդունելով  
զաւաննդեալ մեզ ուս-  
մունս՝ զարգասցուք  
Քեզ ստեղծողիդ մե-  
րում 'ի փառս, 'ի  
միսիթաբութիւն ծր-  
նողաց մերոց, յօ-  
գուտ եկեղեցւոյ Ա

Ով ամենաբարի  
Աստուած, ուղարկիք  
դէպի մեզ Քո սուրբ  
Հոգւոյդ շնորհքը,  
որ մեզ միաք պար-  
գևէ, և զօրացնէ մեր  
ովկեռը կարսղութիւն-  
ները, որպէս զի մենք  
ուշք դարձնելով մեզ  
տուած ուսմունքին,  
մեծանանք Քեզ ըս-  
եղծողիդ փառք տա-  
լու, մեր ծնողացը  
միսիթարելու և եկե-  
ղեցւոյն ու Հայրե-

აურენტაფ:

## Այրենեազ:

## Վայովն դասից յետոյ:

Գոհանսամք զՔէն,  
Արարիչ, զե արժանի  
արարեր զմեզ շնոր-  
հաց Քոց՝ բնդունե-  
լութեան ուսմանս,  
օրչնեա՛ զմեծաւորս,  
զծնողս և զուսուցիչ  
մեր, որք առաջնոր-  
դեն մեզ՝ ի գիտու-  
թիւն բարութեան, և  
տուր մեզ զկարողու-  
թիւն՝ ի շարունա-  
կութիւն ուսմանս  
այսորիկ:

Նիքին օգտակար լի-  
նելու:

Հնորհակալ ենք  
Քեզանից, Արարիւ  
որ Քո սուրբ Հնոր-  
հիւը արժանացրիր  
մեզ ուսմունք ստա-  
նալու: Օրհնիր մեր  
մեծաւորներին, ծը-  
նողներին և ուսու-  
ցիչներին, որոնք ա-  
ռաջնորդում են մեզ  
բարի բանեքն իմա-  
նալու: Տուր մեզ ոյժ  
և կարողութիւն, որ  
այսուհետեւ ևս շա-  
րունակենք նոյն ու-  
սումբ:

### 5. ԱՐԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՔԻ ՄԵԶ ԸՆԿՆԻԼԵ:


Աստանան՝ առաջին մարդոց երանելի վեճակի վերայ  
նախանձուելով, մոլորեցը նրանց դէպի չարը։ Մէկ ան-  
գամ երբ Եւան անցնում էր արգելաւ ծառի մօտով, սա-

տանան՝ օձի կերպարանք մննելով, մօսեցաւ նրան և հարցը եց. «Յիշրաւի, մի՞թէ Աստուած արգելվէ դրախտի ծառերի պտուղներից ուտելցւ Եւան պատասխանեց թէ՝ «Քոլը ծառերի պտուղներից կարող ենք ուտել, միայն հրամայեց Աստուած այս ծառի պտուղը չուտել, որպէս զի չմեռնինք»: Աշ դուք չեք մեռնիլ ասաց սատանան այլ եթէ այս պտղից ուտեք՝ իսկոյն ձեր աչքերը կը բացուին և Աստուծոյ նման կը լինիք, չարն ու բարին կը հասկանաք: Եւան ցանկացաւ այն պտղից ուտել. նա չկարողացաւ համբերել կտրեց ու կերաւ, յետոյ Ադամին տուաւ, որ նոյնպէս կերաւ: Եւ այս կերպով առաջին մարդիկ մեղանչեցին: Երբ մեղքը առաջին մարդոց հոգու մէջ մտաւ, իսկոյն ամօթ և սարսափը տիրեց նոցա վերայ: Երբ լսեցին որ Աստուած զրախտի մէջ ման է դալս, ահով դողով պահուեցան ծառերի մէջ, չմտածելով՝ որ ամենատես Աստուծուց անկարելի է թագչիլ: «Ադամ, ուր ես», հարցը եց Աստուած: Ադամ պատասխանեց. «Ձայնդ լսելով վախեցայ, և որովհետեւ մերկ էի՝ ամաչեցի, ուստի պահուեցայ»: — Զլինի՞ թէ այն արգելուած ծառի պտղից կերար, հարցը եց Աստուած: Այն ժամանակ սկսաւ Ադամ յանցանքը իւր կնոջ վերայ ձգել և ասաց. «Այս կինս, որ դու ինձ տուիր. սա ինձ տուաւ այն պտուղը, և ես կերայ»: Աստուած հարցը եւային. «Այս ի՞նչ բան արիր». իսկ նա պատասխանեց թէ՝ «օձը ինձ խարեց»: Այս կերպով ահա մարդկանց հոգին մեղքերով ապակոնուեցաւ: Նոքա, որ սկզբից բարի և ճշմարտախօս էին, այն յանցանքը դորձելուց յետոյ ստախօս, անձնասիրտ չարասիրտ եղան:

Աստուած արգելում է մեղ սրտերիս մէջ նախանձ

պահելը կամ ուրիշի բարութեան վերայ նախանձիլը, որովհետեւ նորանից յառաջ են գալի շատ տեսակ շարութիւններ: Այդ պատուիրանը այսպէս է կարգացվում:

**Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, որ ինչ ընկերի քո է:**



#### 6. ԽՈՍՏՈՒՄՆ ՓՐԿՉԻ ԵՒ ՆԱԽԱՇՆՈՂԱՑ ՅԱՆՑԱՆՔԻ ՊԱՏԻԺԸ:

Արդարադատն Աստուած անիծեց մոլորեցնող սատանային, որ օձի կերպարանք էր առել, և ասաց նրան. «Քոյ և այս կնոջ մէջ թշնամութիւն եմ դնում: սորս սերունդից մէկը պիտի քո գլուխը ջախջախէ»: Այս խօսքերը միաթարութիւն եղան մարդկանց համար, որովհէ.

տե գուշակեցին՝ թէ Փրկիչը աշխարհ պիտի գայ: Յետոյ Աստուած մարդկանց համար ևս պատիժ որոշեց, որ նոքա չմոռանան իրանց գործած մեղքը: Եւային ասաց՝ թէ գուշակով պիտի ծնանիս որդի, իսկ Աղամին ասաց «Երեսիդ քրտնքով պիտի ճարես հացդ, մինչև որ մեռնիս»: Բայց որպէս զի մարդիկ միշտ յիշեն խոստացած Փրկիչը, Աստուած սովորեցրեց նոցա, որ իրեն կենդանիներ զոհեն, որովցոյց տուաւ, թէ Փրկիչը իւր արիւնով պիտի աղատէ մարդկանց: Յետոյ Աստուած դրախտից արտաքսեց նրանց:

Բայց սորանից յետոյ ևս Աստուած անխնամ չթողեց մարդկանց, այլ պատրաստումէր նրանց Փրկչին ընդունելու: Մինչև Փրկչի գալուստը եղած միջոցը կոչվումէ հիսուսի ժամանակ, իսկ նորա գալուց յետոյ եղած միջոցը առվումէ նոր ռուսի ժամանակ:

**Աստուած, ողորմեա ինձ մեղաւորիա:**

**Երեկոյեան աղօթք:**

**Տէր Աստուած մեր,**  
Դու պահեա զմեզ  
խաղաղութեամբ՝ ի  
գիշերիս յայսմիկ և  
յամենայն ժամանա-  
կի: Ընդ սուրբ երկիւղ-  
քո բեւեռեալ պահեա

**Տէր Աստուած**  
**մեր,** Դու պահի՛ք  
մեզ խաղաղութիւ-  
նով այս զիշեր և  
ամեն ժամանակ, Քո  
սուրբ երկիւղիդ մէջ  
պահի՛ք մեր միտքը և

դմիտոս և զիսորհուրդս  
մեր: Որպէս զի յա-  
մենայն ժամ՝ Քեպահ-  
պանեալ լիցուք յորո-  
գայթից թշնամոյն: Եւ  
Քեզ հանցուք  
զօրհութիւն և զփա-  
ռուս օր և Որդոյ և  
Հոգւոյն սրբոյ, այժմ  
և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից,  
ամէն:

## 7. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԸ ՄԻՒՉԵՒ ԶՐՑԵՂԵՂ

Արեգի մէջ ընկած առաջնին մարդկանց սերունդն ևս իւրեանց պէս մեղաւոր եղան: Այն պատճառով բոլոր մար-  
դիկ կրում են այն պատիժները՝ որ նշանակեց Աստուած  
Աղամի և Եւայի համար, բայց այս ցաւերի հետ նախա-  
ծնողքը հաղորդեցին իւրեանց սերունդներին նաև Փրկչի  
գալստեան յշխը:

Աղամ և Եւան դրախտից արտաքսուելուց յետոյ  
որդի ունեցան: Առաջնին որդուն Կայէն կոչեցին, իսկ երկ-  
րորդին Արէլ:

Կայէնը երկրագործ էր, իսկ Արէլը խաշնարած: Մէկ  
անգամ եղբայրները կամեցան Աստուծուն զոհ անել: Եր-  
կուսն ևս իւրեանց աշխատութեան լաւ պատուղներից զոհ

բերին, բայց երկուսի սիրտն ևս միատեսակ չէր: Արէլը խոստացեալ Փրկչին հաւատալով և իւր մեղքի վերայ զղջալով էր մատուցանում իւր զոհը, իսկ Կայէնը առանց հաւատալու և զղջալու: Աստուած չընդունեց Կայէնի զոհը, այլ միայն Արէլինն ընդունեց: Այն ժամանակ նախանձից վառուած Կայէնը սպանեց Արէլին: Արդարադատն Աստուած անիծեց եղայրասպան Կայէնին՝ ասելով. «Են հողը, որի վերայ քո ձեռքով եղթօրդ անմեղ արիւնը թափեցիր՝ քո դէմ բոլղքում է իմ առաջ. Հալածական և թափառական մնաս աշխարհիս երեսին»: Աստուած Արամին և Եւային միմիթարելու համար՝ Արէլի փոխանակ ուրիշ որդի տուաւ նոցա, Սէթ անունով (որ միմիթարիչ կընշանակէ): Կայէնը ծնողաց տանից հեռացաւ և հեռու տեղ բնակուեցաւ: Եւ այսպէս՝ մարդիկ սկսան իրարից բաժանուիլ: Կայէնի սերունդները մոռացան Աստուծուն և անձնասէր ու անխիղջ մարդիկ էին, իսկ Սէթի սերունդը ճանաչումէր Աստուծուն և արգար էր: Բայց երկար ժամանակ անցնելուց յետոյ Սէթի սերունդը բարեկամութիւն և ազգականութիւն արին Կայէնի սերունդի հետ, նոցանից սովորեցին ամէն տեսակ չարութիւն և մոռացան Սատուծուն: Միայն արգար նոյի ընտանիքի մէջ մնաց ճշշմարիտ հաւատքը:

Սոքա են Աստուածային պատուիրանները, որոնք արգելում են չարութիւններ անել.

**Մի՛ սպանաներ,** մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:

## 8. ԶՐԿԵՂԵՑ:

Արդարադասն Աստուած վՃռեց որ մարդոց ջրհեղեղով պատժէ: Նա հրամայեց նոյին, որ տապան (մէջ նաւ) շինէ, այնպէս որ մէջը կարողանան տեղաւորուիլ նորա ընտանիքը և աշխարհիս բոլոր կենդանիները: Այն տապանի մէջ մտաւ նոյ իւր կնոջ հետ, նորա Սէմ, Քամ



և Յարէթ որդիքը՝ իրանց կանանց հետ, և իւր իւր հետ տապանի մէջ մտցրեց սուրբ համարուած—զոհի կենդանիներից ու թռչուններից եօթն եօթն զոյդ, իսկ անսուրբ անասուններից երկերկու զոյդ: Յետոյ քառասուն օր անդադար անձրւե եկաւ, ջուրը շատացաւ, եղերքներից դուրս եկաւ, բոլոր երկրիս երևոր ծածկեց, որով լսեղ-

գուեցան մարդիկ և անասուններ։ Աղատուեցան միայն նոքա, որոնք տապանի մէջ էին։  
Եթի ջրհեղեղն անցաւ, նոյ տապանից դուրս եկաւ և իւր աղատուելուն համար շնորհակալութեան զոհ մատոցը Սստուծուն։ Աստուած այն զոհը ընդունեց և խոստացաւ, որ այլ ևս համաշխարհական ջրհեղեղ չելինիլ և իւր խոստման նշան տուաւ ծիածանը, որ է ծիրանի գօտին։

### 9. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԸ ԶՐՀԵՂԵՂԻՑ ՅԵՏՈՅ

Ջրհեղեղից յետոյ կարճ ժամանակի մէջ մարդիկ նորէն մեղքի մէջ ընկան։ Նոյ այդի տնկեց, և երբ խաղողը հասաւ, նորա հիւթից ըմպելիք պատրաստեց։ Գինու զօրութիւնը չիմանալով, մէկ անգամ փոքր ինչ աւելի խմեց հարթեցաւ և մերկ ընկաւ իւր վրանի տակ։ Քամը տեսաւ իւր հօր մերկութիւնը և վատ կատակով պատմեց այն իւր եղայլներին։ Բայց Սէմ և Յարելթ երբ լսեցին, իսկոյն գնացին իրանց հօր մօտ և վերարկուով ծածկեցին նորա մերկութիւնը։ Նոյ Աստուծոյ հրամանով անիծեց Քամին՝ նորա վատ վարմունքի համար, իսկ Սէմին և Յարելթին օրհնեց և միանդամայն դուշակեց, թէ Փրկիչը յառաջ կըդայ Սէմի սերունդից։

Աստուծոյն որոտուիրանը ծնողաց որոտուելու հոսկին։

Պատուեա՛ զշայր քո և զմայր, զի բա-

րի լինիցի քեզ և երկայնակեաց լինիցիս՝ իվերայ երկրի։

Ջրհեղեղից յետոյ մարդկային ազգը նորէն բազմացաւ նոյի երեք որդիներից։ Առաջ բոլոր մարդիկ միասին էին ապրում և մէկ լեզուով խօսում։ Յեղի մէջ ամենից մեծը նահապէտ էր ասվում, որ փոքրերին սովորեցնում էր թէ ի՞նչպէս կեանք պէտք է վարել կառավարումէր նըրանց և արարիչ Աստուծուն զոհ էր մատուցանում։ Բայց յետոյ, երբ չարագործութիւնք և խուզութիւնք աշխարհիս մէջ շատացան, մի քանի ցեղեր խորհուրդ արին թէ ամի այնպիսի քաղաք և աշտարակ շիննէք՝ որի ծայրը մինչև երկինքը համար փառք լինի և չցրուինք աշխարհիս երեսին։ Բայց Աստուած չթողեց որ այն շենութիւնը աւարտեն։ շինողների լեզուն այնպէս խառնակեց, որ չէին կարող միմեանց խօսքերը հասկանալ։ Ուստի թողին շինութիւնը և բոլոր աշխարհիս երեսին ցրուեցան։ Այս կերպով զանազան ազգեր ձեւացան։ Մարդկային սերունդները զսնազան կողմեր ցրուելով՝ իւրեանց աղղակցութիւնը մոռացան։ Իւրաքանչեւր սերունդ իւր համար գրեթէ նոր լեզու հնարեց, և Աստուծոյ վերայ նոր կարծիքներ ունեցաւ։ Նոցա մեծ մասը ծշմարիտ Աստուծուն մոռացան և սկսան Աստուած համարել այն ամէն բաները, որ իրենց օգուտ կամ վեաս էին տալիս։ Ոմանք սկսան երկրպագութիւն անել արեգակին, լուսնին և աստղերին։ ոմանք ևս կենդանիները, ծովը, և երկիրս Աստուծոյ աեղ էին ընդունում։ Աստուածների մէջ ոմանց մեծ էին համարում միւսներին փոքր, ոմանց բարի, ո-

մանց ևս չար: Յետոյ սկսման ուկուց, արծաթից, քարից և փայտից աստուածներ շինել և մեհեանների մէջ դնելով՝ զոհ էին մատուցանում նոցա: Այնպիսի արձանները չուռա: Էին կոչվում, և նոցա մատուցուած պաշտօնը էստութիւն:

Այս անօրէնութիւնը տարածուեցաւ բոլոր աշխարհիս վերայ և գրեթէ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկան:

Կոտողաշտութիւն արգելոց Աստուծոցին պատրահութ:

Մի արասցես բեզ զկուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս 'ի վերէ, և որ ինչ յերկրի 'ի խոնարհ և որ ինչ 'ի ջուրս 'ի ներբոյ երկրի—մի՛ երկրպազանիցես նոցա և մի՛ պաշտեսցես զնոսա:

## 10. ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԽՍԱՀԱԿ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ:

Մինչեւ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկած էին, Սէմի սերունդից Աբրահամ անունով մէկ արդար և ուղղահաւատ մարդ կար: Աբրահամ Աստուծոյ հրամանով թողեց իւր հայրենիքը և զնաց բնակուեցաւ Քանանացոց երկրի մէջ: Այնտեղ Աստուած քանի մի անդամ երեւեցաւ նորան և յայսնեց՝ թէ նա Խսահակ անունով մի որդի պիտի ունենայ, որից մեծ ժողովուրդ պի-

տի յառաջանայ, որ Աստուծոյ ժողովուրդը կրկնուի, որովհետեւ նա իւր դէպի Աստուած ունեցած հաւատը հաստատ պիտի պահէ, և ինքը Քանանացոց երկիրը նրան պիտի տայ: Աստուած այն ժամանակն իսկ հրամայեց, որ Աբրահամի բոլոր սերունդները թղփատուին, և ասաց թէ միայն նա կըհամարուի իւր ժողովուրդը, որ թղփատուած կըլինի:

Աստուծոյ խոստունքը կատարուեցաւ: Աբրահամ հարիւր տարեկան եղած ժամանակ Խսահակ որդին ծնաւ: Աբրահամ բոլոր սրտով սիրում էր իւր որդուն: Աբրահամի հաւատը և հնազանդութիւնը Աստուած մեզ իբրև օրինակ տուեց հետեւեալ կերպով. Մէկ անգամ Աստուած երեւեցաւ Աբրահամին ու ասաց՝ «Աբրահամ»: Աբրահամը պատասխանեց՝ «այստեղ եմ» Աստուած ասաց՝ «վեր առ այդ քո միակ որդիիդ Խսահակը, որին դու սիրում ես, և քեր նորան ինձ մատաղ—ողջակէդ այս սարի գլխին, որը ես ցոյց կըտամ քեզ»:—Միւս օր առաւօտը կանուխ վերկացաւ Աբրահամը, էշը պատրաստեց, ողջակիզե համար փայտ կոտրեց, կապեց, առաւ հետը երկու ծառայ և իր սիրելի որդի Խսահակին և գնաց Աստուծոյ ցոյց տուած տեղը: Նոքա երեք օր ճանապարհին էին: Երբ Աբրահամ հեռուից տեսաւ սարը, ասաց իր ծառաներին՝ «Դուք այստեղ մնացէք մեզի սպասեցէք, իսկ ես ու որդիս մինչեւ դիմացի սարը կ'երթանք, աղօթք կ'անենք ու կըդառնանք»:— Աբրահամը Խսահակի վերայ բարձեց փայտը. իսկ ինքը առաւ կրակն ու թուրը, և նոքա երկուսը գնացին միասին: Ճանապարհին Խսահակը ասաց Աբրահամին. «Հայր, ահա մենք ունինք փայտը և կրակը, բայց ողջակիզե ոչխարը ու՞ է»: Պատասխան տուաւ Աբրահամը.

Աստուած ինքը կը պատրաստէ իւր համար ողջակիզեռ ոչխարը, որդեակա» Եւ այսպէս երկուսը միասին շարուշ նակում էին գնալը նրբոր վեր ելան սարը, Աբրահամը սեղան շինեց, դարսեց փայտը, և Խաչակին կապելով դրաւ նորա վերայ: Յետոյ վեր առաւ թուրը և ձեռքը բարձրացրեց, որ մորթէ Խաչակին: Բայց յանկարծ Աստուծոյ հրեշտակը ձայն տուաւ նորան երկնքից. «Աբրահամ Աբրահամ, մի դիպչիր աղայիդ, հիմայ հասկացայ, որ աստուծավախ մարդ ես, և իմ սիրոյ համար քո միակ որդուդ չխնայեցիր:» Աբրահամը իր շուրջը նայեցաւ և տեսաւ, որ նորանից ոչ հեռու մի խոյ, որ է ոչխար, կախուած է ծառից: Աբրահամը առաւ նորան և զոհեց Աստուծուն: Սորա վերայ Աստուծոյ հրեշտակը միւս անգամ էլ ասաց Աբրահամին. «Այսպէս է ասում Տէրը, ուրովհետեւ դու հնազանդեցար իմ հրամանին, օրհնելով կ'օրհնեմքեղեւ բազմայնելով կը բազմացնեմ քո սերունդը, ինչպէս երկնքի աստղերը և ծովի աւազը: Քո սերունդից յառաջ կը գայ աշխարհի Փրկիչը:» Սորանից յետոյ Աբրահամին ու Խաչակը դարձան ծառաների մօտ և այստեղ իրանց տունը: — Նոյն խոստմունքը Աստուած կրկնեց Խաչակին և նորա որդի Յակոբին, որ Խորայէլ կոչուեցաւ, որ և աւելի արժանաւոր եղաւ Աստուծոյ օրհնութեանը, քան թէ նորա մեծ եղայր Եսաւը: —


## 11. ՅԱԿՈԲ ՆԱԿԱՊԵՏԻ ՈՐԴԻՔԸ.

Աբրահամի թոռն Յակոբը տասներկու որդի ունէր Հայրը ամենից աւելի սիրում էր կրտսեր որդի Յովսէփին

և կարեց նրան գեղեցիկ ծաղկեայ շորեր, իսկ եղայրները ատում էին Յովսէփին և չէին ուղումնորա հետ քաղցրութեամբ խօսել: Յովսէփը երկու երազ տեսաւ և պատմեց իր եղայրներին: Նա ասաց նրանց, «Ասեցէք իմ տեսած երազը. ինձ թւում էր, թէ մէկ գաշտում որպէս էինք կապում: իմ որայս կանգնած էր ուղեղը. իսկ ձեր որաները պատեցին: իմ որայս և երկրպագութիւն տուին նորան: — Եղայրները ասացին: «Մի՞թէ մեր վերայ թագաւոր պիտի լինիս դու. կամ պիտի տիրեն մեզ: Մի քանի օրից յետոյ Յովսէփը իր հօրն և եղայրներին միւս երազը պատմեց: Նրազումը, ասաց նա, ինձ երկեցաւ իբրև թէ արեգակն, լուսին և տաճնումէկ աստղեր ինձ երկրպագում էին: Այս անգամին հայրն էլ յանդիմանեց նորան, ասելով. — «Այդ ինչ երազ է, մի՞թէ ես, մայրդ ու եղբայրներդ երկրպագութիւն պիտի անենք քեզ: — Եղայրները աւելի շարացան Յովսէփի վերայ այս երազների համար: —

Մէկ անգամ Յակոբի որդիքը արածում էին խաշները, իսկ Յովսէփը տանն էր մնացել: Հայրը ասաց նըրան. «Գնա տես, առանց են արդեօք եղայրներդ և մեր խաշները և համբաւ բնը ինձ: Յովսէփը գնաց և դաշտում մոլորուեցաւ: Այնտեղ մի մարդ գտաւ նորան և հարցրեց. «Ինչ ես մանգալիս» (որոնում): — Յովսէփը պատասխանեց. «Ես իմ եղայրներին եմ մանգալիս, ասա ինձ, ու՞ են արածեցնում նոքա:» Անձանօթ մարդն ասաց նըրան. «Առքա այստեղ չեն. ես լեցի որ նոքա ասացին, թէ չեռանանք այստեղից:» Եւ նա ցոյց տուեց նըրան, թէ կողմն էին գնացել նորա եղայրները: Երբ Յովսէփը գտաւ եղայրներին և մօտենում էր նըրանց, նոքա սկսեցին մէկ

մէկուն ասել. «ահա գալիս է երազատեսը. եկէք սպաննեք նրան և տեսնենք, թէ ինչպէս պիտի կատարուին նորա երազները»: — Առուբէն, մեծ եղբայրը, ասաց. «չէ, եղբայրներ, ինչո՞ւ սպաննենք նորան. ինչո՞ւ մեր ձեռքերը թաթախնենք նորա արիւնի մէջ. աւելի լաւ է ձգենք նորան այս անջուրի փոսի մէջ. թող երթայ ինքն իրեն մեռնի» Նորա միտքը այն էր, որ յետոյ հանէ Յովսէփին այնտեղից ու հօր ձեռքը հասցնէ: Երբ Յովսէփը մօտեցաւ եղբայրներին, սոքա հանեցին նորա ծաղկեայ շորերը և դրցեցին նրան փոսի մէջ: Յետոյ նստեցին հաց ուտելու: Յանկարծ տեսան, որ գալիս են վաճառականներ, որոնք



ուղտերով ապրանք էին տանում Յդիպոս: Յուգան առաջ իւր եղբայրներին. «Յովսէփին սպանելուցը մեղին օ-

գուտ. ինչ և իցէ նա մեր եղբայրն է. եկէք. ծախենք նորան այս վաճառականներին»: Այդ միջոցին Ռուբէնը այնտեղ չէր: Եղբայրները լսեցին Յուդայի խօսքին, Յովսէփին հանեցին փոսից և քսան դահճեկանով ծախեցին նոյն վաճառականներին: Երբ վաճառականները Յովսէփին տարան, եկաւ Ռուբէնը: Նա չգտաւ Յովսէփին փոսի մէջ և ասաց եղբայրներին. «Յովսէփը այնտեղ չէ, այժմ ու՞ր կորչիմ ես:» Եղբայրները մորթեցին մի ուլ նորա արիւնով թրցեցին Յովսէփի շորերն, ու այն հօրը ուղարկելով հրամայեցին ասել այս շորերը մենք գտանք դաշտի մէջ. տե՛ս արդեօք սա Յովսէփինը չէ:» Յակոբը խսկոյն ձանաչեց այն և տրտմութիւնից աղաղակեց. — «Ո՛չ, այս իմ զաւակիս շորն է. չար գազանի մէկը կերել և Յովսէփին, չար գազանը պատառել է Յովսէփիս:» — Նև նա խսկոյն պատառեց իր հագուստը, ու նորա տեղ հագաւ քուրձ, այսինքն ձիու մազից հիւած հաստ շոր, որ մեծ սուգի ու տըրտմութեան նշանն էր: Աղբեւրի պէս աչքերից արտասունք էր թափում ու ասում. «Թողէք որ ես ևս այս սուգով գերեզման մտնեմ, որդուս մօտ երթամ:» Վաճառականները Յովսէփին նգիպտոս տարան և այնտեղ ծախեցին Պետափրէս անունով հարուստ իշխանին, որ նգիպտոսի թագաւորի մեծամեծներից մէկն էր և միանգամայն դահճապետ ու բանտերի գլխաւոր վերակացու: Բայց Աստուած օգնում էր Յովսէփին և նա անուանի եղաւ բոլոր նգիպտոսում, իբրև երազների քաջ մեկնող: —

## 12. ՅՈՎԱՆԻ ԲԱՆՏՈՒՄ:

Սկզբում Յովսէփը կենում էր Պետափրէսի տանը իբրև ծառայ և ինչ որ հրամայում էին—ամենն էլ սիրով կատարում էր: Յետոյ Պետափրէսը տեսնելով, որ Յովսէփ հաւատարիմ, աչքարաց ու շնորհալի տղայ է, սիրեց նրան և բոլոր իւր տան կառավարութիւնը նորան յանձնեց. Աստուած էլ Յովսէփի պատճառով օրհնեց Եղիսաբեդու տունը: Բայց Յովսէփը դեռ չէր մոռացել եղայրներից հասցրած վիշտը, և ահա մի նոր դժբաղդութիւն հասաւ վրան:

Պետափրէսի չար կինը մի օր գանդատուեց իւր մարդուն իբրև թէ Յովսէփը անհաւատարիմ է գէպ՝ ի նա. և Պետափրէսը, առանց գործի իսկութիւնը իմանալու, Յովսէփին դրեց բանտը: Բայց Աստուած այստեղ էլ չժողեց Յովսէփին: Բանտապետը այնպէս սիրեց Յովսէփին, որ բանտի բոլոր կալանաւորներին նորա ձեռքը յանձնեց և այնտեղի բոլոր գործերը նորան էր կատարել տալիս— նոյն միջոցին, երբ որ Յովսէփը բանտումն էր, թագաւորի իշխաններից երկու հոգի բերին այնտեղ: Խոցանից մէկը թագաւորի տակառապետն էր, այսինքն գինիների վերակացու, և միւսը մատակարար, այսինքն սեղանի կամ կերակուրների վերակացու: Խոցա արածը երկեի մի ծանր բան էր, որ ամբողջ տարի մնացին բանտում: Մի օր Յովսէփը տեսաւ, որ սոքա երկուն էլ շփոթած, երեսները կախած նստած են, հարցրեց նոցա—«Ի՞նչ է պատճառը, որ այսօր այդպէս տրաում էք:»—«Զարմանալի երազներ տեսանք, ասացին նոքա, և մէկը չկայ, որ նոցա մէկնութիւնը տայ մեզ:»—Յովսէփը ասաց նոցա. «Մի՞թէ

չդիտէք, որ մեկնութիւնը Աստուածոյ ձեռին է. բայց պատմեցէք ինձ:»

Տակառապետը ասաց. «Ինձ երեւեցաւ որ դիմացս խաղողի մի որթ կայ: Որթի վըայ էլ երեք հատ կանանչ ձիւղ և ձիւղերի վերայ խաղող հասած: Իմ ձեռքումն էլ կալ Փարաւոն թագաւորի բաժակը, խաղողը ձմբում էի բաժակի մէջ և տալիս էի թագաւորի ձեռքը:» Յովսէփին ասաց նորան. «Երեք ձիւղերը—երեք օր է. երեք օրից յետոյ Փարաւոնը յետ կրդաբանէ քեզ քո պաշտօնը, որ առաջուայ պէս Փարաւոնի բաժակը իւր ձեռքը տասեւ երբ որ յաջողութեան մէջ լինես, դուն էլ ինձ միտդ բեր և այս բանտիցը ազատիր. Ես ոչինչ յանցանք չեմ արած:»—Երբոր Յովսէփը մէկնեց տակառապետի երաղը, մատակարարն էլ ասաց. «Ես տեսայ երազում, որ զլիխ վերայ դրած ունէի երեք խան. վերին խանումն էին թագաւորի սիրած ամէն տեսակ կերակուրներ և թուզունները ուտում էին նրանցից:»—Յովսէփը պատմսիանեց. «Երեք խանները—երեք օր են. երեք օրից յետոյ Փարաւոնը քո զլուխը կը վերցնէ վրայիցդ, մարմինդ կախ կը տայ փայտի վրայ և թաշունները քո միսը կ'ուտեն:»—Ինչպէս ասաց Յովսէփը, այնպէս էլ եղաւ: Երբորդ օրը Փարաւոնի ծննդեան տարեդարձն էր, ուստի և իւր ծառ տների համար մեծ հանդէս կատարեց սփառատում: Միտը եկան տոկառապետն ու մատակարարը.—Հրամայեց, որ տակառապետին իր առաջուայ պաշտօնը տրուի, իսկ մատակարարը փայտի վրայ կախուի: Բայց տակառապետը մոռացաւ Յովսէփին և նա այլ ևս երկու տարի մնաց բանտում: Եղանակ ուժու մեջ ու ուժուածանց մուռ և փառ լը պատ պատ մասն ու ուժուածանց մուռ և փառ լը պատ պատ մասն ու ուժուածանց մուռ և փառ լը պատ պատ

### 13. ՅՈՎԱԵՓԻ ՓԱՌԵՑ:

Պատահեց, որ Փարաւոնը երկու երազ տեսաւ: Նըրան երևեցաւ իբր թէ կանգնած է գետի եղերքին: Գետի միջից դուրս եկան եօթն գեղեցիկ և պարարտ կովեր և արածում էին ափում: Նոցանից յետոյ նոյն գետից դուրս եկան ուրիշ եօթն կովեր, բայց այնպէս նիհար, որ նոցա նման նա երբէք չէր տեսել, և կանգնեցան նոյն կովերի մօտ: Եւ այդ նիհար կովերը պարարտ կովերին կերան: Փարաւոն զարթեցաւ, բայց կրկին քնեց: Յետոյ դարձեալ մի ուրիշ երազ տեսաւ. իբր թէ մէկ փունջ ցորենի վրայ եօթն հատ լիք և գեղեցիկ հասկեր կային. նոցա մօտ դուրս եկան եօթն հատ էլ վտիտ և չոր հասկեր, և այս վտիտ հասկերը կերան այն եօթն լիք հասկեր: Փարաւոն զարթեցաւ: Առաւօտուն վաղ կանչել տուաւ իր բոլոր իմաստուններին: Նոցա պատմեց երազները, բայց ոչ ոք չկարողացաւ նոցա մեկնութիւնը տալ: Այն ժամանակ տակառապետը ասաց նորան. «Եգիպտոսում կայ մի ծառայ, Յովսէփ անունով նբրայեցի երիտասարդ—որ երազ մեկնել լաւ գիտէ»: Թագաւորը հրամայեց, որ իւր մօտ բերեն նորան: Երբ Յովսէփն եկաւ, թագաւորը ասաց. «Ես երազ տեսայ, բայց մարդ չկայ, որ մեկնէ ինձ. իսկ քեզ համար ասումեն, թէ ինչ երազ որ լսես կարող ես մեկնել: Յովսէփը պատասխան տուաւ. «առանց Աստուծոյ կարելի չէ յաջող ու ճշմարիտ մեկնութիւն տալ տէրութեանդ երազին»: Երբ որ Փարաւոն պատմեց իր երազները, Յովսէփը ասաց. «Ճէր արքայ, քո տեսած երկու երազդ էլ մի և նոյն նշանակութիւնն ունին. եօթն գէր կովեր և եօթն լիք հասկեր, եօթն առատութեան տարի

են, նոյնպէս և եօթն նիհար կովեր ու եօթն վտիտ հաս, կեր սովի տարիներ են»: Այդ երազներով Աստուծութ քեզ յայտնում է, թէ ի՞նչ պիտի անէ, այսինքն թէ առաջ եօթն տարի շարունակ առատութիւն կը լինի, յետոյ նոցա կը յաջորդեն եօթն սովի տարիներ: Ուրեմն մէկ իմաստուն և խոհեմ մարդ պիտի ընարես և բոլոր Եգիպտոսի վերայ կառավարիչ կարգես: Թող նա առատութեան տարիներին ցորեն հաւաքէ, և սովի տարիներին Եգիպտոսոց վերայ ծագաէ, որպէս զի ժողովուրդը սովամահ չլինի»: Յովսէփի տուած մեկնութեան և խորհրդին շատ հաւանեցաւ Փարաւոնը և նա ասաց Յովսէփին. «Քեզանից իմաստուն, քեզանից խոհեմ մարդ ես չունիմ: Ես քեզ կը դնեմ դլւխ բոլոր Եգիպտոսի վերայ, ամէն մարդ հնագանդ կը լինի քո հրամանին. և ես միայն թագաւորական աթոռովս բարձր կը լինեմ քեզանից»—Փարաւոնը իր ձեռքից հանեց մատանին և հազցրեց Յովսէփի մատին, նմանապէս բեհեղեայ շոր հազցրեց, վկեն ոսկի մանեակ կախեց. նստեցրեց նորան արքունի կառքի մէջ և նորա առջելից մունետիկը կանչում էր. «Երկրպագեցէք, սա է երկրի հայրը» Այն ժամանակ Յովսէփը երեսուն տարեկան էր: —

### 14. ՅՈՎԱԵՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ ԵԳԻՊ- ՏՈՒ:

Թագաւորի երազները կատարուեցան: Հասան առատութեան եօթն տարիներ: Յովսէփ անչափ ցորեն ժողովեց և գիղեց ամէն քաղաքներում: Սովի տարիներն էլ հասան: Յովսէփը սկսեց ցորեն ծախել: Քաղցածութիւնը տիրեց նաև Քանանացւոց երկրին, ուր կենում էր Յովսէ-

վեհայրը: Յակոբն ասաց իր որդւոց: «Ես լսեցի, որ Եղիսակառում ցորեն է ծախսում. դնացէք այնտեղ և զնեցէք, որ քաղցածութիւնից չմեռնինք:» Յովսէփի տան եղայրներ հաւաքուեցան ու զնացին նգիստոս, միայն Բենիամինը մնաց հօր մօտ տանը, Նրբոր եղայրները հասան նգիստոս, նոցաբերին Յովսէփի առաջ: Նորա խոնարհ երկրպագեցին նորան, բայց չճանաչեցին, իսկ Յովսէփը ճանաչեց նոցա և խկոյն միաը բերեց իր տեսած երազները: Յովսէփը հարցրեց նոցա. «Ո՞ր տեղեց էք գալիս:» Նորա պատասխան տուին. «Քանանացւոց երկրից:» «Դուք լսուս էք, ասաց նա. դուք եկել էք իմանալու, թէ ինչ է լինում նգիստոսի երկրում:» — «Ո՞չ, տէք», պատասխանեցին եղայրները. «մենք ցորեն գնելու ենք եկել, ամենքս էլ մեկ մարդու որդիք՝ խաղաղ ու հանդարտ մարդիկ ենք. — մենք տաններկու եղայր էինք. մեզանից մէկը կորաւ, իսկ փոքրը մնաց տանը հօր մօտ:» — «Եթէ դուք ճշմարիտն եք խօսում:» ասաց նա, «Ճեղանից մէկը ուղարկեցէք տուն, թող նա բերէ ձեր փոքրը եղբօրը, իսկ միւսներդ իբրև գերի կը մնաք ինձ մօտ:» — նա հրամայեց նորանց բանտը տանել: Բայց երբորդ օրը Յովսէփն ասաց նոցա. «Ես աստուածավախ մարդ եմ և չեմ ուզում որ ձեզ անիրաւութիւն լինի. ուրեմն թէ որ դուք անկասառ անմեղ մարդիկ էք, այսպէս արէք. թող ձեղանից միայն մէկը մնայ բանտի մէջ, իսկ դուք ձեր առած ցորենը տարէք տուն և ապա ձեր կրտսեր եղբօրը բերէք ինձ մօտ, որ իմանամ թէ ճշմարիտ է ձեր խօսքը, իսկ առանց նորա ինձ չերեւք:» — նա հրամայեց նոցա առջենաւունին կամ բան պատահէի, որ նոցա պարկերը դորենութիւննեն ու բերած փողերը ամէն մէկինը իր պար-

կի մէջ դնեն թաքուն: Եւ եղբայրները սկսեցին մէկմէկուն ասել. «Աստուած մեղ պատժում է մեր եղբօր դէմ արած մեղքի համար, մենք տեսնում էինք նորա նեղութիւնը և ուշ չդարձրինք նորա աղաշանքին:» Ուուբէնն էլ վրայ բերաւ, թէ ամոերնիդ չէ, որ ասում էի թէ այդ մանուկի դէմ մեղք մի՛ գործէք. և դուք ինձ չլսեցիք. և ահա այժմ մենք ենք տանջվում: Նորա այսպէս խօսում: Էին և չգիտէին, որ Յովսէփը նոցա ամէն տասածը հասկանում է, որովհետեւ նոցա հետ թարգմանուլ էր խօսում: Յովսէփը հեռացաւ նոցանից և լաց էր լինում: Նղբայրները տրամութեամբ լցուած ուղեւորեցան դէպի տուն: Ճանամարդին երբ որ իջևանեցան, նոցանից մէկը բաց արեց իր պարկը և իր փողելիը տեսաւ նորա մէջ: Նա այդ պատմեց եղայրներին և նորա ևս իրանց պարկերում միւնոյնը գտան: Նորա զարմացած մէկմէկուն ասում էին. «այս ինչ փորձանք է բերում Աստուած մէր գլխին:» — Երբ նորա հասան տուն և ինչ որ նգիստոսում պատահել էր նոցա հետ՝ պատմեցին, Յակոբը շատ տրամեցաւ և ասաց. «Դուք ինձ անզաւակ թողեցիք. Յովսէփը չկայ. Շմաւոնը չկայ, հիմայ Բենիամինն էլ ուզում էք տանել այս ամէն փորձանեները ինձ համար էին պահուած: Զէ, Բենիամինին չեմ արձակիլ. թէ որ ճանապարհին հիւանդանայ կամ բան պատահէի, լալով ողբալով գերեզման պիտի իջնեմ:» —

### 15. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՆ ԵԳԻՊՏՈՍ:

Երբոր նղիստոսից բերած ցորենը հատաւ, Յակոբ

ասաց իր որդոց. «Գնացեք էլի Եղիպտոս և, եթէ կարելի է, գնեցէք ցորեն»:» Նոքա ասացին. «Եղիպտոսի իշխանը հրամայեց մեզ, որ առանց Բենիամինի չերևանք նորա աչքին. ուստի թէ որ Բենիամինը կըտաս կ'երթանք, ապա թէ ո՛չ պէտք է առանց հացի մնանք ու ամէնքս քաղածութիւնից մեռնենք:» Յակոբը ասաց. «Ինչ հարկ կար Եղիպտոսի իշխանին ասելու, որ մէկ ուրիշ եղայր էլ ունիք:» Նոքա պատասխանեցին. «Ինչ անէինք, բան չժողեց որ չհարցնէ. ում որդիկը էք, ձեր հայրը ողջ է, ուրիշ եղայր էլ ունիք. ումի մաքիցը կ'անցնէր, որ նա պէտք է ասէր մեզ, թէ գնացէք ձեր եղայրն էլ այստեղ բերէք:» — Յուղան ասաց. «Արձակի՞ր Բենիամինին ինձ հետ Ես երաշխաւոր եմ նորա համար: Եթէ ես նրան յետ չըերեմ, թող նորա յանցանքը իմ վերայ լինի բոլոր իմ կեանքում:» Այն ժամանակ Յակոբը ասաց. «Եթէ այդպէս է, եկէք այսպէս արէք. հետերնիդ ընծաներ տարէք Եղիպտոսի իշխանին մեր երկրի բերքերիցը՝ Ռետին (որ է անուշահամ ու անուշահոտ իւղ), մեզը, խունկ և ընկուղ. և պարկերումդ գտած փողերն էլ յետ դարձրէք նորան: Եղայրները հաւաքուեցան ու ճանապարհ ընկան: Երբ նոքա եկան Յովսէփի մօտ, նա իւր ծառաներին հրամայեց, որ նրանց տուն տանի: Եղայրները վախեցած մէկմէկուն ասում էին. մեզ անպատճառ կըմեղադրեն մեր պարկերումը գտած փողերի համար և գերիի պէս կըպահեն իրանց մօտ: Նոքա ասացին հազարապետին. «Մենք արդէն գալիս էինք Եղիպտոս հաց գնելու և ահա ինչ պատահեց մեզ — մենք մեր պարկերում գտանք այն փողերը, որ մենք վճարել էինք ցորենի համար:» — Բայց նա ասաց նոցա. «մի վախենաք, հանդիսա կացէք.

Ասոուած ինքը յետ է դարձրել ձեզ ձեր փողերը, ես ամէնը ստացել եմ ինչպէս հարկն էր:» Եռտովլ Նմաւոնին էլ բերին նոցա մօտ: Եղայրները իմացան, որ իշխանի տանը պիտի ձաշ ուտեն ու պատրաստեցին իրանց ընծաները: Կէսօրին երրոր Յովսէփը տուն եկաւ, իրենց հետ բերած ընծաները մատուցին նրան ու ընկան երկպագութիւն արին: Հարցրեց Յովսէփը. «Ինչպէս էք ինչպէս է, առողջ է ձեր ծերունի հայրը:» — Ողջ ու առողջ էք ծառայդ՝ մեր հայրը, — պատասխան տուին նոքա: Յովսէփ տեսաւ Բենիամինին ու հարցրեց. «այս է ձեր փոքր եղայրը, որ ինձ մօտ պիտի բերէիք. Ասոուծոյ ողորմութիւնը վըադ լինի, որդեակը: Այստեղ Յովսէփը շուտ հեռացաւ, որովհետեւ աչքերը արդէն լցուած էին արտասունքով, նա մոտաւ միւս սենեակը և այնտեղ լաց եղաւ: Յետոյ երեսը լուաց, սիրու ամուր բռնեց, գուրս եկաւ և ասաց. «Կերակուր բերէք:» Կերակուրները բերին ու իրեն առանձին տուին, եղայրներին առանձին, նորանց յետ ձաշող Եղիպտոսիներին էլ առանձին: Յովսէփ ինքը յատկացրեց Եղայրների համար տեղերը. Նոքա նստացրած էին աւագութեան կարգով: Այդ զարմացրեց Եղայրներին: Յովսէփ իր սեղանից էր ուղարկում նոցա կերակուր և Բենիամինին հինգ անգամ աւելի էր տալիս, քան թէ ուրիշներին. այսպէս Եղայրները կերան ու խմեցին նորա մօտ: Ճանապարհ ձգելիս, Յովսէփ հրամայեց որ նոցա պարկերը ցորենով լքցնեն ու գնեն նոցա մէջ ցորենի համար բերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ, բաց ՚ի փողերից, հրամայեց գնել իր արծաթի սկիցն էլ —

**16. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՃԱՆԱՇԵՑԻՆ  
ՅՈՎԱԵՓԻՆ**

Երբոր եղբայրները փոքր ինչ հեռացան քաղաքից, Յովսէփ ուղարկեց նոցա ետևից իւր հաղարապետին: Հաղարապետն համնելուն պէս մկան սաստկութեամբ խօսել նոցա հետ. «ինչո՞ւ բարութեան փոխարէնը ըսրութեամբ էք հատուցանում: Ինչո՞ւ գողացաք իմ տիրոջ արծաթէ սկիհը»: Եղբայրները սարսափեցան ու ասացին. «Այդ ինչ խօսքեր են, որ լսում ենք, տէր. քաւ լիցի, որ մենք այդպիսի բան անենք: Մեր միջեց ումի մօտ որ գտնուի սկիհը, թող նա մահապարտ լինի, իսկ մենք ամէնքս էլ գերի լինինք մեր տիրոջը»: — «Ոչ, ասաց հաղարապետը, ումի մօտ որ գտնուի սկիհը, թող նա լինի ինձի գերի, միւսները յանցանք չունին»: Նոքա բաց արին իրանց պարկերը: Հաղարապետը մեծից մինչև փոքրի պարկերը նայելոց յետոյ, սկիհը գտաւ Բենիամինի պարկի մէջ: Սարսափը տիրեց եղբայրներին: Ահովողով նոքա էլ յետ դարձան քաղաքը: Յովսէփի գեռ և սա տանն էր: Ամէնքը գնացին Յովսէփի մօտ ու երեսի վրայ ընկնելով երկրպագութիւն արին: Յովսէփը ասաց նոցա. «ինչ է այդ ձեր արածը»: Յուղան պատասխան տուաւ. «ինչ պիտի ասենք մեր տիրոջը, ինչ պատասխան տանք, ինչով կարող ենք արգարանալ Աստուած մեր մեղքերի համար պատում է մեզ: Ահա ամէնքս էլ քո գերիներ ենք, թէ մենք և թէ նա, որի մօտ գտնուեցաւ սկիհը»: Բայց Յովսէփը ասաց. «քաւ լիցի, որ ես այդպիսի բան անեմ: Ում մօտ որ գտնուեցաւ սկիհս, նա միայն լինի իմ գերիս, իսկ դուք բարով գնացէք ձեր հօր մօտ»: — Այն ժամանակ

Յուղան մկանց աղաքել որ նա այդ չանէ: «Թէ որ հիմայ երթանք մեր հօր մօտ, ասում էր նա, — և մեզ հետ ըրլինի փոքր եղբայրը, տրտութիւնից իսկոյն կը մեռնի ծերունին: Նս երաշխաւոր եղայ հօրս Բենիամինի համար, ու ասացի նորան, որ եթէ յետ ըբերեմ երեխային, յանցաւոր լինեմ բոլը իմ կեանքում: Նւ ի՞նչպէս երեամ հօրս: Ոչ ես չեմ կարող հօրս չարչարանիքը ու մահը տեսնել»: Զկարողացաւ Յովսէփը այլ ևս դիմանալ: Նա բարձրաձայն լաց եղաւ և ասաց. «Ես Յովսէփին եմ: յիշաւի մինչև հիմա կենդանի՞ է հայրս»: Եղբայրները այնպէս շփոթեցան, որ չկարողացան մի խօսք էլ ասել: «Մօտ եկէք», ասաց Յովսէփը: Նոքա մօտ եկան: Նա կրկնեց. «Ես ձեր այն Յովսէփի եղբայրնեմ, որին դուք ծախեցիք. բայց մի՛ արտմիք ինձ ծախելուդ համար, որովհետև Աստուած ինձ ուղարկեց այստեղ՝ որ ձեր փրկութեան պատճառ լինիմ: Շուտ արէք գնացէք իմ հօրս մօտ և պատմեցէք նրան իմ փառքի մասին ու ասացէք՝ ահա թէ ինչ է ասում քո որդի Յովսէփը. — Աստուած ինձ բոլոր նդիպտոսի տէր կարգեց. Եկ ինձ մօտ, մի՛ ուշանար: Դու կը բնակուիս ինձ մօտ: Նս կը կերակրեմ քեզ, որովհետև էլ չինդ տարի կայ սովինու» — Յետոյ իւր եղբօր Բենիամինի վզին փաթաթուեցաւ ու լաց եղաւ. Բենիամինն էլ գըրկում էր նորան և լաց էր լինում: Յովսէփի միւս եղբայրներին էլ համբուրում էր և նրանց գրկելս լաց էր լինում: Նոքա էլ սիրո արին և սկսեցին խօսիլ Յովսէփի հետ: Նա շրբեր պարգևեց նոցա, իսկ հօրը ընծաներ ու կառքեր ուղաքաց որ գայ: Յովսէփ եղբայրներին ձանապարհ գցելիս ասաց. «Ճանապարհին չվեճէք»: —

## 17. ՅԱԿՈԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽԻԼԸ:

Եղայրները եկան տուն և ասացին իրանց հօրը.  
 «Յովսէփը կենդանի է. Եգիպտոսի թագաւորը իւր ամ-  
 բողջ երկրի վերայ իշխան կարգեց նորան»: Յակոբ սրտի  
 ուրախութիւնից չեր ուզում հաւատալ. բայց երբոր Յով-  
 սէփի ուղարկած կառքերը և ընծաները տեսաւ, նորէն  
 երիտասարդանալու պէս կենդանացաւ ծերունին: «Եթէ  
 յիրաւի Յովսէփ որդիս դեռ կենդանի է, ասաց նա, սո-  
 րանից մեծ ուրախութիւն չի կարող լինել ինձ համար.  
 ուրեմն քանի որ չեմ մեռած՝ գնամ տեսնեմ նորան»: Յ-  
 գիպտոս գնալուց առաջ Յակոբ Աստուծուն զոհ մատոյց:  
 Աստուած տեսիլքով յայտնուեցու Յակոբին ու ասաց. «Մի  
 վախենար, գնա Եղիպտոս: Ես ինքս կըզամ քեզ հետ Ե-  
 գիպտոս, և ինքս դարձեալ կըհանեմ քո ազգատոհմը այն  
 տեղից: Յովսէփ իւր ձեռքով կըփակէ քո աչքերը»—Յա-  
 կոբ իւր հետ Եղիպտոս տարաւ իր բոլոր որդոց, թոռանց,  
 բոլոր խաշները և իւր բոլոր ստացուածքը: Յովսէփ իսկոյն  
 կառքը պատրաստել տուաւ և իւր հօր առաջը դուրս ե-  
 կաւ: Մօտը հասնելուն պէս վզին փաթաթուեցաւ ու  
 բարձր ձայնով լաց եղաւ: Հայրն էլ ասաց արտասուօք.  
 «Այսուհետեւ սիրով կըմեռնիմ, որովհետեւ տեսայ որ դու  
 կենդանի ես»: Ինքը Փարաւոնն էլ կամեցաւ տեսնել Յով-  
 սէփի հօրը և Եղայրներին: Երբ նոքա ներկայացան թա-  
 գաւորին, նա հարցրեց նոցա. «Ձեր գործն ինչ է»: Նոքա  
 պատասխան տուին. «Մենք ոչխարների հովիւ ենք. եկել  
 ենք այս երկրի մէջ բնակուելու, որովհետեւ Քանանացւոց  
 երկրումը սաստիկ սովէ:»—Նա ասաց Յովսէփին. «Եղիպ-  
 տացւոց աշխարհը բաց է քո առաջ, երկրի ամենալաւ տե-

զումը բնակեցրու հօրդ ու Եղայրներիդ: ՅՅետոյ թագա-  
 ւորը հարցրեց Յակոբին. «Քանի տարի են քո կենաց օ-  
 րերը»: Յակոբը պատասխանեց. «Հարիւր երեսուն տարե-  
 կան եմ. սակաւ և դժուարին են կեանքիս օրերը»:

Յակոբ նահապեալ տան և եօթն տարի կացաւ Եղիպտո-  
 սի մէջ: Երբոր տեսաւ որ մահուան ժամանակը մօտեցել է,  
 կանչեց Յովսէփին և ասաց նրան. «Երբոր ես մեռնեմ, չթա-  
 զես ինձ Յդիպտոսում ես կամենում եմ իմ հայրերի հետ  
 նաջել դուրս տաք ինձ Յդիպտոսից և նոցա դերեզմա-  
 նումը թաղմբ:» Յովսէփը պատասխանեց. «Խօսքդ կըկա-  
 տարեմ:» Յակոբը ասաց. «Երդուիր ուրեմն:» Յովսէփը եր-  
 դուեցաւ: Մեռնելուց առաջ Յակոբ օրհնեց իր բոլոր  
 որդոցը, Յուդայի համար մարդարեցաւ, թէ նորա սե-  
 րունդներից չեն պակասիլ թագաւորներ, մինչեւ որ չդայ  
 Փրկիչը: Յետոյ պարկեցաւ իր մահճի վերայ և վախճա-  
 նեցաւ: Յովսէփ ընկաւ իր հօր երեսի վերայ, համբուրեց  
 ու լաց եղաւ: Յակոբի բոլոր որդիքը հաւաքուեցան և  
 ինչպէս հայրը պատուիրել էր այնպէս էլ արեցին. տա-  
 րան Քանանացւոց երկիրը և այնտեղ թաղեցին: Հօրը  
 մեռնելուց յետոյ Եղայրները ասացին. «Ի՞նչ պիտի անենք  
 եթէ Յովսէփը ոխ պահելով իւր սրտի մէջ կամենայ մե-  
 զանից վըէժ առնել այն չարութիւնների փոխարէն, որ  
 մենք գործեցինք նորա դէմն Ռւստի սիրտ արին մարդ ու-  
 ղարկեցին Յովսէփի մօտ ասելու, թէ. «մեր հայրը մեռ-  
 նելիս պատուիրեց, որ թողութիւն ինդրենք քեզանից.  
 ուրեմն ներիր մեզի մեր յանցանքը»: Լաց եղաւ Յովսէփը  
 այն սրտաշարժ մեղայի վերայ: Նա կանչեց իւր Եղայր-  
 ներին և ասաց. «Ես իմ վրէժս չեմ առնիլ ձեզանից. Ես  
 վախենում Աստուծուց: Դուք ուղեցիք ինձ չարիք ա-

նել, բայց Աստուած ինձի բարիք կամեցաւ, որ ժողովորդի այսքան բազմութիւնը ազատուի մահից: Ուրեմն մի վախճանաբ. ևս կը կերակրեմ ձեզ և ձեր որդոց:»


### 18. ՀՐԵԱՅՔ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ:

Յակոբի մեռնելուց յետոյ քիչ ժամանակի մեջ նորացելը բազմացաւ և մի ազգ յառաջացաւ, որ նրայիցի, Հրեայ և Իսրայէլացի էր կոչվում: Այն ազգը տասներկու ցեղ բաժանուեցաւ Յակոբի տասներկու որդուոց թուով: Խրայէլացիք նդիպտոսի մէջ բնակուելով, սակաւառ սակաւ իւրեանց հայրենի սովորութիւնները թողին, և մէկ քանիսը իւրեանց հաւատն անգամ մոռայան: Աստուած նրանց պատճելու համար՝ իւր ողորմութիւնից զրկեց: Եղիպտացւոց Փարաւոն կոչուած թագաւորներն սկսան ծանր աշխատութիւններով նրանց նեղացնելիսկ Փարաւոններից մէկը սոսկալի հրաման հանեց, որ Հրեից նորածին բոլոր արու տղայք սպանուին: Այն ժամանակ Հրեայք յիշեցին իւրեանց Աստուծուն և սկսան նորա ողորմութիւնը և ազատութիւն խնդրել: Ողորմածն Աստուած խղճալով նոցա վերայ՝ նոցա ազատար ուղարկեց Մովսէսին:

### 19. ՄՈՎՍԵՍ ՄԱՐԴԱՐԵՆ:

Երբոր Մովսէսը ծնուեցաւ, մայրը մկրտում նորան իւր տան մէջ պահեց որ Եղիպտացիք չափանեն, յետոյ դրաւ ձիւթով ծեփած կողովում և ձգեց գետում բուսած եղենների մէջ այն տեղի մօտ, ուր լողանում էր Փարա-

ւոնի աղջիկը: Թագաւորի աղջիկը տեսաւ այն փոքր կողովը, միջից հանեց տղային, իրեն որդեգիր արաւ և անունը դրաւ Մովսէս, որ նշանակում է ջրի հասած: Մովսէսը մեծացաւ և թագաւորի պալատի մէջ կրթուեցաւ.



բայց աւելի լաւ էր համարում չարչարուիլ: Իւր ազգակից Աստուծոյ ժողովրդի հետ, քան թէ միայնակ երկրաւոր զուարձութիւններ վայելել: Մի անգամ Մովսէսը տեսաւ, որ մի Եղիպտացի սաստիկ ծեծում է մի Հրեայի: Նա Հրեային տէր կացաւ և նորա հակառակորդին սպանեց: Փարաւոնը այս լսելով հրամայեց որ Մովսէսին սպանեն: Մովսէսը մերձակայ Որաբացւոց երկիրը փախչելով, մահից ազատուեցաւ:

Արաբիայի մէջ Յոթոր քրոնի տանը մնաց, նորա դլստեր հետ ամուսնացաւ և քառասուն տարի կացաւ նորա մօտ նատ էր ցաւում դժբաղդ Խրայէլացւոց վերայ այնպէս էր կարծում թէ այն ազգը նեղութիւնից այնպէս պիտի փճանայ, ինչպէս որ կրակով ոչնչանում է ծառը Մէկ անդամ դաշտի մէջ տեսաւ մի փշոտ թուփ, մորենի, որ վառվում էր, բայց չէր այրվում (անկէղ մորենի): Մօտեցաւ այն թփին և նորա միջեց ձայն լսեց, որ ասում էր «Աս եմք հայրերի Աստուածը, ես տեսնում եմ իմ ժողովրդեանս չարչարանքը և կամենում եմ աղատել նրան: Ուրեմն գնա Փարաւոնի մօտ և իմ ժողովուրդս Նդիպտոսից հանրիւ: Մովսէս հրաժարուեցաւ այս պաշտօնը կատարելուց, պատճառ բերելով թէ իրեն չեն հաւատալ: Այն ժամանակ Սսուուած նորան տուաւ հրաշագործութիւններ անելու զօրութիւն: Մովսէս իւր Ահարոն եղբօր հետ Փարաւոնի դիմացն ելաւ և տասն հրաշալի պատիճներով ստիպեց թագաւորին որ Հրէից արձակէ: Տասներորդ պատից առաջ Մովսէս հրամայեց Հրէից, որ ամէն մէկը իւրեանց հօտի միջեց մի մի գառն ընարեն, երեք օրից յետոյ մորթեն, նորա արիւնով նշան դնեն իւրեանց դռների վերայ և այն ուտեն եղեղ ասուած դառն խոտով և բաղարջ հացով: Եւ ասաց նոցա թէ՝ «Այս գիշեր Աստուած պէտք է կոտորէ Նդիպտացւոց անդրանիկներին, իսկ առանց վնասելու կ'անցնի այն դռների մօտով, որոնց վերայ արիւն է քսուած»: Հրէայք Մովսէսի հրամանը կատարեցին: Գիշերը բոլոր Նդիպտացւոց տների մէջ լաց ու ողբ տարածուեցաւ: Ամենայն տան մէջ մեռել կար, Հրէից տներից զատ նոյն իսկ Նդիպտացիք խնդրում էին Հրէաներից, որ շուտով հեռանան իրենց երկրից:

Այն օրից սկսած՝ Հրէայք ամենայն տարի մորթում են և ուտում դառն՝ եղեգով ու բաղարջ հացով, իբրև նշան որ դառն արիւնով աղատուեցան Նդիպտոսից ցաւալի վիճակից: Այն օրը Պատէտ կամ Զատիկի կոչեցաւ, որ նշանակում է ժայռ կամ աղբառ-լին:

## 20. ՀՐԵԱՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐԻ ԳԱԼԵ

Երբ որ Նդիպտացիք իւրեանց ննջեցեալներին թաղեցին, սկսան զղջալ որ Խրայէլացւոց թող տուին: Փարաւոնը իւր զօրքերով նոցա յետեկից ընկաւ և կարմիր ծովի եղերբին նոցա հասաւ: Խրայէլացիք վախեցան. բայց Մովսէսը քաջալերելով նրանց, դիշեր ժամանակ Աստուածոյ հրամանով գաւաղանը ջրին խփեց: Այն ժամանակ մի սաստիկ հողմ վերկացաւ, ծովի ջրերը երկու բաժանեց և յատակը ըորացրեց: Խրայէլացիք ցամաք յատակի վըտից անցան: Խսկ ծուրը պարսպի նման աջ ու ձախ կողմը կանգնած էր: Նդիպտացիք նոցա ետեկից ընկան և զրեթէ ծովի մէջտեղն էին, երբ Խրայէլացիք արդէն անցան միւս եղերբը: Այն ժամանակ Մովսէս իւր գաւաղանը մեկնեց ծովի վերայ և ջուրն իսկոյն միացաւ: Փարաւոնը և նորա բոլոր զօրքերը խեղդուեցան:

Խրայէլացիք յառաջ տարանց իւրեանց ճանապարհը Սլարիայի անապատի մէջ: Նոքա այն ճանապարհորդութեան մէջ շատ նեղութիւններ կրեցին: Բայց ողորմածն Աստուած ամէն բանի մէջ օգնում էր նոցա. անապատի մէջ նոցա ճանապարհ էր ցոյց տալիս. նորա հրամանով օդի մէջ մէկ սիւն երեւեցաւ, որ ցերեկը ամալի պէս էր և

Խորայէլացոց արեից էր պաշտպանում, իսկ գիշերը կրակի նման էր լինում և ճանապարհը լուսաւորում էր: Երբ նոքա նդիպոսից առած բոլոր հացը հատացրին, Աստուած մանանայ տուաւ նոցա, այսինքն մննդարարքաղցը հատիկներ, որ ամէն առաւօս անապատի մէջ իջնում էր մէծ քանակութեամբ: Երբ նոցա ջուրը պակսեցաւ, Մովլսէս իւր գաւազանը ժայռին խփեց և քարի միջից ջուր բղխեցրեց: Ամաղեկացիք ճանապարհին նոցա վերայ յարձակուեցան, բայց Խորայէլացիք Աստուծոյ օգնութեամբ յաղթեցին նրանց:



## 21. ՍԻՆԱՅ ԼԵՐԱՆ ՎԵՐԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԵ:

Խորայէլացիք՝ նդիպոսից դուրս գալուց յիսուն օր յետոյ, Սինայ լերան մօտեցան: Երբ այնտեղ կանգնած էին, թանձր մառախուղ Սինայի գագաթը պատեց, կայծակներ էին արձակվում և որոտմունք էր լինում: Խորայէլացիք լուցին Աստուծոյ ձայնը, որ ժողովրդին յայտնում էր իւր սուրբ կամքը, ասելով՝

1, Ես եմ Տէր Աստուած քո, և մի՛ լիցին քեզ այլ աստուածք բաց յինէն:

Ես եմ քո Տէր Աստուածը և ինձանից զատ ուրիշ աստուածներ չունենաս:

2, Ո՞ի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկիսս ՚ի վեր, և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ:

Քեզ համար կուռք մի՛ շինիր; ոչ վերևի բաների նմանութեամբ, ոչ ներքեւ՝ գետնի վերայ եղածների, և ոչ գետնի տակ՝ ջրերի մէջ եղածների նմանութեամբ. մի՛ երկրպագիր նոցա և մի՛ պաշտիր. կամ թէ աշխարհի մէջ եղած ոչ մի բան իբրև Աստուած մի՛ պաշտիր, կուապաշտութիւն մի՛ անիր, հոգուդ հակառակ բան մի՛ անիր ոչ վողի համար, ոչ ուրիշն հաճոյանալու համար. մի՛ արբենար և որկրամոլ մի՛ լինիր:

3, Ո՞ի առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ մնոտեաց:

Զուր տեղը Աստուծոյ անունը մի՛ յիշեր: Աստուծոյ անունը յիշէ միայն աղօթքի և խօսակցութեանց մէջ մէծ յարգանքով: Պէտք չեղած տեղը երդում մի՛ անիր: Սուտ մի՛ խօսիր, մանաւանդ սուտ երդում մի՛ անիր:

4, Յիշեա սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսջիր և արասջիր զամենայն գործըս քո, իսկ զեօթներորդ օրն շաբաթ նուիրեան քում:

Ատքումդէ պահէ, որ շաբաթ և տօն օրերը պէտք է սուրբ գործեր անել և ոչ թէ անգործութեամբ անցկացնել, վեց օրուայ մէջ քո բոլոր գործքերդ արա, իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստուծուն նուիրէ՝ այն օրը աշխատիր Աստուծոյ և աղքատների համար:

5, Պատուեա զշայր քո և զմայր քո, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի:

**Պատուիր քո ծնողներիդ և նոցա, որոնք ծնողաց  
տեղ են բռնում, այսինքն թագաւորին, մեծերիդ, ուսու-  
ցիչներիդ և բարերարներիդ։ Այն ժամանակ քեզ համար  
լաւ կը լինի և երկար կ'ապրիս աշխարհիս մէջ։ Նրանց  
յարգիր, նոցա կարօտութեան ժամանակ գտնիր։**

## 6. Մի սպանաներ:

**Մի** սպանիր. ոչ գործով, ոչ խօսքով ոչ ոքին չարհամարհես. ոչ քո և ոչ այլոց առողջութեանը վնաս միտար. կարօտեալ մարդկանց օգնիր:

7, *Ψήγματα*

Ենութիւն մի' անիր, քո և այլոց հոգու մաքրութիւնը մի' ապականիր անվայել գործերով, խօսքերով և հայեցուածքով:

## 8. Ո՞ւ զողանար:


Քո և այլոց ստացուածքին վնաս մի տար, գողութիւն մի անիր, գոտած բանդ մի պահիր, ուրիշնեցածը մի յափշտակիր, մշակի վարձը մի կտրիր, կաշառք մի առնիր:

9, Այս առևտ վկայեր զբնկերէ քումմէ:

Ուրիշե բարի անուանը մի՛ կվասիր, զըպարտութիւն  
մի՛ անիր, լրտեսութիւն մի անիր, ուրիշների գործերը և  
խօսքերը 'ի վատն մի՛ մեկնիր, բամբասանք մի՛ անիր, ան-  
ձիդ վերայ չար բաներ մի՛ մտածիր, բամբասանքի և զը-  
պարտութիւնների մի՛ լսիր:

10, Վի՛ ցանկանար տան ըների քո և  
մի՛ ամենայնի, որ ինչ ընկերի քո իցէ:

Նախանձու աչքով մի՛ նայիր ուրիշե բաղդասորութեան վերայ և գոհ եղեր քո ունեցածով:



Տարբերակը պատրիեց Մովսէս լերան վերայ բարձրացաւ և այնտեղ Աստուծոց առաւ երկու քարեղին տախտակներ, որոնց վերայ գրուած էին Աստուծոյ տասն պատուիրանները, նոյնպէս և ուրիշ պատուէրներ առաւ թէ ի՞նչպէս պէտք է կատարել Աստուածական թեան ծէսերը և սրբութեամբ ապրիլ Ժողովուրդը այն օրէնք.

Ները լսելով երդուեցաւ որ սրբութեամբ կը կատարէ ամէնք:  
Այն ժամանակ Աստուած յայտնեց թէ Իսրայէլացւոց մէջ  
մի մեծ Մարգարէ պիտի գայ, որ կը բացատրէ նոցա Աս-  
տուծոյ կամքը:

Որէնքի տախտակները դրուեցան տապանակի մէջ,  
որ աղնիւ փայտից շինուած մէկ արկղ էր, և ոսկով ծե-  
փած: Այն տապանակը Մովսէս դրաւ առանձին վրանի  
մէջ, որ խորան կոչուեցաւ: Խորանի առջև շինուած էր  
սեղան կամ զոհարան: Հրէայք այնտեղ գնում էին Աստու-  
ծուն աղօթելու և զոհ մատուցանելու համար: Մովսէս  
Աստուծոյ հրամանով իւր Ահարոն եղբօրը քահանայապետ  
կարգեց, իսկ նորա որդոցը քահանայ դրաւ:

Մովսէս բոլոր օրէնքները մէկ դրէի մէջ դրեց: Այս  
կերպով ձևացաւ Սուլր Գիրքը: Հրէայք Աստուծուց ի-  
րենց տուած օրէնքների յիշատակն անմոռանալի պահելու  
համար, ամենայն տարի սկսան տօնել Յինանց վերջի օրը,  
որ է Պենտեկոստէն: Այն տօնը Յիներորդաց տօն էր  
կոչվում այն պատճառով, որ կատարվում էր Զատկից յի-  
սուն օր յետոյ: Այն օրը Հրէայք սովորութիւն ունէին  
իւրեանց տները զարդարել ծաղկեներով և ծառերով:




## 22. ԻՍՐԱՅԵԼԱՅԻՈՑ ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ ԱՐԱՄ ՃԱ- ՆԱՊԱՐՃՈՐԴՈՒԹԻՒՆԸ. ՄԻՆՉԵՒ ՔԱՆԱՆԱՅԻՈՑ ԵՐԿԻՐԸ:

Իսրայէլացիք՝ Աստուծուց օրէնքներն առնելուց յե-  
տոյ, քառասուն տարի ևս Սրաբիայի անապատներում թա-  
փառեցան: Այս ժամանակ Աստուած դթութեամբ խնա-

մում էր և խստութեամբ պատժում նոցա, որ խռովու-  
թիւն չհանեն և չտրանջան: Մի անգամ Կորխ հրէայն  
Ահարոն քահանայապետի և այլ քահանայից դէմ ելաւ  
ասելով թէ՝ «բոլոր ժողովուրդը սուրբ է, դուք ինչո՞ւ  
համար ձեզ միայն վեր էք դասում Աստուծոյ ժողովը!»:  
Նորա հետ միաբանեցան նաև 250 ծերեր: Այն ժամա-  
նակ Մովսէս ասաց նորա: «Աստուած ցոյց կը տայ, թէ ինքը  
որին է ընտրում», և հրամայեց ծերերին որ բուրվառ-  
ները առած խորանը գան: Բայց բոլոր ծերերը Մովսէսի  
այս հրամանը չկատարեցին: Նոցանից երկուսը՝ Դադան և  
Արիրոն պատասխանեցին, թէ՝ բաւական է, որ Մովսէսը  
մեզ հարուստ աշխարհից հանեց. նա գեռ մեզ որթեր չէ  
տուել այլ ուղում է մեր վերայ իշխել մենք չենք եր-  
թալ: Աստուած այս ապատամբներին պատժեց: Կորխի,  
Դադանի և Արիրոնի վրաները նոցա ծառաներով և ստա-  
ցուածքով մէկ տեղ գետնի տակ անցան, իսկ խորանի ա-  
ռաջ հաւաքուած ծերերը այրուեցան այն կրակով, որ  
խորանի միջից դուրս եկաւ, և շատ ժողովուրդ ևս ժանտ-  
ախտով մեռան: Այս կերպով Աստուած յայտնեց թէ նա  
Մովսէսին իշխան է կարգել իսկ Ահարոնին քահանայա-  
պետ:

Մէկ անգամ ևս Իսրայէլացիք միս չունենալու հա-  
մար սկսան տրտնջալ Մովսէսի դէմ, որովհետեւ ասում էին  
թէ զգուել են ամենայն օր մանանայ ուտելուց: Աստուած  
նրանց պատժելու համար, նոցա վերայ օձեր ուղարկեց,  
որ խածոտում ու մեռցնում էին նորանց: Իսրայէլացիքը  
զղացին իրենց արածների վերայ: Այն ժամանակ Մով-  
սէս Աստուծոյ հրամանով փայտէ սիւնի վերայից մի պը-  
ղինձէ օձ կախեց և ասաց. «ով որ հաւատով այս օձին կը-

նայի, չի մեռնիլ: Այն Խորայէլացիք, որոնք Մովսէսի  
խօսքին հետևեցան, կենդանի մնացին:  
Քանանացւոց երկրի սահմաններին մօտ մեռաւ  
Մովսէս, և Աստուած նորա փոխանակ Խորայէլացւոց ա-  
ռաջնորդ նշանակեց Յեսու Նաւեային մասի բան զան:



### 23. ՅԵՍՈՒ ՆԱԽԵԱՅ ԵՒ ԴԱՏԱԽՈՐՆԵՐ:

Յեսու Նաւեան Խորայէլացւոց Աստուծոյ խոսացած  
երկրը հասցրեց: Աստուած այն ժամանակ օգնում էր  
Խորայէլացւոց: Նորա Յորդանան գետի միջից պիտի անց-  
նէին: Աստուծոյ հրամանով զետի ջրերը բաժանուեցան և  
յետ քաշուեցան այնպէս, որ նորա գետի ցամաք յատակի  
վերայով անցան: Պէտք էր նաև վեր առնել նրիքով քա-

ղաքը, որ շրջապատած էր ամուր պարիսպներով և ամ-  
բացած: Բահանայք ուխտի տապանակը առած սորա չորս  
կողմը շրջեցան ամուր պարիսպները իրենք իրենց կոր-  
ծանուեցան: Վեց տարուան մէջ Խորայէլացիք Քանանաց-  
ւոց բոլոր երկրին տիրեցին և վիճակով իւրեանց տասն  
և երկու ցեղերի մէջ բաժանեցին: Ամենավասը Յեսուայի մահից յետոյ Խորայէլացիք Տերակոյտով էին  
կառավարվում: Այն ժամանակներում շատ նեղութիւններ  
կրեցին նորա, որովհետեւ Աստուծոյ հրամանը չէին կա-  
տարում: Խորայէլացւոց ցեղերը փոխանակ Աստուծոյ հրա-  
մանները կատարելով Արաբեկամական սիրով վարուե-  
լու, կռվում էին միմեանց հետ և իւրաքանչեւր հրէայ  
իւր խելքի կտրածն էր անում: Բացի սորսնից նորա հե-  
թանոսների հետ բարեկամութիւն արին և նոցանից կռա-  
պաշտութիւն սիրուեցան, որ Աստուած արգելել էր: Այս  
պատճառով Աստուած իւր ողորմութիւնը կտրեց նոցանից,  
և մերձակայ հեթանոս ազգերը սկան նրանց նեղել: Սա-  
կայն Խորայէլացիք զղջում էին իւրեանց մեղքերի վերայ  
և այն ժամանակ Աստուած սկսում էր նորից օգնել նոցա-  
և ազատիներ ուղարկել որոնք ժողովուրդին կառավարե-  
լով՝ թշնամեաց ձեռքերից ազատում էին նրանց: Այս ա-  
զատարարները դատաւոր էին կոչվում: Օրինակի համար,  
Խորայէլացիք իւրեանց մեղքի համար մէկ վայրենի ժողո-  
վը իւսանութեան տակ ընկան, որ կողովառում էր նոցա-  
երկիրը նրբոր Խորայէլացիք իւրեանց մեղքերի վերայ  
զղջացին, Աստուծոյ հրեշտակը երևեցաւ Գէգեօնին և ա-  
սաց, ես քեզ կուղարկեմ որ ձեր թշնամիներին մի մարդու  
նման կոտորես: Այն ժամանակ Գէգեօն կուռքերի զոհա-  
րանը կործանեց և ծմբարիտ Աստուծուն զոհ մատոյց, և

վերստին երեք հարիւր մարդով յարձակուեցաւ թշնամի զօրքի վերայ: Աստուած այնպէս շփոթութիւն ձգեց թըշնամիների մէջ, որ սկսան միմեանց կոտորել և այնպէս փախանցուեցան:

Վերջին դատաւորն եղաւ Սամուէլ մարդարէն, որ Աստուծոյ օգնութեամբ Խորայէլացիներին թշնամիների ձեռքից ազատեց և պատերազմից յետոյ երկար ժամանակ կառավարեց նրանց:

## 24. ԹԱԳԱՒՈՐՆԵՐ:

Երբ Խորայէլացիք կամեցան իւրեանց դրացի ազգերի նման թագաւոր ունենալ Սամուէլ մարդարէն Աստուծոյ հրամանով Սաւուղին նոյա թագաւոր օծեց: Այն ժամանակից սկսած Խորայէլացիք թագաւորներով էին կառավարվում: Հրէից թագաւորների մէջ երեւելի էին Յուղայի ցեղեց Դաւիթը և նորա որդին Սողոմոն: Աստուած Դաւիթի խոնարհութիւնը տեսնելով, օգնեց նրան: Նորա անունը հոչակուեցաւ երիտասարդութեան օրից սկսեալ, երբ նա մենամարտութեան մէջ յաղթեց հսկայ Գողիաթին: Սաւուղի մահից յետոյ Խորայէլացիք թագաւոր ընտրեցին Դաւիթին: Դաւիթը սահմանակից ազգերին նուածեց և Հրէից թագաւորութիւնն ընդարձակեց ու զօրացրեց: Աստուած սիրեց Դաւիթին նորա բարեպաշտութեան և հնազանդութեան համար և ամէն բանի մէջ օգնում էր նրան: Այս թագաւորը Սաղմոններ՝ այսինքն սուրբ երգեր շարադրեց, որոնք սաղմոնարանի մէջ են գտնվում: Այն սաղմոնների մէջ շատ մարդարէութիւններ կան Փրկչեր:

Վերայ: Դաւիթը գուշակեց, թէ Փրկիչը պիտի լինի Աստուծոյ որդին, որ երկրիս վերայ պիտի չարչարուի, մարդիկ նորա ձեռքերն ու ոտքերը պիտի կապեն, վերան պիտի ծիծաղեն, հանդերձը վիճակով պիտի բաժանեն, թէ նա յարութիւն պիտի առնի և իրեն համար յաւիտենական թագաւորութիւնն պիտի հաստատէ:

Սողոմոն թագաւորների մէջ ամենից իմաստունն և հարուստն էր: Ճշմարիտ Աստուծոյ անունով մի փառաւոր տաճար շինեց Երուսաղէմի մէջ, որ իւր տէրութեան մայրաքաղաքն էր: Սողոմոնի մահից յետոյ Հրէից թագաւորութիւնը երկու մասն բաժանուեցաւ՝ Յուղայի թագաւորութիւնն և Խորայէլի թագաւորութիւնն Խորայէլացոց մէջ երկպառակութիւն ընկաւ: Սկսան մոռանալ Աստուծունն և կուռքերին երկրպագութիւն անել: Այս պատճառով Աստուած գերութեամբ պատժեց նրանց: Խորայէլացիք Ասորեստանցոց ձեռքը գերի ընկան և ցիրուցան եղան միջին Ասիայում, ուր մինչև վերջը մնացին, իսկ Յուղայի ցեղը գերի ընկաւ Բարելացոց Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը:

## 25. ՄԱՐԳԱՐԵ

Թուէ Խորայէլացիք ստէպ ստէպ մոռանում էին Աստուծուն, բայց ողորմածն Աստուած անխնամ չէր թողնում նրանց, այլ ուղարկում էր մարդարէներ: Մարդարէները Աստուծոյ անունով ամէնքին ճշմարտութիւն էին քարողում: Գուշակում էին Աստուծոյ տալու պատիժները չար մարդկանց, և իւրեանց Աստուծուց ուղարկուած լի-

Նիւթ հաստատելու համար՝ հրաշքներ էին գործում: Չար-  
մարդիկ մարդարէներին չէին սիրում, նոցա վերայ ծիծա-  
ղում էին, հողակ քար էին արձակում նոցա վերայ, եր-  
բեմ ևս սպանում էին նրանց: Խսրայէ լացւոց կռապաշ-  
առութիւն անելու համար նրանց խիստ յանդիմանողն էր  
Եղիս մարդարէն նա գուշակեց: Թէ Աստուած Խսրայէ-  
լացիներին կռապաշտութեան համար պիտի պատժէ, որ  
երեք տարի անձրւ չդայ, և երկրի մէջ սովը ընկնի: Խորա  
այս գուշակութիւնը կատարուեցաւ, և ժողովուրդը ա-  
զօթքով դէպի Աստուած դիմեց ներովութիւն խնդրելով:  
Այս ժամանակ մարդարէն կամենալով ժողովրդեան հա-  
ստատապէս ցոյց տալ թէ կայ միայն մի Աստուած, և  
ուրիշ աստուածներ չկան, խնդրեց Աստուծուց, որ երկըն-  
քից կրակ թափէ գոհի վերայ: Եղիս մարդարէն չմեռաւ,  
այլ կենդանի հրեղէն կառքով երկինք վերայաւ: Այս  
բանը աեսաւ նորա աշակերտ Եղիսէն և Եղիսէ մարդարէն  
Աստուծոյ ողորմութիւնն էր քարոզրւմ և շատ հրաշք-  
ներ էր գործում: Օրինակի համար, նա յարութիւն տուաւ  
մէկ պատանու և նէյէման Ասորու բորոտութիւնը բժշ-  
կեց: Եղիսէն իւր մահից յետոյ ևս հրաշք գործեց: Մէկ  
անգամ մի ննջեցեալ դրին այն քարանձաւը, ուր թաղուած  
էր Եղիսէն. ննջեցեալը երբ Եղիսէն ոսկորներին դիպաւ,  
խկոյն յարութիւն առաւ: Բայց մարդարէքը միմիայն  
գալու դժբաղդութիւնները չէին քարոզում, այլև բարե-  
պաշտ մարդկանց միիթարելու համար խոստացեալ փրկչի  
վերայ ևս շատ բաներ էին խօսում: Փրկչի վերայ ամէնից  
աւելի բացայայտ խօսողը նսայի մարդարէն էր: Նա գու-  
շակեց, թէ փրկչը Աստուածամարդ պիտի լինի և կոյսից  
պիտի ծնուի: Թէ նա Սուրբ Հոգու շնորհքը առատապէս

կունենայ. այսինքն Քրիստոս կամ Մեսիայ կը լինի, որ  
կը անակէ Օծեալ և շատ հրաշագործութիւններ կ'անէ. Պ-  
ղոսքինակի. Կորա հրամանով կաղերը պիտի մանգան, կոյ-  
րերը պիտի տեսնեն, մեռեալները յարութիւն պիտի առ-  
նեն. թէ նրան գառան պէս պատճելու պիտի տանեն շա-  
րագործների հետ, բայց նա իւր չարշարանքով պիտի  
փրկէ մարդկանց, արդարութեան և խաղաղութեան  
թագաւոր պիտի լինի և նորա թագաւորութիւնը վերջ  
պիտի չընենայ: Մի ուրիշ մարդարէ ևս, Միքիա անունով,  
գուշակեց թէ Փրկչը բեթղէհէմի մէջ պիտի ծնուի: բայց

## 26. ԴԱՆԻԵԼ ՄԱՐԳԱՐԵՆ ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱԻՈ- ՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ:

Ճրէայք բարելինի մէջ 70 տարի գերի մասցին, և  
այս գերութիւնը դառն էր նոցա համար: Բայց այն վիշ-  
տը օգտակար ևս եղաւ նոցա, որովհետեւ նրանով հեռու-  
մացին կռապաշտութիւնից: Այս գերութիւնը օգտաւէտ  
եղաւ հեթանոններին ևս վաճան զի աեսան նոքա Ճմա-  
րիտ Աստուծոյ փառքը և շատելը հաւատացին նրան:  
Գերութեան ժամանակ Աստուած Ճրէից ուղարկեց Դա-  
նիէլ մէծ մարդարէին: Դանիէլ մանկական հասակի մէջ  
գերի տարուեցաւ և իւր ընկերների հետ նաբուգոդոնու-  
սոր թագաւորի պալատում կրթութիւն առաւ: Այն ե-  
րիտասարդները թէպէտ հեթանոնների մէջ էին կենում,  
սակայն իւրիանց հաւատի օրէնքները Ճտիւ էին կատա-  
րում, զորօրինակ նոքա չէին ուտում այն կերակուրները,  
որ արդելուած էին իրենց օրէնքով, և խնդրում էին որ

**ԹԵՍԼ** տան իրենց միայն հաց և բանջարեղեն ուտելու: Ուսումն աւարտելուց յետոյ՝ արքունի ծառայութեան մէջ մտան: Թագաւորը Դանիիլի ընկերներին բորբոքեալ հնոցի մէջ ձգել տուաւ, որովհետեւ նոքա չյօժարեցան նորա կանգնած արձանին երկրպագութիւն անել: Աստուած հրաշալի կերպով նրանց մահից ազատեց: Նոյն իսկ Դանիիլին դուրի մէջ՝ քաղցած առիւծների առաջ ձգեցին, որովհետեւ նա իւր օրէնքին համեմատ էր աղօթում դէպի Աստուած. բայց առիւծները Աստուծոյ հրամանով չմօտեցան մարգարէին: Դանիիլ գուշակեց, որ Քրիստոս աշխարհ պիտի գայ Հրէից ազատութեան հրաման տրուելուց 490 տարի յետոյ:

Երբ գերութեան 70 տարին լրացաւ, Բաբելացւոց թագաւորութեանը տիրեց Պարսից Կիւրոս թագաւորը, որ հրաման տուաւ Հրէից Երուսաղէմ դառնալու:

Հրէայք իւրեանց Երուսաղէմը վերականգնեցին և նոր տաճար շինեցին: Սկզբումը նոցա համար դժուար էր աւերած երկրի մէջ բնակուիլ: Բայց ողորմած Աստուածը ուղարկեց նորանց մօտ Անգէոս, Զաքարիա և Մաղաքիա մարգարէներին, որոնք քաջալերում և միիթարում էին նրանց: Անգէոս գուշակեց, թէ Քրիստոսը այն նոր տաճարը պիտի երթայ: Զաքարիան նկարագրեց Քրիստոսի աւանակի վերայ հեծած հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մըտնիլը, իսկ Մաղաքիան ասաց՝ թէ Քրիստոսի առաջեկց պիտի գնայ նորա կարապետը:

Սկզբում Հրէայք Պարսից թագաւորների իշխանութեան տակ էին, յետոյ ընկան Յունաց իշխանութեան տակ, որ տիրապետեցին Պարսից թագաւորութեանը:

Այն միջոցին Սուրբ Գիրքը Երրայեցւոց լեզուից Յու-


նարէն թարգմանուեցաւ, որ ամէն լեզուներից աւելի գործածականն էր այն ժամանակ: Հրէայք Յունաց իշխանութեան տակ եղած ժամանակ մի մեծ վտանգի հանդիպեցան, որովհետեւ Յոյները ստիպում էին նրանց որ կռապաշտութիւն ընդունեն, բայց նոքա հաստատ կացած իւրեանց հաւատքի վերայ, շատ տանջանկըներ կրեցին և վերջապէս ազատուեցան Յունաց իշխանութիւնից: Բայց նոցա բարեբաղդութիւնը երկար չտեսեց: Հռովմայեցիք տիրեցին նոցա և թագաւոր դրին օտարազգի Հերովդէսին, որ խստաբարոյ և կասկածոտ մարդ էր:

## 27. ՓՐԿՉԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ:

Երբ Հռովմայեցիք Հրէաստանին տիրեցին, բոլոր Հրէայք անհամբերութեամբ սպասում էին խստացած Փրկչի գալստեանը: Հին ուխտի ժամանակը վերջացաւ, և սկսած նոր ուխտի ժամանակը, երբ Փրկիչն աշխարհ պիտի գար: Բայց Հրէաներից շատերը թիւր հակացողութիւն ունեին Փրկչի վերայ: Կարծում էին թէ նա երկաւոր փառքով պիտի գայ, որ նրանց Հռովմայեցւոց իշխանութիւնից ազատէ: Այլ և հպարտանում էին իւրեանց սրբութեամբ, իրենք իրենց արդար էին համարում, և կարծում էին թէ Քրիստոնը ոչ թէ նրանց մեղքերից ազատելու է գալիս, ինչպէս խստացել էր Աստուած, այլ գալիս է իւրեանց բարեգործութիւնների փոխարէն երկրաւոր բարեբաղդութեամբ նրանց վարձատրելու:

**28. ՍՈՒՐԲ ԿՈՅԱ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԵ. ԸՆԾԱՅՈՒՄ  
ՄԵ ԵՒ ԱՐԵՏՈՒՄԸ:** մաս ով մասնածուն  
մաշխատ է յրաւ Հոկ. Ա. 26—28, ուն ճարդ խառ մասելի

Երբ Հրէայք սպասում էին Քրիստոսի գալուն, Հրէաց  
աստանի մեջ երկու բարեպաշտ անձինք կային՝ Յովակիմը  
և նորա կին Աննան։ Նոքա զաւակ չունէին, և այս բա-  
նիս վերայ շատ էին տրտմում։ Աստուած նոցա աղօթքը  
լսեց և մի դուօտր պարգևեց, որի անունը Մարիամ դը-  
րին (\*) և երբ նա երեք տարեկան եղաւ, տաճարը տա-




րան Աստուծուն ընծայելու։ Քահանայապետը տաճարի  
գրան առաջ Աստուծոյ նուիրեալներին ընդունում էր և

(\*) Մարիամի ծնունդը մենք տօնում ենք միշտ Սեպտեմբերի 8-ին։

օրհնում։ ուստի Սուրբ Կուսին ևս ընդունեց ու տաճարը  
տարաւ ընծայեց Աստուծուն։ (\*)

Մարիամը տաճարի մէջ մեծանում էր և Աստուծոյ  
շնորհքով աղատ մնաց ամենայն արատից ու մեղքից, և  
եղաւ ամենասուրբ կոյս։ Նորա տաճարում եղած ժամա-  
նակ ծնողքը վախճանեցան։ իսկ երբ 14 տարեկան եղաւ  
գաստիարակները կտեղյան նրան ամռւսնացնել Բայց նա  
ասաց, թէ՛ ուխտել է Աստուծոյ՝ որ միշտ կոյս մնայ։ Այն  
ժամանակ քահանայք նրան նշանեցին իւր ազգական ծե-



րունի Յովսէփի հետ, որին յայտնեցին նաև Մարիամի  
ուխտը։ Յովսէփ Գալիլիայի Նազարէթ քաղաքի մէջ էր

(\*) Մարիամի ընծայումն ՚ի տաճարն տօնում ենք՝ ոյիմբերի 21-ին։

բնակվում և հիւսութեամբ էր պարապում: Մարիամնորա տունը զնաց բնակուեցաւ:

Մէկ անգամ երբ նա ազօթք էր անում, Գաբրիէլ հրեշտակապետը երեցաւ նրան և ասաց. «ուրախացիր բերկեալդ, Տէրը քեզ հետ է, օրհնուած ես դու կանանց մէջ, Հոգին Սուրբ կը գոյ վերայ և բարձրելու զօրութիւնը հովանի կը լինի քեզ՝ մի որդի կը ծնանիս և անունը Յիսուս կը լինես: Նա մեծ կը լինի և Բարձրեալի Որդի կը կոչուի և Տէր Աստուած կը տայ նրան նորա հօր Դաւթի աթոռը և նորա թագաւորութեանը վերջ չելնիլ: Մարիամը խոնարհութեամբ ընդունեց այս աւետիքը: (\*)

Կոյսն Մարիամը արժանացաւ մեծ պատուի—լինիլ մայր Փրկչի, Աստուծոյ Որդու: Ուստի մենք նորան անուանում ենք Աստուածածին, դասելով Սերովեէներից և Քերովեէներից վեր, որը և յայտնում ենք՝ ի պատիւ նորա յօրինուած երգաբանութեանց մէջ:

Ուրախ լեռ բերկեալդ Մարիամ, Տէր ընդ Քեզ. օրհնեալ Տու ՚ի կանայս և օրհնեալ է պատուղ որովայնի Քո: Արդ բարեխօս լեռ առ Տէր վասն մեր:

Ուրախացիր, շնորհալիդ Մարիամ, Տէրը քեզ հետ է. օրհնուած ես Դու կանանց մէջ և օրհնուած է Քո որովայնի պատուղը: Արդ բարեխօսութիւն արա Տիրոջդ առաջ մեզ համար:

(\*) Աւետման տօնը կատարում ենք միշտ Ասրիի 7-ին.

## 29. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԵ:

Ղուկ. Բ. 1—21.

Յօտեցաւ այն ժամանակը, երբ Գաբրիէլ հրեշտակապետի խօսքի համեմատ Քրիստոս պիտի ծնուէր: Այն միջոցին Հռովմայեցւոց կայսրը հրամայեց աշխարհագիր անել և այս պատճառով իւրաքանչիւր հրէի հրամայուած էր իւր հայրենի քաղաքը երթալ: Յավսէփ և Մարիամ Դաւթիթ թագաւորի ցեղեցն էին. այս պատճառով Նազարէթից գուրս եկան և Բեթղէհէմ գնացին, որ Դաւթի քաղաքն էր, և մարդարէների գուշակութեան համեմատ Քրիստոս այնտեղ պիտի ծնուէր: Քաղաքի մէջ նոքա օթեան չգտան, ուստի քաղաքի մօտ գտնուած մի այրի մէջ մնացին, ուր հովիւներ իւրեանց ոչխարներն էին պահում: Այն այրի մէջ գիշեր ժամանակ Մարիամ Սուրբ կոյսը ծնաւ իւր Միածին Որդին, որ ոչ միայն մարդ էր, այլ միանգամայն Աստուած: Սուրբ Կոյս Մարիամը Աստուածորդուն խանձարուրով պատեց և մսուրի մէջ դրաւ: Հրէից սովորութեան համեմատ ծննդեան ութերորդ օրը թլիքատեցին նրան և Յիսուս անուանեցին, որ Փրկչի կը նշանակէ:

Յունվարի վեցին Հայաստանեայց եկեղեցին կատարում է Քրիստոսի ծննդեան և մլրտութեան տօնելը՝ ի միասին, իսկ Յունվարի Հնդին, երեկոյեան, մատուցանվում է սուրբ պատարագ և Ճրագալոյց է լինում: Ծննդեան օրը, պատարագից յետոյ, կատարվում է Ջրօրհնէքի

շքեղ հանդէսը: Դասք հոգեռորականաց զգեստաւորուած  
—խաչերով, խաչուառներով և վառած կերոններով դուրս  
գալով եկեղեցուց, գնում են գետը և այնտեղ խաչով,  
սուրբ աւետարանով և սուրբ մեռոնով օրհնում են ջու-  
րը՝ի յիշատակ Քրիստոսի մլրտութեան Յորդանանում:  
Նոյն օրը քահանայք գալիս են մեր տները օրհնելու  
(տնօրհնէք), շնորհաւորում են մեզ Քրիստոսի ծնունդը և  
յայտնութիւնը—աւետարան կարգալով և այս շարականը  
երդելով.

Խորհուրդ մեծ և  
սբանչելի, որ յայսմ  
աւուրյայտնեցաւ՝ հո-  
վիւք երգեն ընդ հր-  
բեշտակս, տան աւե-  
տիս աշխարհի, ծնաւ  
նոր արքայ ՚ի Շեմ-  
զէմ քաղաքի, որ-  
դիք մարդկան օրհնե-  
ցէք, զի վասն մեր  
մարմնացաւ:

Այն խորհուրդը,  
որ այսօր յայտնի ե-  
ղաւ—մեծ է և հիա-  
նալի. Հովիւները եր-  
գում են հրեշտակնե-  
րի հետ և աւետիս  
են տալիս աշխարհն:  
Շեմզէմ քաղա-  
քում ծնուեցաւ նոր  
թագաւոր, ուրեմն  
մարդոց որդիք, օրհնե-  
ցէք Կորան, որովհե-  
տեւ մեզ համար մար-  
մին առաւ:

Աստուծոյ Միածին Որդին, որ Ճշմարիտ և յաւի-  
տենական Աստուծած է, և էակից հօր, մարմնացաւ և  
մարդացաւ, այսինքն՝ Սուրբ Կոյս Մարիամից Հոգով Սրբով  
մարդկային մարմին և հոգի առաւ բաց ՚ի մեղքից, և այս  
կերպով եղաւ մարդ կատարեալ և Աստուծած կատարեալ:  
Որդին Աստուծոյ մարմնացաւ մեղ համար, որ մեզ ազատէ  
սատանայի ձեռքից, ջնջէ մեր մեղքերը, հաշտեցնէ մեղ  
Աստուծոյ հետ, Ճշմարտութիւն և սէր քարոզէ մեղ և  
իւր աշակերտներով մի թագաւորութիւն կամ մի ընտա-  
նիք կազմէ, որի մէջ Աստուծած Հայր լինի, իսկ մարդիկ  
նորա որդիքը, և միմեանց եղբարք:

Մէր ունի Աստուծոյ Որդին և ունի նորա մարդեղու-  
թիւնն ունեցած հաւատը յայտնում էնց այսպէս.

Հաւատամք և ՚ի մի Տէր Յիսուս Քրիս-  
տոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստու-  
ծոյ, Հօրէ միածին, այսինքն յէռթենէ Հօր.  
Աստուծած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աս-  
տուծած Ճշմարիտ, յԱստուծոյ Ճշմարտէ—ծը-  
նունդ և ոչ արարած: Կոյն ինքն ՚ի բնու-  
թենէ Հօր, որով ամենայն ինչ հղե յեր-  
կինս և ՚ի վերայ երկրի, երևելիք և անե-  
րևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն  
մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնա-


ցաւ, մարգացաւ, ծնաւ կատարելապէս՝ ՚ի  
Մարիամայ սրբոյ կուտէն Հոգւովի Ուր-  
բով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտս  
և զամենայն, որ ինչ է՝ ՚ի մարդ—Ճշմար-  
տապէս և ոչ կարծեօք։

**30. ԲԵԹՂԵԶԵՄԻ ՀՈՎԻՒՆԵՐԻ ՓՐԿՉԻՆ ԵՐԿՐՊ-  
ԳՈՒԹԻՒՆ ԱՆԵԼԸ ԵՒ ՆՈՐԱ ՖԱՌԱՍՆՈՐԵԱՅ ԳԱ-  
ԼՈՒՏԸ ՏԱԶԱՐԸ։**

Դուկ. Բ. 8—38,

Ամենից առաջ Բեթղէչէմի Հովիւները իմացան  
Փրկչի ծնունդը։ Քրիստոսի ծննդեան գիշերը նոքա իւր-  
եանց ոչխարների հետ դաշտի մէջ էին։ Յանկարծ մէկ  
անսովոր լցո տեսան, Աստուծոյ հրեշտակը նոցա երեւ-  
ցաւ և ասաց. «Սի վախենաք, ես մեծ ուրախութիւն  
եմ աւետում ձեզ։ Դաւթի քաղաքի մէջ Փրկիչ ծնաւ  
ձեզ, որ է օծեալ Տէր։ Եւ ահա ձեզ նշան. դուք կը գտնէք  
մանկանը խանձարուրով պատած և մսուրի մէջ դրուած»։  
Այն միջոցին երկնքից բազմաթիւ հրեշտակներ երեւցան,  
որոնք երգելով փառարանում էին Աստուծուն։ Երբոր հրեշ-  
տակները անյայտացան, Հովիւները այրը գնացին, և գը-


տան որ մանուկը խանձարուրով փաթաթուած և մսուրի



մէջ դրուած էր։ Երկրպագութիւն արին նրան, իրեւ  
Աստուծոյ, և Մարիամին ու Յովսէփին պատմեցին իւրեանց  
լսածն ու տեսածը, յետոյ այն համբաւը իւրեանց գիւղի  
մէջ ևս տարածեցին։

Սովորիսական օրէնքով ամենայն արու անդրանիկ  
զաւակ նորա ծննդեան քառասներորդոյ օրը տաճալն էին  
տանում և այնտեղ նորա համար զըհ մատուցանում։ Հա-  
րուստները մի որթ կամ ոչխար էին զոհում, իսկ աղքատ-  
ները մի զըյգ աղաւնու ձագ։ Սուրբ Կյան Մարիամ իւր  
որդուն տաճար տարաւ և մի զըյգ աղաւնի հետն առաւ։  
Այն ժամանակ Երուսաղէմի մէջ էր Սիմէօն ծերունին, ո-  
րին Հոգին սուրբ յայտնել էր թէ պիտի չմեռնի, մինչեւ

Հաեսնէ Քրիստոսին: Սիմեօն տաճարի մէջ տեսաւ Յիսուս



մանկանը, գիրին առաւ և նրան անուանեց լոյս հեթանուաց և փառք Խարայէլի: Տաճարի մէջն էր նաև Աննայ մարդարէուհին, որ ուժուուն և չորս տարեկան այրի էր: Նա ևս սկսաւ փառաբանել Աստուծուն և ամէնքին ասում էր, թէ այն մանուկը՝ խոստացեալ Փրկիչն է:

### Տ. ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՈԱԳՈՒԹԻՒՆԸ: ՄԱՐԻԱՄԻ ԵՒ ՅՈՎ- ԵՓԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽԶԻԼԸ ԵՒ ԱՅՆՏԵՂԻՑ ԴԱՌՆԱԼԸ:

Մատ. Բ. 1—23.

Այն միջոցին Հրէաստանի արևելեան Երկիրներից քանի մի մոգեր, այսինքն իմաստուն մարդիկ, Երուսաղէմ եկան, և հարցնում էին թէ. «Ուր է Հրէից Նորածին թագաւորը. մենք նորա աստղը տեսանք արևելեան կողմը և եկանք նրան Երկրպագութիւն անելու;» Հերովդէս թա-

գաւորը մոգերի այս հարցմունքը լսելով՝ շփոթուեցաւ և Հրէից դպիրներին հարցրեց թէ՝ «Ուր պիտի ձնուի Քրիստոս: Դպիրները պատասխանեցին թէ՝ «Բեթղէհէմ քաղաքի մէջ: Այն ժամանակ թագաւորը յայտնեց այն մոգերին և խնդրեց նոցանից ասելով, թէ երբ կրգունէք մանկանը, ինձ յայտնեցէք, որ ես ևս գնամ և երկրպագութիւն անեմ նրան:» Մոգերը Բեթղէհէմ գնացին, և տեսան այն գերբնական աստղը մէկ տան վերայ: Այն տունը մտան, և մանկանը գտան իւր մօր հետ, երկրպագութիւն արին նրան, իբրև Աստուծոյ և մատուցին իւրեանց ընծաները: Յետոյ ուզում էին Երուսաղէմ վերադառնալ և մանկան համար Հերովդէսին պատմել բայց միւս գիշերը Աստուծուց հրաման առան, որ Հերովդէսի մօտ չդառնան, ուստի ուրիշ Ճանապարհով գնացին իւրեանց երկիրը:

Հերովդէս՝ երբ իմացաւ թէ մոգերը իւրեանց երկիրն են գնացել հրամայեց, որ Բեթղէհէմի մէջ եղած երկու տարեկանից ցած բոլոր տղայոցը կոտորեն: Յոյս ունէր, որ նոցա հետ Յիսուս ևս կրապանուի: Բայց Յովսէփ և Մարիամ Աստուծոյ հրամանով իւրեանց որդու հետ նգիպտոս փախան: Հերովդէսի անգութ հրամանը կատարուեցաւ. Նորա զինուորները Բեթղէհէմի մէջ 14000 մանուկ կոտորեցին:

Այնուհետև շատ ժամանակ չանցած՝ Հերովդէս մեռաւ: Այն ժամանակ Յովսէփ Հրէաստան դարձաւ և Գալիլիայ Նազարէթ քաղաքում բնակուեցաւ: Այնտեղ Քրիստոս մինչեւ երեսնամեայ հասակը անձանօթ մնաց մարդիկներից. երեսուն տարեկան եղաւ, աճեցաւ և լցուեցաւ իմաստութեամբ և սիրով դէպի Աստուծած և դէպի

մարդիկ: Աւանդութիւն կայ թէ Յովսէփ Աստուածահօրն օգնում էր հիւսնութեամբ:

### 32. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ:

Դոկ. Ա. 5—25 և 57—80. Մատ. Գ. 1—12. Դոկ. Գ. 2—18.

Քրիստոսի ծննդեան ժամանակ Հրէաստանի մէջ երկու արդար և բարեպաշտ անձինք կային՝ Զաքարիա քահանայն և նորա կին Նղիսաբեթը: Նոքա երկար ժամանակ անդաւակ էին, որի վերայ տրտմելով՝ Աստուծուց խնդրում էին, որ զաւակ տայ իրենց: Աստուծած լսեց նոցա աղօթքը: Մէկ անդամ Գաբրիէլ հրեշտակապեար տաճարի մէջ երկեցաւ Զաքարիային և յայտնեց թէ նա Յովհաննէս անունով մէկ որդի պիտի ունենայ, որ Հոգւով Սրբով պիտի լցուի և ժողովուրդը պիտի պատրաստէ Փրկչին ընդունելու համար: Հրեշտակի ասածը կատարուեցաւ: Յիսուսի ծնունդից վեց ամիս առաջ Զաքարիան մէկ որդի ունեցաւ Յովհաննէս անունով, որ աղօթքութեան հասակից անապատի մէջ էր բնակվում և ապրում էր մարախ և մեղք ուտելով: Նորա հագուստը ուղտի բրդից էր և գօտին մաշկեղէն: Երբ երեսուն տարեկան եղաւ, սկսաւ Յորդանան գետի եղերքների մօտ քարոզել Քրիստոսի յայտնութեան վերայ: Ամէն կողմերից ժողովուրդը հաւաքվում էր նորա քարոզութիւնը լսելու: Յովհաննէս իւր մօտ եկողներին ասում էր. «ապաշխարեցէք, երկնքի արքայութիւնը մօտեցել է»: և այս ասելով իւրաքանչիւրին տալիս էր հարկաւոր խրատներ: Կեղծաւոր Փարիսեցիք, որ իւր-

եանց արտաքին աստուածպաշտութեամբ հպարտանում էին և ծերերի աւանդութիւնները խստիւ կատարում, հարցրեցին. «Մենք ի՞նչ պէտք է անենք»: Յովհաննէսը քարոզում էր նոցա թէ «ով որ երկու հանդերձ ունի, թող մէկը չունեցողին տայ, կերակուր ունեցողն ևս թող նոյնպէս անէ»: Մաքսաւորները Փարիսեցոց պէս հարցրեցին, և Յովհաննէս նոցա պատասխանեց. «Մի պահանջէք ժողովը դից այն, ինչ որ օրէնքը չէ հրամայած»: Յետոյ զենուորները հարցրեցին. «Մենք ի՞նչ պէտք է անենք»: Յովհաննէս պատասխանեց թէ. «Դուք ո՞ւ ոքին չզրկեք, ո՞ւ ոքին չզըպարտեք և ձեր ուռճկովը բաւականացէք»: Այս քարոզութիւնից յետոյ Յովհաննէս Յորդանան գետի մէջ մկրտում էր իւրեանց մեղքերը զզացողներին:


Շատերը կարծում էին թէ մարդարէներից գուշակած Մեսիայն կամ Քրիստոսը Յովհաննէսն է: Բայց նա ինքն ասում էր թէ. «Ես Քրիստոս չեմ, այլ Աստուծին ուղարկեց նորա առաջեւ, որ նորա Ճանապարհը պատրաստեմ»: Այս պատճառով Յովհաննէսը կոչվում է Տիրոջ Կարողութեա:

### 33. ՏԻՐՈՋ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԱՏԱՆԱՅԻՑ ՓՈՐ- ՁՈՒԻԼԸ:

Մատ. Գ. 13—17:

Մէկ անդամ Քրիստոս ուրիշ մարդկանց պէս Յովհաննէսի մօտ եկաւ և նրանից մկրտուեցաւ Յորդանան գետի մէջ: Մկրտուելուց յետոյ երկինքը բացուեցաւ, և

Հոգին սուրբ աղաւնու կերպարանքով՝ Քրիստոսի վերայիշաւ և երկնքից ձայն լսուեցաւ, թէ «Դա է իմ սիրելի Որդին, որին հաւանեցայ:» Այն ժամանակ Յովհաննէսը իմացաւ, թէ Քրիստոսը Աստուծոյ Որդին է և աշխարհիս վրկիչը:



Քրիստոս մկրտուելուց յետոյ անապատ գնաց, որ քառասուն օր և քառասուն զիշեր ծոմ պահեց և աղօթքով անցկացրեց: Քառասներորդ օրը նա զգաց մի այնպիսի քաղց, որը շատ անգամ մարդուն մեղսնել է տալիս: Սատանան ուզեց օգուտ քաղել այս փորձանքից և Քրիստոսին գայթակղեցնել դէպ ՚ի չար զգացմունքը և դորձերը. բայց չյաջողեցաւ նորան այդ: Յիսուս Քրիստոս

մերժեց իրանից սատանային և այն ժամանակ եկան հրեշտակներն ու սկսան պաշտել նորան:

**Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն,**  
**այլ փրկեա ՚ի չարէն:**

### 34. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԺՐԻՍՏՈՒ ՎԵՐԱՅ ՏՈՒԱՌ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

Յով. Ա. 19—40. Գ. 22—30. Խատ. ԺԴ. 3—11.

Քրիստոս՝ անապատի մէջ փորձուելուց յետոյ, Յորդանան զետի եղերքն եկաւ, ուր Յովհաննէսը մկրտում էր: Յովհաննէսը նրան տեմնելով՝ ասաց ժողովրդին. «Ահա դառն Աստուծոյ, որ բառնայ զմելս աշխարհի» այսինքն ահաւասիկ նա, որ իւր կեանքը բոլոր աշխարհիս մեղքի համար պիտի զոհէ: Յովհաննէսի աշակերտներից մի քանիսը Քրիստոսի ետևից գնացին:

Փիչ ժամանակից յետոյ Յովհաննէս ստիպուեցաւ իւր քարոզութիւնները վերջացնել որովհետև Գալիլիայոց Հերովդէս թագաւորին յանդիմաննում էր, այն պատճառով, որ նա իւր եղբօր կենդանութեան ժամանակը նորա կնոջ Հերովդիադայի հետ ամուսնացաւ: Այս յանդիմաննութեան համար չար Հերովդիադան շատ բարկացաւ և Հերովդէսին յորդորեց, որ Յովհաննէսին բանտարկէ, յետոյ խնդրեց նաև, որ Յովհաննէս Մկրտչի գլուխը կտրել տայ:

**35. ՅԻՍՈՒՄ ԳՆՈՒՄ Է ԳԱԼԻԼԻԱՅԻ ԿԱՆԱՅ ՔԱ-  
ՂԱՔԸ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ:**

Յովհ. Բ. 1-11.

Յիսուս, Յովհաննէսի իւր վերայ վկայութիւն տա-  
լուց յետոյ, Գալիլիա գնաց: Այնտեղ Աստուածամօրը, նո-  
րան և նորա աշակերտներին կայնայ քաղաքի մէջ հար-  
սանիքի հրաւիրեցին: Հարսանեաց խնջոյքի ժամանակ գի-  
նին պակասեցաւ: Աստուածամայրը՝ տեսնելով տանտիրոջ  
շփոթութիւնը, ասաց Յիսուսին. գինի չունին: Յիսուս  
պատասխան տուաւ նրան թէ՝ դեռ իմ ժամանկս չէ հա-  
սել, այսինքն դեռ ժամանակը չէ, որ ցոյց տամ իմ Աս-  
տուածային փառքը: Բայց Մարիամ հաստատ գիտէր, թէ  
իւր ողորմած որդին կ'օգնէ կարօտեալներին, վասն որոյ  
ասաց ծառաներին. Ինչ որ ձեզ հրամայէ, կատարեցէք:  
Սենեակի մէջ եօթը մէծ քարեղէն ջրի ամաններ էին  
զբուած: Յիսուս հրամայեց որ նրանց ջրով լցնեն, յետոյ  
այն ջուրը հիւրերին բաժանեն: Ծառաները նորա հրա-  
մանը կատարեցին և տեսան որ ամանների միջի ջուրը  
լաւ գինի է դարձել: Այս կերպով Յիսուս առաջին հը-  
րաշքը գործեց և աշակերտները հաւատացին իրեն:

Այդ առիթով Աստուածամայրը օգնութիւն ցոյց  
բուաւ դէպի մարդիկ և եղաւ նոցա համար իւր որդուն  
քարեխօս: Այս պատճառով մենք դէպի նա դիմում ենք  
առջօթքներով իրեւ դէպի մեր պաշտպանը և բարեխօսը,  
որը ամենայն ժամանակ օգնէ մեզ:

Ինկանիմք առջի || Ընկնում Ենք բո-  
չքո, Աուրբ Աստուա- || առաջ, Աուրբ Աս-

ծածին, և աղաչեմք տուածածին, որ կոյսդ  
զանարատզկոյսդ՝ բա-  
րեխօսեա վասն ան-  
ձանց մերոց և աղա-  
չեա զմիածին Որ-  
դիդ՝ գրկել զմեզ՝ ի  
փորձութենէ և յամե-  
նայն վտանգից մերոց: Ամեն տե-  
սակ վտանգներից:

**36. ՅԻՍՈՒՄ ՔԱՐՈՁՈՒՄ Է ԹԷ ԻՆՔՆ Է ՔՐԻՍ-  
ՏՈՍ:**

Մատ. Ա. 14—15.

Քրիստոս իւր քարոզութիւնը Գալիլեայի մէջ սկսաւ:  
Մէկ անգամ գնաց Նազարէթ քաղաքը, ուր մեծացել էր:  
Այն օրը շաբաթ էր: Նաբաթ օրերը բոլոր Հրէայք ժո-  
ղովարան էին գնում: Ժողովարան ասվում էին այն տները՝  
ուր նոքա հաւաքվում էին աղօթք անելու, Սաղմոս եր-  
գելու և Սուրբ Գիրք կարդալու համար: Քրիստոս ժո-  
ղովարանը մտաւ, Խոյի մարգարէի գիրքը առաւ և կար-  
գաց այն տեղը, ուր Քրիստոսի գործերի վերայ խօսում  
էր մարգարէն, և ասաց թէ՝ այս խօսքերը իմ վերայ կա-  
տարուեցան, որովհետեւ ես եմ Քրիստոսը, այսինքն՝ Աս-  
տուծոյ օծեալը: Նազարէթի բնակիչները կասկածանկով  
ըսում էին նորա խօսքերը: Այն ժամանակ Քրիստոս ասաց  
նոցա. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, թէ ոչ մի մարգարէ»

իւր գաւառի մէջ չի ընդունվում, և յիշեցրեց նոցա թէ ինչպէս երբեմն Աստուած հեթանոսներին էր օգնում, իսկ Կարայէլացիներին իւր օգնութիւնից զբկում: Լսողները զայրացան Քրիստոսի վերայ այն քարոզութեան պատճառով: Բոնեցին Նորան, քաղաքից դուրս հանեցին և ուղում էին մէկ ժայռից փայր ձգել, բայց նա նոցա միջեց անցաւ գնաց:

Այնուհետև Յիսուս որ և իցէ մշտակայ բնակարան չունէր, ուր կարողանար հանգիստ դնել իւր գլուխը. այլ հայրենի աշխարհի գիւղերում և քաղաքներում շըջում էր և ամենայն տեղ քարոզում էր թէ. «ապաշխարեցէք, որովհետև մօտեցել է երկնքի արքայութիւնը, հաւատացէք աւետարանին, այսինքն փրկութեան աւետիքին.» յետոյ կանչում էր իւր մօտ բոլոր դժբաղներին, և խոստանում էր նրանց հանգստացնել.

Քրիստոս այսպէս սկսաւ մարդկանց փրկութեան համար ծառայել իւր օրինակով մեզ ապրելու կերպ ցոյց տուաւ, իւր քարոզութեամբը մեզ փրկութեան ձանապարհն էր ցուցանում և չարչարուելով մարդկանց մեղքի համար՝ ինքն իրան զոհ էր մաստուցանում: Մարդարէների խօսքերը կատարուեցան, որովհետև մարդկանց մէջ երեւեցաւ Աստուծոյ մարդարէն և զառն Աստուծոյ, որ իւր վերայ առաւ մարդկանց մեղքերը:

### 37. ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՎՈՐՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քիչ ժամանակում Քրիստոսի գործած հրաշվորմութիւնների լուրը տարածուեցաւ Հրէաստանի մէջ, և

ժողովուրդը խօսուն բազմութեամբ գնում էր Նորա յետեից: Նա իւր մէկ խօսքով սաստիկ փոթօրիկը դադարեցրեց, ջրի վերայով իբրև գեանի վերայ ման եկաւ, հինգ հայով և երկու ձկնով հինգ հազար մարդ կերակրեց, և միայն հրամայելով մեռած մարդկանց յարութիւն որուաւ:

Դիմաղղ մարդիկ մեծ ուրախութեամբ Քրիստոսին մօտենում էին, և ոչ մէկը առանց օգնութիւն և միի-



թարութիւն առնելու մօտից չէր հեռանում. կյցերին լուսաւորում էր, խուլերին լսողութիւն էր տալիս, անդամալոյներին բժշկում էր, բորսոներին սրբում էր, դիւահարներին աղատում: Ամէն մարդու ընդունում էր, իւր մօտ, ուրիշներւ ատելի եղած մեղաւոր և հեթանոս

մարդիկ նրանից օգնութիւն էին գտնում: Մարդիկներից նու միայն այս էր պահանջում, որ իրեն հաւատան: Բժշկուածներին արձակում էր այս խրառը տալով թէ՝ «այլ ևս մի մեղանչեր, որ աւելի վատ չլինի քեզ»: Այս գործերով Քրիստոս պարզապէս ցոյց էր տալիս, որ երկրիս վերայ Աստուծոյ արքայութիւնը սկսուել է: Ժողովուրդներից շատերը հաւատում էին Քրիստոսի գործած հրաշքները տեսնելով, և ամէն կողմից ասում էին թէ՝ մեծ մալտարէն երեացել է մեր մէջ, Աստուծած իւր ժողովըդեան այցելութիւն է արել:

### 38. ՔՐԻՍՏՈՍ ՇՈՎԻ ՎԵՐԱՅ ՓՈԹՈՐԻԿԸ ԴԱԴԱ- ՐԵՑՆՈՒՄ Է ԵՒ ԶՐԻ ՎԵՐԱՅ ՄԱՆ Է ԳԱԼԻՒ:

Դուկ. Ը. 22—25. Ցով. Զ. 18—21.

Այէկ անգամ Քրիստոս իւր աշակերտների հետ նա-  
ով մի ծովակի վերայից պիտի անցներ: Խնքը նաւի յե-  
տեփ կողմը քնել էր: Սաստիկ հողմ բարձրացաւ և ալիք-  
ներ վերկացան, այնպէս որ նաւը լրցուելու վերայ էր:  
Աշակերտները վախեցած զարթեցրին Քրիստոսին, ասե-  
լով. «Տէր, ահա մենք կորչում ենք, տպատիր մեզ: Քրիս-  
տոս նոցա պատասխանեց. «Խ՞նչու այդպէս վախկոտ էք,  
թերահաւատներ»: Յետոյ վերկացաւ և փոթորիկին ու-  
ալէկոծութեան սաստեց, իսկոյն հանդարտութիւն տի-  
րեց: Ամէնը զողի մէջ ընկած հիանում էին և ասում:  
«ո՞լ է սա, որ հողմին և ջօխն հրաման է տալիս և իրեն  
լսում են»:

Այէկ անգամ Քրիստոսի աշակերտները նաւով դնում  
էին ծովակի վերայ, սաստիկ փոթորիկ վերկացաւ, և նու-  
քա շատ վախեցան, որովհետու Յիսուս նոցա հետ չէր:  
Յանկարծ տեսան, որ մէկը ջրի վերայ մանգալով իրենց  
մօսն է գալիս, և շճանաշելով թէ Քրիստոսն է, սաստիկ  
վախեցած աղաղակեցին, թէ. «այս երկոյթ է»: Քրիստոս  
նոցա ահը տեսնելով, ասաց. «մի վախենաք, ես եմ», Յե-  
տոյ նորա աշակերտներից մէկը, Պետրոս, ասաց. «Հրաման  
տուր, որ քեզ մօտ գտմ ջրի վերայից»: Քրիստոս պա-  
տասխանեց. «Եկ.» և Պետրոս նախից գուրս գալով ջրի  
վերայ կանգնեցաւ և սկսաւ երթալ բայց ծովակի ալէկո-  
ծութիւնը տեսնելով վախեցաւ և քիչ մնաց, որ խեղ-  
զուկը. ուստի աղաղակեց. «Տէր, փրկիր ինձ: Քրիստոս  
մօտեցաւ նորան, ձեռքից բռնեց և ասաց. «Խ՞նչու երկ-  
մտեցար, թերահաւատ»: Յետոյ երկուսն էլ նաւը մօսն,  
և իսկոյն հողմը հանդարտուեցաւ»:

### 39. ՀԻՆԳ ՀԱՅՈՎ ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՄԱՐԴ ԿԵ- ՐԱԿՐԵԼԸ:

Ցով. Զ. 11—7.

Այէկ անգամ Քրիստոս ժողովըդին քարոզում էր, և  
քարոզութիւնը մինչև երեկոյ տեսեց: Այս տեսնելով աշա-  
կերտներն ասացին. «Տէր, այստեղ անապատ տեղ է և  
ժամանակը անցել է. ժողովըդին արձակիր, որ գիւղը եր-  
թան և իւրեանց համար կերակուր գնեն»: Քրիստոս  
հարցրեց նոցա. «Նայեցէք, տեսէք. քանի՞ հաց ունիք»:  
Աշակերտները պատասխանեցին թէ. «այստեղ մէկ տղայ  
կայ, որ հինգ հաց և երկու ձուկն ունի, բայց այն ի՞նչ-

պէս պիտի բաւականանայ այս բաղմութեամնը»: Քրիստոս  
հրամայեց որ այն հացերը և ձկները բերեն. առաւ հացը  
և ձուկը, օրհնեց, կտրեց և իւր տշակերաներին տուտ,  
և նոքա կտոր կտոր բաժանեցին ժողովրդեան: Ամէնքը կե-  
րան և կշտացան, յետոյ հացի կտորները հաւաքեցին, ո-  
րով տասներկու զամբիւղ լցուեցաւ: Խսկ ժողովուրդը  
հինգ հազար հոգու չափ էին բաց ՚ի կանանց և տղայոց:  
Նոքա այս հրաշքը տեսնելով, ուզում էին նորան իւրեանց  
աշխարհի վերայ թագաւոր դնել բայց նու թողեցնրանց  
ու գնաց:

**Աղօթք ճաշեց առաջ:**

**Աչք ամենեցուն՝ի**  
**քեզ, Տէր, յուսան և**  
**Դու տաս կերակուր**  
**նոցա՝ի ժամու: Իա-**  
**նաս զձեռն ՚Բո և**  
**լցուցանես զամենե-**  
**սեան բաղրութեամբ**  
**կամօք քովք:**

**Ամենքի աչքերը**  
**դէպի ՚Բեզ են նա-**  
**յում, Տէր Կատուած**  
**մեր, և Դու ես տալիս**  
**նրանց կերակուր ժա-**  
**մանակին: Իաց ես**  
**անում ՚Բո ձեռքը և**  
**լիացնում ես ամէն**  
**արարածներիդ ՚Բո**  
**ողորմութեամբը:**

**Աղօթք ճաշեց յետոյ:**

**Տէր Յիսուս, լցաք**  
**՚ի բարութեանց բոց:** || **Տէր Յիսուս, լիա-**  
**ցանք ՚Բո բարութիւ-**

**Տացուք գոհութիւն**  
**Տեառն Կատուծոյ մե-**  
**քոյ՝ ՚օր և Որդւոյ**  
**և Շոգացն սրբոյ: Լի-**  
**ութիւն սեղանոյս ան-**  
**հատ և աննուազ ա-**  
**րացէ ՚Բրիստոս Կա-**  
**տուած մեր, որ ըզ-**  
**մեզ կերակրեաց, ՚Կր-**  
**մա փառք յաւիտեանս**  
**ամէն:**

**նով: Ուրեմն շնորհա-**  
**կալ լինենք մեր Տէր**  
**Կատուծուց՝ ՚օրից,**  
**Որդուց և սուրբ ՚ո-**  
**գուց: ՚Բրիստոս մեր**  
**Կատուածը որ մեզ**  
**այս կերակուրը տու-**  
**եց, թող անպակաս**  
**անէ այս սեղանի լի-**  
**ութիւնը: ՚Կրան է**  
**վայելում փառքը յա-**  
**ւիտեանս ամէն:**

#### 40. ՔՐԻՍՏՈՍ ԱՅՐԻ ԿՆՈՉ ՈՐԳՈՒՆ ՅԱՐԱՒԹԵՒՆ Է ՏՈՒԽ

Ուէկ անգամ Քրիստոս Նային քաղաքն էր մտնում,  
քաղաքի դրան մօտ տեսաւ որ մէկ երիտասարդ տանում  
էին թաղելու. մեռեալը մի այրի կնոջ միամօր որդի էր:  
Կղձաց զժբաղդ մօր վերայ և ասաց մեռեալին. «Մանուկ  
դու, քեզ եմ հրամայում, վեր կաց!» Ննջեցեալը վերկա-  
ցաւ, նստեց և սկսաւ խօսիլ: Ժողովուրդը փառք էր տա-  
լիս Աստուծուն և ամէն կողմից ասում էին. «Ան մէջ մի  
մէծ մարգարէ յայտնուել է, Աստուած այցելութիւն ա-  
րաւ իւր ժողովրդեան»:

41. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻՆ:

Մատ. Բ. Յ. Առկ. Ե. 18.

Մէկ անդամ Քրիստոս Կափառնայում քաղաքը գնաց և մէկ տուն մտաւ, ուր նորա մօտ այնքան ժողովուրդ հաւաքուեցան, որ դրան մօտն անդամ տեղ չկար: Քրիստոս Աստուածային վարդապետութեամբ քարոզում էր ժողովրդեան: Այն ժամանակ նորա մօտ բերում էին մէկ անդամալուծ, որին չորս մարդ վերցրել էր, բայց ժողովրդի բազմութեան պատճառով անհնար լինելով տուն մոցնել տան կտուրը բարձրացան, և առաստաղը քանդելով անդամալուծը մահչի մէջ դրուած Քրիստոսի առաջ իջուցին: Քրիստոս տեսնելով նոցա հաւատքը, ասաց անդամալուծին: «Ներուած լինին մեղքերդ»: Դպիրները մտածում էին իրենք իրենց մէջ և ասում: «Սա ի՞նչու է հայհոյում: Աստուծուց զատ ովլ կարող է մեղքերի թողութիւն տալ»: Քրիստոս՝ իմանալով նոցա միտքը, հարցրեց նոցա թէ: «Այս երկու խօսքերից ո՞րը աւելի հեշտ է ասելը, ներուած լինին մեղքերդ ասելը, թէ վեր կաց և գնա: Բայց որպէս զի իմանաք, թէ մարդու Որդին իրաւունք ունի աշխարհիս մէջ մեղքերին թողութիւն տալու, քեզ եմ ասում (անդամալուծին), վեր կաց, անկողինդ առեւ տունդ գնա: Հիւանդն իսկոյն վեր կացաւ, առաւ անկողինը և գնաց: Ամէնքն աղաղակում էին. «այսպիսի հրաշալի բան երբէք չենք տեսել»:

42. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԴԻՒԱՀԱՐՆԵՐԻՆ:

Առկ. Ը. 26—39.

Մէկ անդամ Քրիստոս իւր աշակերտների հետ Գերգեսայցոց երկիրը գնաց, որի մօտերը գերեզմանի շատ այրեր (մաղարաներ) կային: Այն այրերի մէջ բնակվում էր մէկ դիւահար, որ ամէնքի սրտի մէջ ահ ու երկիւլ էր ձգել: Նատ անդամ փորձել էին որ նրան կապեն, բայց նա դիւահարութեան կատաղութեան ժամանակ կոտրատում էր շղթաները, քաշվում էր այրի մութ տեղերը, գիշեր ցերեկ աղաղակում էր և քարէ քար խփուելով ինքն իրան վերառում էր: Քրիստոս՝ երբ այնտեղ հասաւ, դիւահարը նորա դիմացը դուրս եկաւ աղաղակերով, «Քրիստոս Որդի Աստուծոյ, զու ինձ հետ ի՞նչ գործ ունիս, աղաշում եմ քեզ՝ ինձ մի չարչարիր»: Քրիստոս հրամայեց չար հոգուն, որ նորա միջից գուրս գայ և հարցրեց. «անունդ ի՞նչ է»: Աստանան դիւահարի բերանով պատախանեց. «անունս Լէզէռմն է, որովհետեւ մենք շատ ենք»: Եւ դեերը սկսան ինդիւլ Քրիստոսից, որ հրաման տայ իրենց խոզերի երամակի մէջ մտնելու: Քրիստոս թոյլ առուաւ նոցա, և իսկոյն բոլոր խոզերը ծովը թափուեցան ու խեղզուեցան: Հովիւները ահ ու ժողով քաղաք փախան, իսկ դիւահարը իւր առողջանալը զգալով, Քրիստոսի առաջ նստաւ և նորա քարոզութիւնները լսում էր:

Մի օր ևս մէկ մարդ բերաւ իւր որդուն Քրիստոսի մօտ, որ դիւահարութիւնից աղատէ, Ցիսուսին չգտնելով, նորա աշակերտներին խնդրեց, որ այն հիւանդին առողջացնեն: Աշակերտները չկարողացան դեխն հալածել: Այն

Թիւտհարի հայրը տեսնելով նորան, ոտքի տակն ընկաւ և առաց. «Ճէր, օգնիր իմ որդուս որ լուսնատութիւն ունի և ստօտիկ հիւսնդանում է, երբեմն կրտակի մէջ է ընկնում և երբեմն ջրի մէջ: Այսպէս ահա ՚ի ծնէ հիւանդ է: Նև նորանքո աշակերտների մօտ բերի, բայց նոքտ չկարողացան առողջացնելը Քրիստոսի մօտ բերին հիւանդին, որ յանկարծ փրփրելով սկսաւ գետին խփուիլ և թաւալիլ իսկ հայրը աղաղակում էր. «Ճէր, խղճա և օդնիր մեզ: Քրիստոս գթալով նորս վերայ, առաց. եթէ հաւատում ես, որ կարող եմ բժշկել, որդիի կըքժկուի: Եւղջ հայրը տրտասուալից աչքերով ասաց, «Ճէր, հաւատում եմ, օդնիր անհաւատութեանս: Այն ժամանակ Քրիստոս ասաց. «չար և խուզովի, քեզ հրտմայում եմ որ դուրս գաս և այսուհետեւ դորա մէջ չմնանես, և մէկէն չար ոգին մանկան միջից դուրս եկաւ: Քրիստոսի տռանձին եղած ժամանակը, աշակերտները հարցրեցին թէ. ամենք ի՞նչու չկարողացանք դեխին հանելը: Քրիստոս նոցա պատասխանեց թէ. «Ճեր չկարողանալու պատճառը ճեր անհաւատութիւնն է, որսվլեսեւ այդ տեսակ դեերը միայն աղօթքով և պահքով են հալածդում:

43. ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է Ի ԴՆԵ ԿՈՒՐԻՆ:

8nψ. B. 1—17.

Քրիստոս Նրուսաղէմի մէջ մէկ անգամ՝ի ծնէ կոյր  
մարդու պատահեցաւ, որ ողորմութիւն էր խնդրում  
Հքէայք այնպիսի կարծիք ունէին թէ մարդուս պատա-

Հած ամենայն դժբաղդութիւնքը իւր մեղքի պատիմն են  
Խսկ եթէ փոքր տղայոց պատահէր դժբաղդութիւնը, կար-  
ծում էին թէ նորա ծնողաց մեղքի պատիմն է: Քրիս-  
տոսի աշակերտներն ևս այն մոքին էին, և տեսնելով՝ ի  
ծնէ կոյր մարգուն, հարցրեցին Քրիստոսին. «Սա իւր,  
թէ ծնողաց մեղքի համար կոյր ծնուած է»: Քրիստոս  
պատասխանեց. «Ո՞չ իւր մեղքի և ոչ իւր ծնողաց մեղքի  
համար է, բայց այն պատճուռով կոյր է ծնուել, որ Աս-  
տուծոյ հրտաշլի գործերը յայտնուին»: Այս տեսելով՝ գետ-  
նի վերայ թքեց, կաւ շինեց և կոյրի աչքերին քսելով,  
հրամայեց որ երթայ Սելովամ աւազանի մեջ լուանայ:  
Կոյրը կատարեց այս հրամանը և աչքերը բացուած, լետ  
զարձու այնտեղից:

#### 44. ՏԱՐՅ ԲՈՐԱՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԵ

Քրիստոս մի գիւղ մտնելով, տասն բորբոների պատահհեցաւ (որ փոխադրական և անբուժելի ցաւ ունեին): Նոցանից ինն հոգի Հքէայ էին, և մինը Սամարացի: Երբ հեռուից աեսան Քրիստոսին, աղաղակեցին. «Վարդապետ, օգնիր մեզ»: Քրիստոս տեսնելով նոցա հաւատքը, առաջ «Գնացէք, ցոյց տուէք ձեր անձը քահանային»: Այս բանս ասաց այն պատճառով, որ Հքէից մէջ օրէնք կար, որ բորբոնեիւնից առողջացող մարդը պէտք է յայտնուէր քահանային և շնորհակալութեան զոհ մատուցանէր: Այս պատճառով բորբոտի քահանայի մօտ երթալը առողջա-

նալու նշան էր: Բորոտները դնացին և ճանապարհին առողջացան: Բայց ինն Հրէայք մոռացան այն բարերարութիւն անողին, և միայն Սամարացին եկաւ Քրիստոսին շնորհակալութիւն մատուցանելու: Քրիստոս իւր աշակերտների առաջև ցոյց տուաւ Սամարացուն և ասաց. «այս Սամարացին, որ աղանդաւոր է համարվում աւելի լաւ է հրէաներից, որ իւրեանց արդարութեան վերայ պարձենում են: Եւ ապա Սամարացուն դառնալով, ասաց. «Է՞ որ տամն հոգի առողջացան, այժմ ինը հոգին ուր են. Ի՞նչու նոքա չվերադարձան փառք տալու Աստուծուն»: Եւ ապա ասաց նորան. «Գնա, հաւատքդ փրկեց քեզ»:

#### 45. ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ:

Քրիստոս ժողովրդեան մէջ քարողած ժամանակ ասում էր, թէ Աստուած այն ողորմած Հայրն է, որ երկրի վերայ հաստատեց իւր արքայութիւնը և իւր մօտ ընդունում է բոլոր ապաշխարող մեղաւորներին: Նաև քարովում էր, թէ ինչպէս կարելի է մանել երինքի արքայութիւնը, թէ ինչպէս պէտք է կատարել Աստուծոյ կամքը, և թէ որչափ պէտք է հոգս անել աշխարհիս բարիքների վերայ: Իրեն համար ասում էր, թէ Աստուծոյ որդին է, և թէ պիտի չարչարուի մարդկանց համար, թէ իւր փոխանակ պիտի ուղարկէ միակիթարիչ Սուրբ Հոգին, և թէ կրկին փառքով պիտի գայ կենդանի և մեռած մարդիկներին դատելու:

Քրիստոս ամենայն տեղ քարողում էր՝ թէ ծովի եղերին, թէ գաշտի մէջ, թէ լեռների ստորոտների մօտ,

թէ մասնաւոր տներում ու ժողովարաններում և նոյն իսկ տաճարի մէջ, երբեմն բացայայտ կերպով էր քարոզում և երբեմն առակներով կամ այլաբանութիւններով: Քրիստոս առակներով այն նպատակով էր խօսում, որ ուսում չունեցող ժողովուրդը լաւ հասկանայ: Ժողովուրդը Քրիստոսի քարոզութիւնները լսելով, զարմանում էին և նորա համար ասում էին թէ. «ոչ մի մարդ սորա նման իմաստութեամբ խօսած չէ:»


#### 46. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒՇՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ:

Մատ. Թ. 10—13. Ղուկ. Ժ. 11—32.

Քրիստոս քարոզում էր, թէ՝ Հայրն Աստուած Ողորմած է, և ուրախութեամբ ընդունում է իրեն դիմող ամենայն ապաշխարող մարդկիներին:

Մէկ անգամ փարիսեցիք հարցրեցին Քրիստոսի աշակերտներից թէ՝ «ի՞նչու ձեր վարդապետը մեղաւոր մարդկանց հետ ուտում է և խմում: Քրիստոս նորանց պատասխանեց թէ. «առողջներին բժիշկ հարկաւոր չէ, այլ հիւանդներին: Նս եկել եմ ոչ թէ արդարներին դէպի ապաշխարութիւն կոչելու, այլ մեղաւորներին»: Քրիստոս ուզելով որ իւր վարդապետութիւնը ժողովուրդը լսե հաօկանայ, անառակ որդու առակը պատմեց նոցա, թէ՝ «մի մարդ երկու որդի ունէր, փոքր որդին իւր հօրիցը ինդրեց հայրական ստացուածքից իրեն ընկած բաժինը, և հօր տանիցը հեռանալով, հեռու աշխարհ գնաց: Այնտեղ վատնեց իւր բոլոր ունեցածը և բոլորովին աղքա-

տութեան մէջ ընկաւ։ Այն աշխարքը սով ընկաւ և ա-  
նառակ որդին իւր աղքատութեան պատճառով մէկի մօտ  
ծառայութեան մտաւ, որ նորա խոզերը արածացնէ։ Սաս-  
տիկ կարօտութեան ժամանակ յիշեց հօր տունը, և միտքը  
դրաւ՝ որ երթայ և իւր հօր մօտ մշակութիւն անէ։ Հայրը  
մեծ ուրախութեամբ ընդունեց նրան իբրև որդի, և այդ  
պատճառով մեծ խնջոյք արաւ։ Այն միջոցին նորա մեծ



որդին դաշտից դարձաւ և երգերի ձայն լսելով տան մէջ,  
հարցրեց թէ. «այս ի՞նչ ուրախութիւն է»։ Պատասխա-  
նեցին թէ. «Եղայրդ եկաւ և հայրդ նորան ողջ և ա-  
ռողջ տեսնելու համար մեծ խնջոյք է պատրաստել»։ Մեծ  
որդին նեղացաւ և չէր ուզում տուն մտնել Հայրը դուրս  
եկաւ որ նրան ներս կանչէ, նա պատասխանեց. «Դու եր-

բէք մի ուշ գոնէ ինձ չտուիր, որ բարեկամներիս հետ  
ուրախանայի, իսկ այդ որդուդ համար մորթեցիր պա-  
րարտ եզը, որ բոլոր ունեցածդ անառակութեամբ վատ-  
նեց»։ Հայրը պատասխանեց նրան. «որդեակ, զու միշտ  
մօտս եօ, և բոլոր ունեցած քոնն է. իսկ այս եղայրդ  
որ մեռած էր, կենդանացաւ, ի՞նչպէս չորախանամ սորա  
վերայ»։ Հայր առելով՝ Աստուած պիտի իմանանք, փոքր  
որդին մեղաւոր մարդն է, մեծ որդին օրինապահն է, որ  
իւր բարի գործերով պարծենում է».

Քրիստոս մեզ իրաւունք տուաւ Աստուծուն մեզ  
Հայր անուանելու. այս պատճառով մենք Աստուծուն ա-  
զօթք անելու ժամանակ նրան երկնաւոր Հայր ենք կո-  
չում, և նրանով յայտնում ենք, թէ նորա հայրական  
խնամքին ապաւինած ենք, և ցանկանում ենք նորա կամքը  
կատարել այնպէս, ինչպէս որ երկնքում հրեշտակները կա-  
տարում են».

Հայր մեր, որ յերկինս ես:

**47. ԳՐԻՍՈՍԻ ԳԱՐՈՁԱՒԹԻՒՆԸ ԹԷ ՄԱՐԴԻԿ  
Ի՞ՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՎԱՐՈՒԻՆ ՈՐ ԱՐԺԱՆԻ ԼԻՆԻՆ  
ԱՍՏՈՒԾՈՑ ՈՐԴԻՔ ԿՈՉՈՒԵԼՈՒ ԳՐԻՍՈՍԸ ՕՐՃ-  
ՆՈՒՄ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ։**

Մատ. Ա. 2—16. 48. Ղոկ. Զ. 20—26. Յոկ. Ժ. 15—17.

Քրիստոս ասաց իւր աշակերտներին թէ՝ «ողբմած  
և կատարեալ եղէք ձեր նրկնաւոր Հօր նման»։

Իւր կեանքի մէջ մի օրինակ տուաւ, որին մարդիկ

պիտի հետեւն, և երանելի (բարեբաղդ, Աստուծոյ արքայութեան արժանի), անուանեց այն մարդկանց որոնք նորա օրինակին են հետեւում: Նա հեզ էր և սրտով խոսնարհ և մարդկանց մեղքի վերայ արտասվում էր: Սրդարու ու ողորմած էր, և սրտով այնպէս մաքուր էր, որ ամեւնեին մեղք չունէր: Ոչ մեկի դէմ թշնամութիւն չունէր: Կային մարդիկ, որ նրան ատում էին և հալածում և մինչև իսկ զըսպարտում էին, բայց նա համբերում էր բոլոր զըսպարտութիւններին և աղօթում էր թշնամինների համար: Քրիստոս ասաց. «Երանի հոգով աղքատներին (այսինքն՝ նոցա, որ իւրեանց պակասութիւնները ձանաչում են և իրենք իրենց մեղաւոր են համարում), որովհետեւ երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժառանգեն: Երանի սպաւորներին, (որ լաջ են լինում և ցաւում են իւրեանց մեղքի համար,) որովհետեւ նոքա պիտի միմիթարուին: Երանի հեզ մարդկանց (որ ոչ իրենք են բարկանում և ոչ ուրիշների բարկանալու պատճառ են լինում), որովհետեւ նոքա պիտի ժառանգեն երկիրը: Երանի նորանց, որոնք արդարութեան համար քաղցած ու ծարաւ են (որ արդարութիւնը այնպէս են սիրում, ինչպէս քաղցած մարդը կերակուրը), որովհետեւ նոքա պիտի կշտանան: Երանի ուղրմութիւն տուող մարդկանց, որովհետեւ նոքա ևս ողորմութիւն պիտի գտնեն: Երանի մաքուր սիրտ ունեցողներին, որովհետեւ նոքա Աստուծուն պիտի տեսնեն: Երանի խաղաղարար մարդկանց (որ իրենք չեն կովում, և աշխատում են ուրիշներին հաշտեցնել), որովհետեւ նոքա Աստուծոյ որդիք պիտի կոչուին: Երանի արդարութեան համար հալածուող մարդկանց, որովհետեւ երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժառանգեն և սիրում էր իմ:

պատճառով ձեր վերայ ամէն ունակ բամբասանք կ'անեն, խնդացէք, ուրախացէք, որովհետեւ երկնքում ձեր վարձքը շատ կրկնի: Դուք էք աշխատրհիս լրյուր, ուրեմն, թող ձեր լրյուր այնպէս լրւաւորէ (այսինքն՝ այնպէս կեանք անցկացրէք) մարդկանց առաջեւ, որ նոքա տեսնեն ձեր բարի գործքերը և իմառք տան ձեր երկնաւոր Հօրը: Քրիստոս ուրիշ մի օրինակ ևս ցոյց տուաւ, որին մենք պիտի հետեւնք երկնքի արքայութեանը համարու: Համար: Նորա մօտ մի անգամ բերին շատ մանուկներ, որ ձեռք գնէ նոցա վերայ և օրհնէ: Քրիստոսի աշակերտները, կարծելով թէ տղայքը անարժան են նորա օրհնութեանը, և որպէս զի նոքա իւրեանց վարդապետին նեղութիւն շտան՝ չէին թողնում, որ տղայքը Քրիստոսին մօտենան: Քրիստոս այս տեսնելով բարկացաւ և ասաց իւր աշակերտներին. «Թողէք այդ մանուկներին և մի արգելէք դոցա ինձ մօտ գալ որովհետեւ դոցա նմաններինն է երկնքի արքայութիւնը: Ճշմարիտն եմ ատում ձեզ, որ ով որ տղայի պէս չէ ընդունիլ երկնքի արքայութիւնը, կարող չէ նորա մէջ մանուկնելու ծետոյ մանուկներին գիրկն առաւ, ձեռքը դրաւ նոցա վերայ և օրհնեց նրանց:»

Մենք ինչպէս Աստուծոյ որդիք, պէտք է աշխատենք Աստուծոյ անունը փառաւորել բայց շատ անգամ չար գործերով Աստուծոյ անունը անպատճում ենք անհաւատ մարդկանց առաջ: Այս պատճառով օգնութիւն ենք խընդրում Աստուծուց որբութեամբ ապրելու համար, այնպէս որ ուրիշ մարդիկ ևս, տեսնելով մեր բարի գործերը, փառք տան մեր Երկնաւոր Հօրը, որի համար էլ ասում ենք աղօթելով. «Սուրբ Եղիշէ անուն բոյ»:

**48. ԳՐԻՍՈՍԻ ԺԱՐՅԱՅԻԹԻՒՆԸ ԻՒՐ ԱՇԽԱՐՀԻՄ  
ՎԵՐԱ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԹԱԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:**

Մատ. ՓՊ. 4—9. 19—32. 36—48.

Քրիստոս քարօզում էր, թէ իւր թագաւորութիւնը (այսինքն՝ իրեն հաւատացող ժողովուրդը) պիտի տարածուի բոլոր ազգերի մէջ, և մինչեւ վերջին դատաստանի օրը այն թագաւորութեան մէջ արդար և մեղաւոր մարդիկ միասին պէտք է լինին: Քրիստոս թագաւորի հարստնիքի համար պատրաստաւած խնջոյքի առակով սովորեցրեց թէ իւր արքայութիւնը Հրէաներից զատ հեթանոսներն ևս պիտի ժամանգեն — և այօպէս տասաց: «Թագաւորի մէկը ինջոյք պատրաստեց իւր օրդու հարսանիքի համար և շատ մարդիկ հրաւիրեց: Երբ ամէն բան պատրաստ էր, ուղարկեց իւր ծառաներին, որ հրաւիրեալներին կանչեն. բայց նորա չկամեցան գալ և թագաւորի ծառաներից ոմանց ծեծեցին: Թագաւորը բարկանտլով՝ նոցա գէմ զօրք ուղարկեց, իւր ծառաների սպանողներին կոտորեց, այրել տալրի նոցա քաղաքները, և հրամայեց օր ինջոյքի հրաւիրեն բոլոր այն մարդկանց, որոնց կը գանեն քաղաքից դուրս և ձանապարհի վերայ:

Թագաւորն է Աստուած, թագաւորի օրդին է Յիսուս Քրիստոս, քաղաքն է Հրէից թագաւորութիւնը, հարսանիքի հրաւիրեալներն են Արքահամբ սերունդ՝ Հրէաները, թագաւորի ծառաներն են քահանաները և մարդարէները. քաղաքից դուրս և ձանապարհների վերայ եղածներն են հեթանոսները, որ մոլորուած էին կռապաշտութեան և մեղքի մէջ: Այս առակից հասկանում

ենք, թէ Աստուած Հրէից փոխանակ իւր արքայութեան մէջ ընդունեց հեթանոսներին, որոնք իրեն չէին հաւատում:

Սովորեցրեց թէ Աստուածոյ արքայութեան մէջ մինչեւ վերջին դատաստանի օրը մեղաւորներ ևս պիտի ապրին արդարների հետ: Քրիստոս ցորենի և որոմի առակով այսպէս ասաց: «Երկնքի արքայութիւնը նմանում է այն մարդուն, որ արաի մէջ լաւ սերմ սերմանեց, բայց յետոյ նորա մէջ ցորենի հետ որոմն ևս բուսաւ: Ծառայք իւրեանց տիրոջ մօտ եկան և ասացին. «Ճէր, դու լաւ սերմն ցանեցիր, որոմը որտեղից բուսաւ:» Տէրը պատասխանեց. «Ժշնամի մարդու արած բան է այդ». Ծառայքն ասացին. «Ու ուզե՞ս գնանք որոմը քաղենք:» Բայց Տէրը պատասխանեց — «Ո՛չ, չլինի թէ որոմի հետ ցորենն ևս քաղէք, թողէք ցորենի հետ որոմն ևս աճի մեծանայ մինչեւ հնձի ժամանակը: Հնձի ժամանակ հնձողները ցորենը շտեմարանի մէջ կըհաւաքեն, իսկ որոմը կ'այրեն:» Քրիստոս այս առակը իւր աշակերտներին այսպէս բացատրեց. «Բարի սերմն ցանողը — Մարդոյ Որդին է. (Քրիստոս ինքն իրեն անուանում էր որդի մարդոյ). Դաշար — աշխարհս է. Բարի սերմը արքայութեան որդիքն են. որոմը ցանող թշնամին — սասանան է. Հունձը — աշխարհիս վերջն է. իսկ հնձողները — Հրեշտակներն են: Ինչպէս որ հնձից յետոյ որոմը կ'այրեն, այնպէս ևս աշխարհիս վերջը պիտի լինի: Մարդոյ Որդին իւր հրեշտակներին կ'ուղարկէ, որ կըհաւաքեն նորա արքայութեան միջեց այն բոլոր մարդկանց, որոնք անօրէնութիւն են գործել նրանց գեհենի կրակի մէջ կըձգեն, ուր նոքա պիտի լան և ատամները.

կըճտեն։ Իսկ արդարները արեգակի նման երկնքի արքա յութեան մէջ պիտի փայլին։»

Քրիստոս բոլոր իրեն հաւատացողներին ընդունեց իւր երկրիս վերայ հաստատուած արքայութեան մէջ. բայց մէնք շատ անգամ մեր չար գործերի պատճառով այն արքայութիւնից գուրս ենք գալիս, սատանայի ծառայ ենք դառնում և զըկվում ենք Քրիստոսի արքայութիւնից։ Այս պատճառով խնդրում ենք Աստուծուց, որ օգնէ մեղ նորա արքայութեան մէջ միալու և թագաւորի նման մեր վերայ իշխէ, և աղօթելով ասում ենք. «Եկեացէ արքայութիւն»։

#### 49. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԵ Ի՞ՆՉՊԵՍ ՀԱՐԿԱԽՈՐ ԵՆ ՀԱՒԱՏՔ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ։

Մատ. ԺԳ. 4—9. 19—32. 36—43.

Քրիստոսը ուսուցածնում էր, թէ այն մարդը միայն փրկութիւն կրգտնէ, ով որ բոլոր սրտով կընդունի իւր քարոզութիւնը և կըկատարէ, այսինքն՝ նա միայն կրփրկուի, ով որ իրեն կըհաւատայ և իւր հաւատքը ցոյց կըտայ բարի գործերով։ Այս բանը Քրիստոս բացատրեց սերմանացանի և քարի վերայ տուն շինողի առավիներով։ Ասելով թէ՝ «Ահա սերմանացանը դուրս եկաւ սերմանելու, սերմերից ոմանք ճանապարհի վերայ ընկան և պըտուղ ըբերին, որովհետեւ անցնող գործողներից ոտնակոին եղան ու թռչունները նրանց կերան։ Ոմանք քարոտ տեղ ընկան, և արմատ բռնեցին, բայց որովհետեւ արմատը ամրանալու տեղ չունէր, չորացան։ Ոմանք փշերի մէջ ըն-

կան, ծլեցան, բուսան և փշերից խեղդուեցան։ Ոմանք ևս լու հողի վերայ ընկան և առատ պառով տուին։ Սերմանացանը Քրիստոսն է. սերմը—նորա քարոզութիւնն է. հողը—մարդու հոգին է. Ուտի տակ ընկնող սերմերը—կընշանակին անհոգ և անուշադիր մարդկանց հոգիքը. քարոտ հողը—կընշանակէ թեթևամիտ մարդկանց հոգիքը, որ ուրախութեամբ ընդունում են նորա քարոզութիւնը, բայց վտանգ և նեղութիւն հասնելուն պէս մէկն թովնում են նորան։ Փշերով շըջապատուած հողը օրինակ է այն մարդուն, որ զբաղուած է կենսական հոգսերով, որով նորա միջե բարի գործերը խեղդվում են։ Բարի հողն է ուշադիր մարդու հոգին, որ ազատ և հեռու է ունայնութիւններից։ Նա Աստուծոյ խօսքը կ'ընդունէ և իւր բարի գործերին պտուղներ կըբերէ։

Այմէն մարդ, որ ինձ կոչում է Տէր, Տէր, կարող չէ երկնքի արքայութիւնը մանել. բայց նա միայն արքայութեան արժանի կըլինի, ով որ իմ երկնաւոր հօրս կամքը կըկատակէ։ Այն մարդը, որ իմ խօսքերս լսում է և չէ կատարում, նման է այն անմիտ մարդուն, որ իւր տունը շինեց աւագե վերայ. (այսինքն՝ առանց ամուր հիմքի)։ Անձրև եկաւ, գետերը դուրս եկան ափերից, քամին փշեց և տունը քանդուեցաւ։ Իսկ այն մարդը, որ իմ խօսքերս լսում է և կատարում, նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վերայ շինեց, և ոչ քամին և ոչ ջուրը չկարողացան նորան կործանելու։

Աստուծոյ երկրաւոր արքայութեան մէջ ապրելու և մեռնելուց յետոյ նորա երկնաւոր արքայութիւնը մտնելու համար պէտք է հնազանդուինք Աստուծոյ կամքին։ Այս պատճառով խնդրում ենք Աստուծուց, որ օգնէ մեղ կա-

տարել իւր սուրբ կամքը այնպէս, ինչպէս որ հրեշտակները կատարում են երկնքում, և ասում ենք. «Եշեցն էտէ, որդո՞ւ յերիշն և յըրդի»:

### 50. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԳԼԽԱԿՈՐ ՊԱ- ՏՈՒՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Մատ. 16. 35—40. է. 12.

Օրէնսդէտ մարդու մէկը հարցից Քրիստոսից թէ՝ «Օրէնքի մէջ ամենամեծ պատուիրանը ո՞րն է»: Քրիստոս պատօսիսնեց. «Սիրիր քո Տէր Սատուծուն բոլոր հոգովդ, բոլոր սրտովդ և բոլոր մաքովդ: Ահա սա է մեծ և առաջին պատուիրանը: Երկրորդն ևս սորս նման է. Սիրիր ընկերոջդ քո անձիդ պէս: Այս երկու պատուիրանքի վերաց հաստատուած են բոլոր օրէնքները և մարդարէութիւնները: (Հրէայք օրէնք էին անուանում Մովսիսի դըրքերը, իսկ մարդարէութիւն անուանում էին միւս մարդարէների զրուածքները):

Մէկ անգամ ևս ասաց. «Ինչպէս որ ուզում էք, որ մարդիկ ձեզ հետ վարուին, այնպէս և դուք նոցա հետ վարուեցէք, որովհետեւ այս իսկ են օրէնքները և մարդարէութիւնները»: Ուրեմն Սատուծուն և ընկերներին սիրելու մէջ պարունակիում են բոլոր օրէնքները:

### 51. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԹԷ ՈՎ Է ՄԵՐ ԲԱՐԵԿԱՍՄԸ:

Ա այցելա զա մատուցած պատճեն բանական արձան յագուի քաղուի ժ. 29—37. Մատ. Ե. 43—48.

Օրէնսդէտ մարդու մէկը հարցրեց Քրիստոսից թէ՝

«Ո՞վ է իմ ընկերս: Քրիստոս այն խօսքին պատասխանելով, ողորմած Սամարացու առակը պատմեց թէ. «Մարդու մէկը գնում էր երուսաղէմից երիքով. Ճանապարհին նորան վերայ, աւազակներ յարձակուեցան, ծեծեցին նորան, կողոպտեցին և կիսամեռ ձեցին գնացին: Պատահեցաւ որ այն Ճանապարհի մօտով անցկացաւ մի քահանայ, նա թէև տեսաւ այն դժբաղդ մարդուն, բայց առանց նրան օգնելու անցկացաւ գնաց: Նոյն Ճանապարհով անցկացաւ մի Աւտացի, նա ևս նոյն կերպով վարուեցաւ: Յետոյ անցնում էր մի Սամարացի: Սա տեսնելով այն վերաւորեալ մարդուն, նորա վերքերը փաթաթեց, իւր իշխ վերայ զրաւ, պանդոկը տարաւ, և պանդոկից հեռանալու ժամանակ՝ պանդոկապետին փող տուեց ու խնդրեց որ հոգս ունենայ հիւանդի վերայ, և ասաց. «Եթէ աւելի ծախք անես, յետ դառնալուս ժամանակ կը վճարեմ քեզ:» Ուրեմն այն երեք մարդկանց միջեց վերաւորեալ մարդու ընկերն ով էր, հարցրեց Քրիստոս: Օրէնսդէտը պատօսիսնեց. «Ի հարկէ նա, որ օգնեց նրան: Քրիստոս ասաց. «ուրեմն գնա, և դու այնպէս արած: (այսինքն՝ օգնիր ամենայն կարօտեալներին, և մի որոշեր թէ նա քո ընկերն է, թէ օտար:)

•Քրիստոս սովորեցնելով թէ՝ ի՞նչպէս պէտք է վարուինք մեր թշնամիների հետ, որ մեզ չար են կամենում, ասաց. «Սիրեցէք ձեր թշնամիներին, բարի արէք ձեզ ատողներին և աղօթք արէք նոցա համար, որ ձեզ նեղացնում են և հալածում, այս կերպով ձեր նրինաւոր հօր որդի կը լինիք, որովհետեւ նա իւր արեգակը ծագում է արդարների և մեղաօրների վերայ և անձրել ու զարկում է չար և բարի մարդկանց համար:

## 52. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԵՐԴՄԱՆ ՎԵՐԱՅ:

Մատ. ն. 33—37.

Որէնսգէտները ուղղութեամբ քարոզում էին, թէ երդում պէտք է կատարել Բայց ասում էին թէ երդումը երկու տեսակ է. մէկը գլխաւոր և միւսը աննշան. կարծում էին, թէ աննշան երդումը կարելի է զանց առնել առանց մեզքի մէջ ընկնելու: Քրիստոս քարոզում էր. «Հին ժամանակուայ մարդկանց պատուիրած էր թէ՝ սուս երդումն մի՛ անիր, այլ կատարիր երդումի Աստուծոյ առաջ. Բայց ես ասում եմ ձեզ, ամեննեին երդումն մի՛ անէք, ոչ երկնքով, որովհետեւ Աստուծոյ աթոռն է, ոչ երկրով, որովհետեւ Աստուծոյ ոտքի պատուանդանն է. ոչ երուսաղէմով, որովհետեւ մեծ թագաւորի քաղաք է, և ոչ իսկ գլխավոր, որովհետեւ մազերիցդ մինն անդամ չես կարծղ սպիտակացնել կամ սևացնել: Բայց ձեր խօսքն թողլինի այսն—այն, և ոչն—ոչ, որբանից աւելին չարիցն է. (այսինքն՝ սովորական խօսակցութեան մէջ երդումն մի՛ անէք, այլ միայն խիստ հարկաւոր եղած տեղը):»

## 53. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ՝ ԹԷ Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏ Է ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼ ՇԱԲԱԹ ԵՒ ՏՕՆ ՕՐԵՐԵ:

Մատ. Գ. 1—5. Մատ. Ժ. 1—8.

Քրիստոս քարոզում էր, թէ տօն օրերը պէտք չէ պարապ անցկացնել այլ պէտք է բարեգործութիւն անել: Զատկի տօնին երուսաղէմ եկաւ: Այնտեղ տաճարի մօտ մէկ աւագան կար, ուր տանում էին զոհի կենդանի-

ները լուսնալու: Համար: Աստուծոյ հրեշտակը ժամանակ ժամանակ այն աւագանը իջնելով ջուրը խառնում էր. և ով որ աւածին անդամ խառնուած ջրի մէջ էր մտնում, առողջանում էր հիւանդութիւնից: Այս պատճառով աւագանի մօտ միշտ շատ հիւանդներ կային պարկած, և նոյն համար հինգ սրահ կար շնորհած: Քրիստոս մի շաբաթ օր այնտեղ մտաւ, անդամալոյն մարդուն մօտեցաւ, որ 38 տարի հիւանդ էր և հարցրեց նրան. «կամենում ե՞ս առողջանալը: Հիւանդը պատասխանեց. «այո՛, Տէ՛ր, բայց մարդ չունիմ, որ ջուրը խառնուած ժամանակը ինձ աւագանի մէջ ձգէ, և ես գեր չմօտեցած՝ որիշը ինձանից առաջ ջուրն է մտնում», Քրիստոս ասաց. «վեր կաց, անկողինդ առ և զնան: Հիւանդն իսկոյն վերկացաւ, անկողինն առաւ և Աստուծուն փառք տալով զնաց: Այս բանը մի շաբաթ օր պատահեցաւ. ուստի Հրէից ծերերը հալածում էին Քրիստոսին, և մինչեւ անդամ կամենում էին նորան սպանել այն պատճառով, որ նա շաբաթ օրերը հրաշքներ էր գործում: Այն միջոցին Քրիստոս տաճարը դնաց, առողջացած մարդուն պատահեցաւ և ասաց. «ահա գու առողջացար, զնա այլ ևս մի մեղանէքր, որ նորէն չհիւանդանաս»:

Մէկ շաբաթ օր էլ կրկին Քրիստոս ժողովարանումն էր. այն տեղ տեսաւ ձեռքը չորացած մի մարդու և ասաց նորան. «գորս արի, մէջ տեղը կանգնիր: Բազմութեան միջից մէկը հարցրեց. «մի՞թէ կարելի է շաբաթ օրը բժշկութիւն անելը: Այն ժամանակ Յիսուս դարձաւ հարցրեց ժողովրեան թէ. «շաբաթ օրը բարի՞ գործ պէտք է անել, թէ չար գործ. կեանք աղատել պէտք է, թէ կորցնելը: Ամէնքը լոեցին: Քրիստոս շարունակեց, ա-

սելով. «Եթէ ձեզանից մէկի ոչխարը փոսի մէջ ընկած լինի, մի՞թէ չի ազատիլ նորան։ Իսկ մարդը ոչխարից որքան աւելի գերազանց է։ Ուրեմն, շաբաթ օրը կարելի է բարի գործ անել։»

Ուրիշ անգամ ևս դարձեալ շաբաթ օրը Քրիստոսիւր աշակերտներով արտի միջից անց էր կենում։ Աշակերտները ճանապարհին ցորենի հասկեր էին քաղում, ափերի մէջ շփում էին և ուտում։ Փարիսեցիք Քրիստոսին ասացին. «տես, աշակերտներդ շաբաթ օրը արդելուած բան են անումն։ Քրիստոս պատասխանեց նոցա. «ապա ի՞նչու քահանաները շաբաթը խանգարում են տաճարի մէջ զոհ մատուցմանելու ժամանակ։ Նաբաթը ստեղծուած է մարդու համար և ոչ թէ մարդը շաբաթի համար։» Ուրեմն տօն օրերին ևս կարելի է հասարակ օրերի գործն անել, եթէ շատ հարկաւոր լինի,

#### 54. ՔՐԻՍՏՈՍԻ ԺԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ, ԱՅՍԻՆՔՆ ՈՂՈՐԾՈՒԹԵԱՆ, ՊԱՀՔԻ, ԱՂԹՔԻ ԵՒ ԼՈՒԱՅՄԱՆ ՎԵՐԱՅ։

Մատ. 9, 1—7. Ղոկ. մԲ, 9—14.

Հրէից օրէնսդէտները սաստիկ խստութեամբ պահանջում էին ողորմութիւն, պահք, աղօթք և լուացումբն, Բայց այս ամէն բանը անում էին միայն ՚ի ցոյց մարդկան, որպէս զի ուրիշները տեսնեն նոցա արածները և իրենց փառաւորեն։ Քրիստոս որ քարոզում էր, թէ բարեգործութիւնը այն ժամանակ միայն Աստուծուն ընդունելի և փրկարար է, երբ այն կատարում ենք ոչ թէ

մարդիկներից վարձ ստանալու յուսով, այլ Աստուծուն և ընկերոջ սիրելու մտքով, ասաց թէ «Երբ ողորմութիւն ես անում, յայսնի կերպով մի անիր, ինչպէս որ կեղծաւորներն անում են այն նպատակով, որ մարդիկներից փառաւորուին։ Իսկ դու երբ որ ողորմութիւն ես տալիս, թող ձախ ձեռքդ չիմանայ, թէ ոջդ լինչ է անում, որ քո ողորմութիւնը ծածուկ լինի. և Հայրդ, երբ կըտեսնէ քո ծածուկ ողորմութիւնը, քեզ յայտնապէս կըհատուցանէ։ Նմանապէս երբ պահք էք պահում, կեղծաւորների պէս տրտմած մի լինիք, որ երեսները տիրեցնում են, որպէս զի մարդիկներին երեխն իբրև պահեցող։ Իսկ դու, երբ պահք ես պահում, օծիր զլուխդ և երեսդ լուա, որ մարդիկ չտեսնեն քո պահքը, այլքո երկնաւոր Հայրդ միայն գիտենայ։ Եւ աղօթք անելու ժամանակդ կեղծաւորների պէս մի լինիր, որ ժողովարանների մէջ և փողցների անկիւններումը սիրում են աղօթք անել որպէս զի մարդկանց երեխն։ Իսկ դու աղօթք անելու ժամանակդ սենեակդ մտիր, դուռդ փակիր և աղօթք արածորդ. և Հայրդ տեսնելով քո ծածուկ աղօթքը, քեզ կըհատուցանէ յայտնապէս։ Աղօթք անելու ժամանակ հեթանոսների պէս շատախօսութիւն մի անէք, որովհետեւ նորա այնպէս են համարում, թէ շատախօսութեամբ լսելի կըլինին իւրեանց աղօթքները։ Քրիստոս ասում էր նաև, թէ աղօթքը այն ժամանակ զօրաւոր կըլինի, երբ խոնարհութեամբ և հաստատ յուսով է լինում։ Այս բանը բացատրեց նա անիրաւ դատաւորի և մաքսաւորի ու փարիսեցու առակներով։ Նախ ասաց թէ. «Ենդրիցէք և կառնէք, դուոր բաղխեցէք և կըբացուի»։ Յետոյ ասաց, «Մէկ քաղաքի մէջ մի դատաւոր կար, որ ոչ Աստուծուց

Եր վախենում և ոչ մարդիկներից էր ամաչում; Նոյն քառակի մէջ բնակվում էր մի խեղջ այրի կին ևս, որ շատ անդամ իւր գործի համար գնում էր դատաւորի մօտ: Վերջապէս դատաւորը մասձեց ինքն իրեն և ասաց. «այս կինը ինձ հանգստութիւն չէ տալիս, ազատեմ սորան, որ



այլ ևս չգայ և ինձ չճանձրացնէ:» Ասում էք արդեօք թէ ի՞նչ է ասում այն անիրաւ դատաւորը: Հաւատացէք որ Աստուած աւելի շուտով ձեզ կ'օգնէ: Խօսքը առաջ տանելով, ասաց. «Մէկ անդամ մի փարիսեցի և մի մաքսաւոր տաճարը մտան աղօթք անելու: Փարիսեցին հպարտութեամբ ասում էր. «Հնորհակալ եմ քեզանից, Ա'ստուած իմ, որ ես ուրիշ մարդկանց նման չեմ, և կամ այս մաքսաւորի նման: Նաբաթը երկու օր պահք եմ պահչում, և

իմ աշխատանքի տաներորդ մասը քեզ եմ ընծայում: Այն միջոցին մաքսաւորը հեռու կանգնած, չէր համարձակվում աչքերը գետի երկինք բարձրացնել այլ անդադար իւր կուրծքը ծեծելով, ասում էր. «Տէր Աստուած, ողորմի՛ր ինձ մեղաւորիս: Ճշմարիան եմ ասում ձեզ, որ մաքսաւորը արդարացած իւր առնը գնաց, իսկ միւսը՝ ոչ:»

Հրեց օրէնսդետները խստիւ պահանջում էին լուացումն. ով որ չէր կատարում, մեղաւոր էր համարվում և Աստուծոյ արքայութիւնը մտնելու անարժուն: Քրիստոս այս աւանդութեան ծուռ լինելով տեսնելով, հերքում էր այն, ասելով. «լսեցէք և հասկացէք, բերան մտած բանը մարդուն չէ պղծում, այլ բերանից դուրս եկած բաները, այսինքն՝ չար մտքերը, սպանութիւնները, շնութիւնները, սուտ վկայութիւնները և հայհոյութիւններն են, որ պղծում են մարդուն: Իսկ ամեռայ ձեռքով հաց ուտելը երեք չի պղծիլ մարդուն:»

### 55. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԴԵՄ ԳՈՐԾՈՒԱԾ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ

Մատ. Ե. 21-28. Ժ. 6-7. Է. 1-5.

Քրիստոս քարոզում էր, թէ որ և իցէ ծանր խօսքով վեցերորդ սպասուիրանին հակառակ կրգործուի: Հին ժամանակը ասուեցաւ, թէ «մի սպանիր, ով որ սպանութիւն անէ, դատաստանին պարտական կըլինի: Իսկ ես կ'ասեմ ձեզ, թէ ով զուր տեղը իւր եղօր վերայ կըրարկանայ, նա ևս դատաստանին պարտական կըմնայ: Ով որ իւր եղօրը մորոս (այսինքն՝ անխելք) կ'ասէ, նա

ևս դատաստանին պարտական կը մնայ, և ով որ եղբօրը  
յիմար կ'ասէ, կը դատապարտուի գեհենի կրակին:

Քրիստոս քարոզում էր, թէ ուրիշի տան վերայ  
աչք ունենալը հակառակ է եօթներորդ պատուիրանին:  
«Դուք լսելք, որ հին ժամանակն ասուեցաւ՝ մէ շնար, իսկ  
ես կ'ասեմ ձեզ, թէ ով որ վատ մոքով մէկի վերայ կը-  
նայի, նա արդէն շնութիւն գործած կը լինի իւր սրտի  
մէջ:»

Ուրիշներին դայթակղեցնողների համար ասաց Քրիս-  
տոս. «Ով որ ինձ հաւատացող այս փոքրերից մէկին (այս-  
ինքն՝ մանուկներին, տկարամիաներին և առհասարակ տր-  
դէտ մարդկանց) կը մոլորեցնէ, նորա համար աւելի լաւ է,  
եթէ ջրաղացի քարը վեզը կապէին և ծովը ձգէին: Վայ-  
այն մարդուն, որի ձեռքով աշխարհի մէջ մոլորութիւն է  
մանում:» Քրիստոս ուրիշներին դատելու մասին ասաց «Ոչ  
ոքին մի՛ դատէք, որ դուք ևս չդատուիք, որովհետեւ  
ինչպէս որ դուք ուրիշներին դատում էք, նորա ևս նոյն  
ձեռվ ձեզ կը դատուն, և ինչ չափով որ ուրիշների համար  
չափում էք, նոյն չափով ևս նորա ձեզ կը վերադարձնեն:  
Ի՞նչպէս եղբօրդ աչքի մէջ եղած շիւղը նկատում ես, և  
չես զգում, թէ քո աչքիդ մէջ գերան կայ: Կամ ի՞նչպէս  
կը համարձակուիս ասել եղբօրդ. «Եղբայր, թող աչքիդ  
միջի շիւղը հանեմ», երբ քո աչքիդ մէջ գերան կայ: Կեղ-  
ծաւոր, առաջ քո աչքիդ միջեց գերանը հանիր, յետոյ  
աշխատիր եղբօրդ աչքի միջեց շիւղը հանել:

**56. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԷ ՄԱՐԴ  
ՈՐԳԱՆ ՀՈԳՍ ՊԻՏԻ ՔԱՅԵ ԿԵՐԱԿՐԻ ԵՒ ՀԱ-  
ԳՈՒՍՏԻ ՀԱՄԱՐ:**

Մատ. 9, 25—34.

Քրիստոս քարոզում էր. «Մի հոգայք թէ ինչ պի-  
տի ուտէք, կամ ինչ պիտի խմէք: Նայեցէք երկնքի թը ու-  
չուններին. նորա ոչ ցանում են, ոչ հնձում են և ոչ  
հաւաքում շտեմարանների մէջ, և ձեր հայրը կերակրում  
է նրանց: Միթէ դուք նոցանից գերազանց չէք: Հագուս-  
տի համար ևս ի՞նչու էք հոգս քաշում: Նայեցէք դաշ-  
տի շուշանին, թէ ի՞նչպէս աճում է, որ ոչ աշխատում  
է և ոչ մանում: Հաւատացնում եմ ձեզ, որ Սողոմոնն ան-  
գամ իւր բոլոր փառքի մէջ չհագաւ այն խոտերից մինի  
նման: Առաջ Աստուծոյ արքայութիւնը և նորա արդա-  
րութիւնը ինդը եցէք, և այն ամենայն առաւելութեամբ  
կը արտուի ձեզ. (այսինքն՝ աշխատեցէք լինել արդար և  
զորմած, այն ժամանակ Աստուծած ձեզ առանուապէս կրտայ  
ձեր կենսական պիտոյքը): Այսպէս ևս հոգս մի՛ քաշէք  
վայրուան համար (այսինքն՝ այսօրուան անելու դործերէ  
վայրուան մի՛ ձգէք, այսօր իսկ արէք և բոլորվին նորա  
վերայ հոգացէք, վաղուան համար մասածութեան մէջ  
չընկնելով): Իւրաքանչիւր օրուայ համար բաւական է  
այն օրուայ տառապանքը:»

Քրիստոս քարոզում էր, թէ ողորմածն Աստուծած  
մեր կեանքը պահպաններւ ամէն պիտոյից համար հոգս է  
քաշում և մեր ամենօրուան հացը տալիս է մեզ: Այս  
պատճառով մենք դիմում ենք դէպի Աստուծած այս խընդ-  
րուածով. «Ճնշյ մեր հանուպաշրջը որոր և եղ այսը»:

**57. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԵՇ ԻՆՉՊԵ  
ՊԵՏք Է ՆԱՅԵԼ ՀԱՐՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ:**

Ղուկ. ԺԲ, 15—21. ԺԶ, 13. Մատ. ԺԹ, 16—24. Մար. Ժ, 17—27.

Քրիստոս Աստուածային բերանովը ուսուցանում էր, թէ մարդ հարսւստ լինելով բաղդաւոր չի լինի, և թէ հարսութեան սէր ունենալը արգելք է լինում երկնքի արքայութիւն մանելու։

Քրիստոս ասում էր, «Անկարելի է երկու տիրոջ ծառայել՝ այսինքն Աստուծոյ և մամնայի (փողի)։ Զգուշացէք ագահութիւնից, որովհետեւ մարդը շատ ստացուածք ունենալով չէ ապրում աշխարհիս վերայ։ Եւ այս առակս ասաց. «Մարդու մէկին արտերը լաւ բերք տուին։ Ի՞նքն իրեն մտածում էր, թէ ի՞նչ անեմ, տեղ չունիմ ցորեններս հաւաքելու համար։ Կրքանդեմ շտեմարաններս և նոր աւելի մէծերը կրշենեմ, այնտեղ կըհաւաքեմ ցորեններս և ամենայն բարիքս և ես կ'ասեմ ինձ։ — շատ տարինների համար բարիք ունիս հաւաքած, այժմ հանգիստ եղիք, կեր, խմիր և ուրախացիք։ — Աստուած տեսանելով նորա ամբարտաւանութիւնը, ասաց. «անմիտ, այս գիշեր հոգիդ կ'առնեն, ո՞ւմ պիտի մնայ բոլոր պատրաստածներդ»։

Այս պատճի տակ ընկնում է այն մարդը, որ գանձ է հաւաքում միայն իւր անձի համար, և չէ հարսանում Աստուծով (այսինքն՝ չէ ժողովում այն բանը, որ Աստուծոյ առաջ հարսաւութիւն է համարվում)։

Մէկ անգամ Քրիստոսին մօտեցաւ Հրեից իշխաններից մէկը և հարցրեց. «վարդապետ բարի, ի՞նչ պէտք է

անեմի, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»։ Քրիստոս պատասխանեց նրան. «Եթէ կամենում ես յաւիտենական կեանքը ժառանգել պատուիրանները պահպահուիրանները»։ Քրիստոս պատասխանեց. «մի սպանիր, մի շնար, մի գողանար, մի տուտ վկայիր, պատուիր քո հօրդ ու մօրդ, և սիրելի ընկերոջդ, ինչպէս քո անձդ ես սիրում»։ Երիտասարդն ասաց. «Ճէր, այդ բոլորը կատարել եմ մանկութեան ժամանակիցս, այլ ևս ի՞նչ պակաս է ինձ»։ Քրիստոս ասաց. «մի բան պակաս է քեզ գնա, ինչ որ ունիս ծախիր և աղքաններին բաժանիր, երկնքումը գանձ կ'ունենաս»։ Երիտասարդը տըրտմեցաւ և գնաց, որովհետեւ չէր կամենում հարստութիւնից զըկուիլ Յետոյ ասաց Քրիստոս իւր մօտ եղողներին. «Ո՞րքան գժուար է հարսաւութեան վերայ յոյս զնողների համար։ Երկնքի արքայութիւնը մտնել։ Ուղտին աւելի հեշտ է անցկենալ ասեղի ծակիցը, քան թէ հարուստ մարդուն Աստուծոյ արքայութիւնը մտնել»։

**58. ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՄԵՇ ՊԱՇՏՈՆ-  
ՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԻՒՆԵՐ ՈՐՈՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

(Մէկ անգամ Քրիստոսի սիրելի աշակերտների՝ Յահկովի և Յովհաննէսի մայր Սաղովմէն եկաւ և խնդրեց նրանից որ իւր ժագաւորութեան առաջին տեղումը կարգէ նրանց. որովհետեւ կարծում էր, թէ Քրիստոս աշխարհի թագաւոր պիտի լինի և իւր աշակերտներին աշխարհային պատիւներ պիտի տայ. Բայց Քրիստոս իւր մօտ

կանչեց Յակովը իւ Յովհաննէսին և ասաց. «Ճեր միջից ովզ կամենում է մեծ լինել, ամէնին ծառայ պիտի լինի, որովհէտեւ ես ես եկել եմ ո՛չ թէ ուրիշներին ինձ ծառայեցնելու, այլ ուրիշներին ծառայելու և կեանքս տալու մարդկանց աղատութեան համար»: Աւրիշ անդամ ես ասաց, «ում որ շատ ընդունակութիւն է տրուած, նրանից շատ արդիւնք կըպահանջուի:»

## 59. ՔՐԻՍՏՈՒ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԿԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Մտա. ի՛, 15—21. ի. 24—27.

«Քրիստոս քարոզում էր թէ, պէտք է թագաւորական հարկերը և եկեղեցական տուրքերը վճարել: Մէկ անդամ փարիսեցիք կամենալով խօսքով բռնել Քրիստոսին, կապել և դատաստանի մատնել հարցուցին նորանից թէ՝ «Հարկաւո՞ր է կայսեր տուրք տալ թէ ո՛չ: Այն ժամանակ Հրէտատանին աիրապետում էին հռովմայեցւոց թագաւորները, որ կայսր էին կոչվում: Փարիսեցիք մոտածում էին թէ ութէ սա պատասխանէ թէ՝ Հարկ տալ պէտք է, ժողովուրդը սորան Քրիստոսի տեղ չի ընդունիլ, որովհէտեւ կայսեր Հարկ տալը օրէնքի հակառակ կըհամարուի. իսկ եթէ ասէ թէ՝ Հարկ տալ պէտք չէ, այն ժամանակ նորան, իբրև ժողովուրդեան մոլորեցնող, կայսերը կըմատնենք: Քրիստոս պատասխանեց նոցա. «ո՛վ կեղծաւորներ, ի՞նչու էք ինձ փորձում, ցոյց տուէք ինձ այն դաշեկանը, որով հատուցանում էք Հարկը: Տուին մի դաշեկան: Քրիստոս հարցրեց. «որրա վերայինը ո՞րի պատկերն է կամ գիրը:»

Փարիսեցիք պատասխանեցին. «կայսեր»: Քրիստոս այն ժամանակ ասաց. «ուրեմն զնացէք, կայսեր Հարկը կայսեր տուէք, և Աստուծոյ պատիւը Աստուծուն»: Այստեղոց պարզապէս երևում է, թէ ամենայն մարդ պարտական է ծառայել թագաւորին և Աստուծուն:

(Օրէնքի համեմատ իւրաքանչիւր Հրէայ պարտաւոր էր ամէն տարի տաճարին մի մի մնաս (43 կօպէկ) տուրք տալ: Մէկ անդամ Պետրոսին մօտեցաւ այն Հարկը հաւաքող մարդը և ասաց. «Ճեր վարդապետը չի տալ արդեօք երկդրամեան Հարկը»: Պետրոս պատասխանեց թէ՝ կըտայ: Երբ տուն մտան, Քրիստոս Հարցրեց Պետրոսին. «գու ի՞նչպէս ես կարծում, աշխարհիս թագաւորներն ումի՞ց են Հարկ առնում, իւրեանց որդկերանցից», թէ օտարներից»: Պետրոս պատասխանեց. «օտարներից»: Ուրեմն որդիքն ապատ են, ասաց Քրիստոս. (այսինքն՝ ես իբրև Որդի Աստուծոյ, աղատ եմ այդ Հարկից): Բայց որպէս զի ժողովուրդը չգայթակղուի, զնա ծովը կարծ ձգի՞ր, և առաջին բռնած ձկան բերանը բաց արա՛ և մի սատեր (86 կօպէկ) կրդանես, այն ա՛ռ և տուր իմ և քո փոխանակ: Այսպէս ահա Քրիստոս, որ Հարկ չուալու իրաւունք ունէր, տուեց այն՝ մարդկանց օրինակ տալու Համար:

Աղօթք վասն թագաւորի:

Տէր Աստուած մեր,	Տէր Աստուած մեր,
կեցո՛ զամենաբարե-	կեանք տուր ամենա-
պաշտ թագաւորն և	բարեմլաշտ թագա-

զԿայսրն ամենայն  
Ռուսաց զԵԼԵՔ-  
ԱԾՆԴԻ ՆՎԿՈ-  
ԼԵՅԵՎԻՉԶՆ. զօ-  
րացո՛ զՆա, օգնեա  
զաւակաց և զօրաց  
Նորա՝ պահելով զա-  
մենեաին ՚ի խաղա-  
ղութեան:

Թագաւոր յուսա-  
ցաւ ՚ի Տէր. յողոր-  
մութենէ բարձրելոյն  
նա մի՛ սաստնեսցի.  
ամէն:

Յորին և Կայսրին  
ամենայն Ռուսաց  
-ԵԼԵՔԱԾՆԴԻ  
ՆՎԿՈ-ԼԵՅԵՎԻ-  
ՉՔՆ: Զօրացրու  
Նորան, օգնի՛ր Կյո-  
րա զաւակներին և  
զօրքերին և նոցա-  
ամենքին էլ խաղա-  
ղութեան մէջ պահ-  
պանի՛ր:

Թագաւորը, որ իւր  
յոյմը զնում է Վա-  
սուծոյ վերայ, երեկ  
չի զրկուիլ Նորա ո-  
ղորմութիւնից. ամէն:

## 60. ՔՐԻՍՏՈՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ՄԵՂՃԻ ԹՈՂՈՒ- ԹԵԱՆ ՄԱՍԻՆ:

Մատ. 9, 14—15. Խ. 21—36.

Քրիստոս մեղքի թողութիւնն խոստացաւ միայն այն  
մարդկանց, որոնք իրանք ևս ներում են իւրեանց ընկե-  
րողը: Այսպէս ասաց. «Եթէ դուք ներեկ մարդկանց իւ-  
րեանց մեղքերը, ձեր նրկնաւոր Հայրն ևս ձեզ կըներէ.

Իսկ եթէ դուք չեք ների մարդկանց իւրեանց մեղքերը,  
ձեր Հայրն ևս չի ներիլ ձեր մեղքերը»:  
Պետրոս այս լսելով, հարցրեց. «Տէր, եթէ եղայրս  
իմ գէմ մեղանչէ, քանի՛ անգամ պէտք է ներել նրան:  
Կարելի՛ է մինչև եօթն անգամ ներել:

Քրիստոս ասաց. «ո՛չ թէ եօթն անգամ միայն, այլ  
եօթանասուն անգամ եօթն»: Այս խօսքի վերայ երկու  
պարտապանների առակը պատմեց թէ. «Մէկ թագաւորի  
մօտ բերին մի մարդ, որ նրան պարտական էր 10,000  
քանիքար: Որովհետեւ պարտապանը չէր կարող այն ահա-  
գին պարտքը վճարել թագաւորը խստիւ հրամայեց, որ  
ծախին նրան իւր ընտանիքով և բոլոր ստացուածքովը:  
Պարտապանը ոտքն ընկաւ և աղաջելով ասաց. «Տէր, համ-  
բերի՛ր, ժամանակ առուր ինձ, բոլոր պարտքս կըհատուցա-  
նեմ: Թագաւորը խղճաց վերան և բոլոր պարտքը ներեց:»  
Պարտապանը թագաւորի մօտից գուրս գալով, ընկերներից  
մէկին պատահեցաւ, որ իրեն 100 գահեկան պարտական  
էր, բռնեց նրան և պահանջում էր որ շուտով հատու-  
ցանէ: Պարտապանը ոտքն ընկաւ, աղաջում էր, ասելով:  
«Ի՞՞ր ինչ համբերի՛ր, բոլոր պարտքս կըհատուցանեմ:»  
Բայց նա նորա աղաջանքին չլսեց, և բանտարկել տուաւ:  
Ընկերներն այս պատահմունքը տեսնելով, գնացին պատ-  
մեցին թագաւորին: Այն ժամանակ թագաւորը նրան իւր  
մօտ կանչեց և ասաց. «ո՛վչար ծառայ, ես քո աղաջան-  
քիդ զիջանելով, բոլոր պարտքդ ներեցի, պէտք չէ՞ր, որ  
դու ևս ընկերոջդ ներէիր»: Այս ասելով՝ թագաւորը դա-  
հիճներին կանչեց և հրամայեց, որ այն պարտապանին  
բանտ զնէին, մինչև որ բոլոր պարտքը հատուցանէ: Այս-  
պէս ևս իմ երկնաւոր Հայրս կըվարուի ձեզ հետ, եթէ

ձեզանից իւրաքանչեւրը սրտանց չներէ իւր եղբօր մեղքերը։

**Թռող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք  
թողումք մերոց պարտապանաց։**

## 61. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ:

Դուկ. ԺԱ, 1—4. Մատ. 9, 9—13.

**ՄԵԿ անդամ Քրիստոսի աշակերտներն եկան նորա  
մօտ և աղաւելով ասացին. «ՏԵՇ, սովորելցրու մեզ աղօթք  
անելու։ Քրիստոս ասաց. «ահա այսուհետեւ այսպէս աղօթք  
արէք. Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղեցի անուն քո.՝  
եկեսցէ արքայութիւն քո. եղեցին կամք քո որպէս յեր-  
կինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ  
այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թո-  
ղումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ՝ի փոր-  
ձիւն, այլ փրկեա՛ զմեզ՝ի չարէ։ Զի քո է արքայու-  
թիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն. — Ու  
Հայր մէ՛՝ որ երկնախան ես, սուրբ շինէ ոռ անունու, ոռ իւստիւ-  
շին երկրի վերայ՝ ինչպէս որ շինուած է երկնախանը։ ՄԵՐ ամենու-  
րուած հոյոց տուր մեղ այսօր, և լու՛շ մեր պարտէրը՝ ենչդի՞ն  
որ մէս ևս մեղ պարտ ռանցողաշնչերին լուշնում ենք։ Փռչուածի մէջ  
ևս մէ՛ չգեր մեշ, այլ ամէն շոր բանկց վրէիր մեշ։ Ա.անս ուն լու-  
գաւորութեան, ոյժ, փառք, ամէնն ևս ոռ են յատիտէան. ամէն։  
Ա.յս աղօթքը Տէրունական է ասլում, որովհետեւ մեզ սո-  
վորեցրեց Տէրն մեր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին։  
Ա.յս աղօթքի մէջ Աստուծուն մենք անուանում ենք**

Հայր մէր երինաւոր, որովհետեւ նա իւր ողորմութիւնով մեզ—  
քրիստոնեաներիս—իւր որդիկ անուանեց, սիրում է մեզ  
հօր պէս և պատրաստ է ամէն բանում մեզ օգնելու։ Դէպ'ի  
Աստուծած ուղղած առաջին խնդրուածքն է «Սուրբ եղեցի  
անուն քո.» այսինքն թող քո անունը սուրբ լինի. Այս  
խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուծած մեզ, նորա  
որդւոցս, օգնէ սրբութեամբ ապրել և բարի գործերով  
մարդոց մէջ տարածել նորա անուան փառքը։ Երբերբ  
խնդրուածք. «Եկեսցէ արքայութիւն քո»։ Այսինքն թող  
գայ մեզ համար քո արքայութիւնը։ Ա.յս խօսքերով  
խնդրում ենք Աստուծուց, որ նա օգնէ մեզ՝ լինել ճշմա-  
րիտ հպատակներ նորա արքայութեանը այս երկրիս վե-  
րայ, — լինել քրիստոնեաներ ոչ միայն խօսքով, այլ և գոր-  
ծով։ Երբերբ խնդրուածք. «Եղեցին կամք քո, որպէս յեր-  
կինս և յերկրի» — Ա.յս խօսքերով խնդրում ենք, որ նա  
օգնէ մեզ՝ նորա կամքը կատարել այս երկրիս վերայ այն-  
պէս, ինչպէս երկնքում կատարում են նորա սուրբ հրեշ-  
տակները, և յայտնում ենք միանդաման, որ պատրաստ ենք  
ընդունիլ նորանից այն ամէնը, ինչ որ նա կը բարեհածի  
մեզ տալու։ Չըրբերբ խնդրուածք. «Զհաց մեր հանապա-  
զորդ տուր մեզ այսօր»։ Ա.յս խօսքերով խնդրում ենք, որ  
Աստուծած տայ մեզ ամենօրուայ համար հարկաւոր եղած  
ապրուստը։ Հինգերբը խնդրուածք. «Եւ թող մեզ զպար-  
տիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։  
Ա.յսաեղ պարտքերը իբրև մեղք պէտք է ընդունենք, ո-  
րովհետեւ մենք պարտաւոր ենք Աստուծոյ օրէնքը կատա-  
րել և երբ մեղանըում ենք, ասել է թէ պարտական ենք  
միում Աստուծոյ առաջ։ Ա.յս խօսքերով խնդրում ենք, որ  
Աստուծած ներէ մեզ մեղքերը։ Ա.յս խնդրուածքի հետ

աւելացնում ենք. Ների՞ր մեր մեղքերը, ինչպէս մենք ևս  
ներում ենք մեր զարտապաններին՝ այսինքն այն մարդոց,  
որոնք մեղաւոր են մեր գէմ. ըստ որում Աստուած խոս-  
տացաւ մեղ ներել մեր մեղքերը այն գէպքում միայն,  
երբ մենք ևս մեր կողմից կը ներենք մեր գէմ մեղանչող-  
ներին: Վէցերրտ խնդրուածք. «Եւ մի՛ տանիր զմեղ՝ի  
փորձութիւն». Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած  
հեռացնէ մեղանից փորձանքները, այսինքն կեանքի այն-  
պիսի գէպքերը, որոնք կարող են մեղ գէպ՝ի մեղքը տա-  
նել (ինչպէս կարօտութիւն, վտանգ,), իսկ եթէ կամենում  
է փորձանքներով անդրդուելի պահել մեղ բարութեան մէջ,  
այն ժամանակ ինդրում ենք, որ օգնէ մեղ այն փորձանքնե-  
րին յաղթելու: Եօթներրտ խնդրուածք. «Այլ փրկեա՛ զմեղ  
՝ի չարէն»,» Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած ա-  
զատ պահէ մեղ խորամանկութիւնից, այսինքն հոգեկան  
անմաքրութիւնից, և պաշտպանէ մեղ խորամանկ սատանայի  
գէմ, որը միշտ դայթակղեցնում է մեղ գէպ՝ի չարը: Մեր  
խնդրուածքները վերջացնում ենք Աստուծոյ փառաբանու-  
թեամբ, որով յայտնում ենք նաև մեր շնորհակալութիւնը  
և յոյսը այն մասին, թէ Աստուած կը տայ մեղ մեր խընդ-  
րածք. «Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք  
յաւիտեանսա. այսինքն Տէր, մենք այս ամենայն բարեքը  
նորա համար ենք խնդրում Քեզանից, որ Քեղ է պատ-  
կանում արքայութիւնը, ասել է, թէ Քո արքայական իշ-  
խանութեան ներքոյ է գտնվում այն ամենը, ինչ որ մենք  
խնդրում ենք. դու ունիս ոյժ մեր խնդրածը մեղ տալու  
և Քեղ է պատկանում յաւիտեանական փառքը:»

62. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԹԷ ԻՆՔՆ Է  
ՈՐԴԻ ԱՍՏՈՒՇՈՅ ԷԱԿԻՅ ՀՕՐ:

Մատ. Ժ. 13—17. Յով. Ժ. 22—39.

Քրիստոս իւր չարչարուելուց վեց ամիս առաջ տօնի  
օրերը երուսաղէմ եկաւ: Այնտեղ նորա մօտ եկան Հրէայք  
և ասացին. «մինչև երբ պիտի մտածմանց մէջ թողնես  
մեղ եթէ Քրիստոն ես, ասա՛ մեղ համարձակ:» Քրիստոս  
պատասխանեց նոցա. «այն գործերը, որ ես գործում եմ  
Հօրս անունով, նորա վկայ են ինձ համար: Ես և Հայրս  
մի ենք:» Հրէայք քարեր առին և կամենում էին քար-  
ոնքել նորան: Բայց Քրիստոս ասաց. «Հօրս անունով շատ  
կարի գործեր արի, նոցանից ո՞րի համար կամենում էք  
ինձ քարկոնքել:—Մենք քեզ չենք քարկոնքում բարի  
գործքերիդ համար, այլ Աստուծուն հայցոյելուդ համար.  
որովհետեւ դու մեղ նման մարդ ես, և քեզ Աստուած ես  
անուանում: Այս խօսքի վերայ Քրիստոս պատասխանեց.  
«Եթէ Հօրս գործերը չեմ գործում, ինձ մի՛ հաւատաք, իսկ  
եթէ այնպիսի գործեր եմ գործում, որոնք պարզապէս  
ցոյց են տալիս, թէ Հայրը ինձնում է և ես նրանում, ու-  
րեմն հաւատացէ՛ք այն գործերին:» Հրէայք սաստիկ կա-  
տաղեցան և կրկին քարեր առին նրան քարկոնքելու հա-  
մար, բայց նա նոցանից հեռացաւ:

**63. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ԹԷ ԻՆՔԸ ՊԻՏԻ  
ՉԱՐՉԱՐՈՒԻ ՄԱՐԴԿԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՑԻ ԱՌՆԻ:**

Յով. 6. 13—23. գ, 1—2. 14—15. Մատ. 1, 17—19. Ղուկ.  
Ժ. 31—33.

Քրիստոս Զատկի տօնին Երուսաղէմ գնաց և տառարը մտնելով, այնտեղ շատ անկարգութիւններ տեսաւ։ Տաճարի կառավարիչները թողել էին որ վաճառականները զոհի անասուններ վաճառեն, առևտուր անեն տաճարի մէջ, որ Աստուծուն աղօժք անելու տեղն էր։ Քրիստոս բարկանալով՝ վաճառականներին արտաքսեց և ասաց. Վերցրէք այստեղից այդ բոլորը և հօրս տունը առուտուրի տուն մի՛ շինէք։ Այն ժամանակ տաճարի կառավարիչներն եկան Քրիստոսի մօտ և բարկանալով հարցրին նրանից. «ի՞նչով ես հաստատում, թէ դու իշխանութիւն ունիս այլպէս վարուելու»։ Քրիստոս մարդարէացաւ, որ Հրէից իշխաններն իրեն պիտի նախատեն և սպանեն. ուստի այսպէս պատասխանեց. «այս տաճարը քանդեցէք և ես երեք օրուայ մէջ կըշինեմ.» (այսինքն՝ երբ դուք իմ մարմինս կըսալանէք, որ նման է Աստուծոյ տաճարին, ես երրորդ օրը յարութիւն կ'առնեմ. այն ժամանակ դուք կըտեսնէք որ ես իրաւունք ունիմ այսպէս վարուելու)։ Փոքր ինչ յետոյ մօտն եկաւ Նիկողիմոս Փարիսեցին, որ իմանայթէ նա ինչպէս պիտի մարդկանց աղատէ. Քրիստոս ասաց. «ի՞նչպէս որ Մովսէսը անապատի մէջ օձ բարձրացրեց, այնպէս ես պիտի բարձրանայ Մարդոյ Որդին, որպէս զի նորա հաւատացողները չկորչին, այլ յաւիտենական կեանք ունենան»։

Քրիստոս իւր մահուանից փոքր ինչ առաջ իւր աշակերտներին ուղղակի ասաց. աւհա մենք գնում ենք Երուսաղէմ և Մարդոյ Որդու վերայ մարգարէների գրուածները պիտի կատարուին։ Մարդոյ Որդին պիտի մատնուի քահանայապետների և դպիրների ձեռքը, որոնք նորան՝ի մահ պիտի դատապարտեն. հեթանոսների ձեռքը պիտի մատննն հայհոյելու, ծեծելու և խաչելու համար. —իրեն կըսալաննեն և նա երրորդ օրը յարութիւն կ'առնու»։

**64. ՔՐԻՍՏՈՍԻ ՖԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱ-  
ՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՅ:**

Մատ. 1Բ, 23—33. Յով. 1, 28—29.

Հրէից մէջ Սագուկեցի անունով աղանդաւորներ կային, որոնք մեռելների յարութեան և յաւիտենական կեանքին չէին հաւատում, ասելով թէ՝ Մովսէս սորա վերայ ո՛չինչ չէ ասել։ Քրիստոս ասաց նոցա. «Դուք գըրուածքները չհասկանալով՝ մոլորվում եք։ Այս կեանքի մէջ կին են առնում և մարդու են գնում, իսկ այն կեանքի մէջ ո՛չ կին կ'առնուն և ո՛չ մարդու կ'երթան և ո՛չ իսկ մեռնել կարող են, այլ կ'ապրին այնպէս, ինչպէս որ երկնքումը ապրում են Աստուծոյ հրեշտակները։ Խսկ գալով մեռելների յարութեանը վերայ, մի՞թէ չէք կարգացել Մովսէսի գրքի մէջ, թէ ինչպէս Աստուած խօսեց մորենու միջից և ասաց նորան. «ես եմ Աբրահամու, Խսահակայ և Յակովայ Աստուածը»։ Աստուած մեռելների Աստուած չէ, այլ կենդանիների, որովհետեւ նորա մօտ ամէնքը կենագանի են. (այսինքն՝ նթէ Աբրահամ, Խսահակ և Յա-

կովը յաւիտեանս մեռած լինէին, այն ժամանակ Աստուած ինքն իրեն նոցա Աստուած չէր անուանիլ:

Սեռեների յարութիւնն այն է, որ բոլոր մեռած մարդոց հոգիքը կըմիանան իւրեանց մարմնի հետ և անապական ու անմահ կըլինին: Իսկ այն մարդիկ, որոնք մինչև մեռեների յարութիւնը կ'ապրին, նոյտ ապականացու մարմինները իսկոյն անապական կըդառնան. մեռելների յարութիւն առնելուն սրբս բոլոր աշխարհն ևս կըփոխուի. Նոր երկինք և նոր երկիր կըլինի: Եւ յարութիւնից յետոյ եղած կեանքը յաւիտենական կեանք կըկոչուի:

Սեռեների յարութեանց և յաւիտենական հետոնի վերայ ունեցած հուսառը թշնչ յայդուած էնց այսպէս.

Հաւատամբ ՚ի յարութիւն մեռելոց և  
՚ի կեանսն յաւիտենականս:

~~~~~

65. ԳՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԻՒՄ ԵՐԿՐՈՐԴ  
ԳԱԼՈՒՄ ԵՒ ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱԱՍԱՆԻ ՎԵՐԱՅ:

Մատ. իւ, 31—46.

Սէկ անգամ Քրիստոսի աշակերանները հարցրեցին նրանից. «Վարդապետ, ասա՛ մեզ, ե՞րբ պիտի լինի քո դալուսոր և աշխարհիս վերջը»: Քրիստոս պատասխանեց նոյտա. «այն օրը և ժամը ո՛չ ոք չփխտէ և ո՛չ իսկ հրեշտակները, միայն Հայրս զիտէ: Զգոյշ կացէք, որ ձեր սրտերը չծանրանան որկրամոլութեամբ, արբեցութեամբ և աշ-

խարհային հոգսերով և նայեցէք, որ այն օրը յանկարծ չչամնի ձեր վերայ: Այն ժամանակ երկնքի արքայութիւնը կընմասի տասն կուսանաց, որ լապտերներով փեսային և հարսին ընդ առաջ եկան: Նոցանից հինգը իմաստուն էին, իսկ հինգը յիմար: Յիմարները հեաները ձեմ չառան: Փեսայի գալատեանն սպասելով, կուսանքը ննջեցին: Կէս գիշերին յանկարծ ձայն լսուեցաւ. աւհա փեսան գալիս է, եկէք նորա առաջը: Կուսանքը վերկացան և իւրեանց լսպտեները պատրաստեցին: Այն ժամանակ յիմար կուսանքն ասացին իմաստուններին. ձեր իւղեցը փոքր ինչ մեզ տուէք, որովհետեւ մեր լսպտեները հանգչելու վրայ են: Իմաստունները պատասխանեցին. լսւ է, որ գնաք ձեզ համար գնէք, որովհետեւ եթէ մեր ունեցածիցը ձեզ տանք, ո՛չ մեզ կըբաւէ և ո՛չ ձեզ: Յիմարները գնացին իւղ տոնելու: Այն միջոցին փեսան եկաւ, իմաստուն կուսանքը նորա առաջը գնացին և փեսայի հետ մոտան հարսանիքի տոնը: Երբոր միւս կուսանքն ևս եկան և դուռը փակուած գտան՝ սկսան բաղխել և խնդրում էին, որ բաց անեն. Փեսան պատասխանեց. ես ձեզ չեմ ճանաչում: Ուրեմն արթուն կացէք, որովհետեւ չգիտէք թէ ո՞ր օրը և ո՞ր ժամուն կըգայ Մարգոյ Որդին»: Այս առակի մէջ փեսան է Քրիստոս, կուսանքն են Տարդոց հռգիչը, իւղն ողբանաւենս գործէրն են. հարաանիքի տունն է Երևանի որդութեանը:

«Քրիստոս իւր երկրորդ գալուսոր և գատաստանը այսպէս նկարագրեց. «Երբոր Մարգոյ Որդին իւր փառքով և հրեշտակներով կըգայ, փառքի աթոսի վերայ կընսաի, և նորա առաջեւ կըժողովուին բոլոր ազգերը, իրարից կըքանէ նրանց այնպէս, ինչպէս հովիւր ոչխարներին այծերից

է բաժանում. ոչխարներին իւր աջ կողմը կըկանգնացնէ, իսկ այծերին ձախ կողմը. Եւ թագաւորը կ'ասէ իւր աջակողմը եղողներին. «Եկէ՞ք, իմ հօրիցս օրհնուածներ, և ժառանգեցէ՞ք աշխարհիս սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը: Որովհետեւ ես քաղցած և ծարաւ էի, և դուք ինձ կերակրեցիք և ջուր տուիք: Օտար էի և դուք ընդունեցիք ինձ, մերկ էի և դուք հազցրիք ինձ, հիւանդ և բանափ մէջ էի և ինձ այցելութեան եկաք»: Արդարները պիտի ասեն նրան.—«Տէ՛ր, ե՞ր տեսանք քեզ քաղցած և կերակրեցինք, կամ ծարաւի՛ և ջուր տուինք: Ե՞ր տեսանք քեզ օտար և ընդունեցինք, կամ մերկ և հազցրինք: Ե՞ր տեսանք քեզ հիւանդ կամ բանտարկեալ, և քեզ այցելութեան եկանք:»—Այն ժամանակ թագաւորը պիտի ասէ նոցա. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որովհետեւ իմ փոքր եղայրներիցս մէկին արիք, ինձ արած եղաք»: Յետոյ ձախակողմեաններին կ'ասէ. «Հեռացէ՞ք ինձանից, անիծեալներ, և գնացէք յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի և նորա հետեղների համար: Որովհետեւ քաղցած էի և ինձ չկերակրեցիք, ծարաւ էի՝ ջուր տուիք. օտար էի՝ ինձ չընդունեցիք. մերկ էի՝ չհագցրիք, հիւանդ և բանտարկեալ էի, դուք ինձ այցելութեան չեկաք»: Նոքա պիտի պատասխանեն, թէ,—Տէ՛ր, ե՞ր տեսանք քեզ քաղցած կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ և կամ բանտարկեալ, և չծառայցինք քեզ:—Եւ Քրիստոս պիտի պատասխանէ նոցա. Որովհետեւ իմ փոքր եղայրներիցս մէկին չարիք, ինձ ես չարած եղայրը կ'արդարներին առաջ արդարների հողիքը:

Այնտեղ ուր կըհաւաքուին արդարների հողիքը,

դրախտ և երկնքի արքայութիւն կըկոչուի, իսկ մեղաւորների չարչարանքի տեղը՝ դժոխք:

Մեր հաւատը այն մասին, թէ Քրիստոս վերստին գալու է փառքով, դատելու է բոլոր մարդիկներին և հաստատելու է իւր յաւիտենական թագաւորութիւնը, մենք յայտնում ենք այսպէս:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:—

## 66. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ՎԵՐԱՅ:

Յով. ԺԴ.

Քրիստոս իւր չարչարանքից առաջ աշակերտների հետ խօսելով իւր մահուան մասին, խոստացաւ նոցա ուղարկել իւր տեղը միմիթարիչ Հոգին սուրբ և այս խօսքերով հրաժարական ողջոյն տուաւ նոցա. «Աս ձեզ որբ չեմ թողնիլ այլ կ'աղաւեմ իմ Հօրս, որ ուրիշ միմիթարիչ տայ ձեզ, որ յաւիտեան ձեզ հետ լինի, այն է՝ Հոգին Ճշմարտութեան, որ Հօրիցն է բղխում: Նա ձեզ կըսովորեցնէ ամեն բան, և ձեր միտքը կըձգէ այն ամէն բաները, ինչ որ խօսել եմ ձեզ հետ: Ուրիշ շատ բաներ ունիմ ձեզ հետ խօսելու, բայց այժմ դուք չէք կարող բոլոր ասածներս հասկանալ, երբոր կըդայ Հոգին Ճշմարտութեան, նա

Ճեզ կուսուցանէ ամենայն Ճշմարտութիւն»: Քրիստոս նաև յայտնեց, թէ մարդ կոր կեանք կըստանայ միայն Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ ասելով, թէ՝ «ով որ չե ծնուիլ ջրից և Հոգուց, չէ կարող մտնել երկնքի արքայութիւնը»:

### 67. ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՉԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ:

Մատ. Փէ, 1—8. Ղոկ. Թ, 28—36.

Քրիստոսի աշակերտները գժուարութեամբ էին հաւատում, թէ իրենց վարդապետը, Աստուծոյ Որդին, սկիտի




չարչարուի: Այս պատճառով Քրիստոս կամնալով աւելի հաստատ պահել նոցա հաւատքը, իւր Աստուծածային փառքը ցոյց տուաւ նոցա: Զարչարանքի մասին աշակերտների հետ խօսելուց փոքր ինչ ժամանակ յետոյ, իւր աշակերտներից Պետրոսին, Յակովըսին և Յովհաննէսին առաւ Թարօր լեաւը բարձրացաւ և սկսաւ ազօթք անելը Եւ ահա յանկարծ աշակերտները տեսան որ իւրեանց վարդապետը ըրջապատռած է գերենական լուսով, հանգերձը սպիտակացել էր ձիւնի նման և երեսը լուսաւորուել էր արեգակի նման: Մովսէս և Նղիան հետը խօսում էին նորա Երուսաղէմի մէջ կրելու չարչարանքի և մահուան վերայ: Պետրոս Հիանալով, աղաղակեց, «Վարդապետ, լաւ է որ այստեղ մնանք: Այստեղ երեք վրան կը շնենք. մէկը քեզ, մէկը Մովսէսի և մէկը Նղիայի համար»: Այն ժամանակ մի լուսաւոր ամս իջաւ աշակերտների վերայ և նոքա երկնքից մի ճայն լսեցին. «Դա է իմ սիրելի որդին, որին հաւանեցայ, Դորան լսեցէք: Աշակերտները սարսափեցան և երեսի վրայ գետին ընկան: Քրիստոս կանգնացրեց նրանց և ասաց. առոքի կանգնեցէք, մի վախենաք»: Նոքա իւրեանց գլուխը վերցրին և և տեսան որ Քրիստոս կանգնած էր նոցա առաջ իւր սովորական կերպարանքով:

### 68. ՔՐԻՍՏՈՍԻ ԹՅՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Ղոկ. ԹԱ. 17—57.

Հպարտ վարիսեցիք Քրիստոսի քարոզութեանը չէին

հաւանում. այս պատճառով՝ ատում էին նորան և արհամարհելով մեղադորների բարեկամ էին անուանում և ասում էին թէ նա Աստուծուց ուղարկուած չէ, որովհետև շարաթ օրը սուրբ չէ պահում Խոկ նորա հրաշալի գործերի համար ասում էին իբր թէ սատանայի զօրութեամբ է անում. բայց ժողովուրդը նոյս չսրախօսութիւններին չլսելով՝ բազմութեամբ Քրիստոսին հետեւում էր: Այն ժամանակ փարիսեցիք խորհուրդ արին, որ Քրիստոսին սպանեն:



Զատկի տօնից քանի մի օր առաջ՝ Քրիստոս Երուսաղեմի մօտ գտնուած Բեթանիա գիւղը զնաց, ուր բնակում էր նորա բարեկամ Ղաղարոսը իւր Մարթա և Մարիամ երկու քոյրերի հետ: Ղաղարոս մեռած և չըրս օ-


րից առաջ թաղուած էր, երբ Քրիստոս Բեթանիա գիւղը եկաւ: Քրիստոս նորա գերեզմանը զնաց, հրամայեց, որ քարը վերցնեն և բարձր ճայնով գոչեց. «Ղաղարէ՛, արի՛, ե՛կ արտաքս»: Մեռեալը խկոյն դուրս եկաւ գերեզմանից: Այս հրաշքի վերայ ժողովուրդը զարմացաւ և նոցանից շատերը Քրիստոսին հաւատացին: Երբոր Հրէից ծերերը Երուսաղեմի մէջ լսեցին այս բանս, Խոկոյն հաւաքուեցան, և սկսան մոածել թէ ի՞նչ անեն Քրիստոսին, և ատենի մէջ ասում էին. Այս մարդը շատ հրաշքներ է գործում, եթէ թողնենք, ամենքը կը հաւատան նորան. Հռովմայեցիք ևս կրգան և մեզ կը ջնջեն: Դատարանի նախագահն էր Կայիափայ քահանայապետը, որ խորհուրդ տուաւ թէ. առավելի՛ լաւ է, որ մէկ մարդ մեռնի ժողովը գետն համար, քան թէ ամբողջ ազգը կորչեց: Նորա այս խորհրդին լսեցին և վճռեցին սպանել Քրիստոսին: Խոկոյն հրաման հանեցին թէ «ով որ իմանայ Քրիստոսի ուր լինելը, թող մեզ յայտնէ, որ սպանենք նրան»: Քրիստոս հեռաւոր անապատը քաշուեցաւ:

## 69 ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒԺՔԸ ԵՐՈՒՍԱԼԵՄ

Մատ. ին, 1—11.

Զատկից վեց օր առաջ՝ Քրիստոս Բեթանիա եկաւ, և այնտեղեց դէպի Երուսաղէմ ճանապարհ ընկաւ: Նորա յետեից գնումէր ժողովրդեան խուռն բազմութիւն: Քրիստոս երբ Զիթենեաց լեառը հասաւ, հրամայեց աշակերտներին, որ մերձակայ գիւղից մի աւանակ բերեն: Աշա-

կերտներն աւանակին ծածկեցին իւրեանց հազուսով և Քրիստոսին նորա վերայ նստեցրին։ Նատերը հաւատացին, որ Քրիստոս Դաւթի ցեղեց խոստացեալ փրկին է և սկսան



պատուել նրան։ Ոմանք արմաւենու Ճիւղեր էին կտրում և ճանապարհի վերայ ձգում, ոմանք ևս իւրեանց հազուսներն աւանակի ոորքերի տակն էին տարածում և այս փառաբանական երգը երգում։ «Ովսաննա» (փրկութիւն) Որդոյ Դաւթի. Օրհնեալ եկեալ յանուն Տեառն. Ովսաննա՝ ՚ի բարձունա։ Քաղաք մոնելու ժամանակ ժողովրեան նոր բազմութիւն ևս Քրիստոսի առաջ դուրս եկաւ. և ով որ նորան չէր տեսած, հարցնում էր թէ՝ ո՞վ է սա։ Ժողովուրդը Ղաղարոսի հրաշալի յարութիւնը պատմելով, պատասխանում էր, «Աս՛ է Գալիլեայի նաղա-

քէթ քաղաքից եկած մարդարէն Յիսուս»։ Փարիսեցիք կամնում էին նրան բռնել, բայց ժողովութից վախենում էին։

### 70. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Մատ. իջ, 3—5. 14—16. իջ. 3—5.

Քրիստոսի թշնամիները չկարողացան նրան բռնել ո՛չ երկուշարթի և ո՛չ երեքշարթի օրերը, որովհետեւամ միշտ ըրջապատուած էր լինում ժողովրդեան բազմութեամբ. այս պատճառով փարիսեցիք և գալիլեալ վճռեցին որ տօնից յետոյ բռնեն նրան. երբոր ժողովուրդը նրուսաղէմից հեռանում էր, Քրիստոսի աշակերտներից մէկը Յուդա Խոկարիովացի, Հրէից իշխանների մօտ գնաց, և խոստացաւ, որ երեսուն արծաթով (25 մանէթ 50 կոպէկ) նոցա ձեռքը կըմատնէ իւր վարդապետին։ Յուդան արծաթութեամբ կուրացած այն ամօթալի գործը յանձն առաւ, բայց չհարստացաւ։ Երբ Քրիստոսին ՚ի մահ դատապարտեցին, խղճմտանկըն սկսաւ տանջել նրան, որ այն արդար մարդուն մատնեց։ Նա գնաց քահանայապետների մօտ, ձգեց արծաթը նոցա առաջ, և յուսահատութիւնից ինքն իրան կախեց։


### 71. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐԸ

Յոդ. մԴ, 21—30. Մատ. իջ, 17—30. Մատ. մԴ, 12—26.

Հինգշարթի երեկոյին Քրիստոս տասներկու աշակերտների հետ նրուսաղէմ գնաց, ուր մէկ տան մէջ նորա համար մի վերնատուն էր պատրաստուած Զատկի տօնը կատարելու։

Քրիստոս այն վերնատունը մտաւ, աշակերտների ոորքերը լուաց, յետոյ նոցա հետ սեղան նստաւ զատկական գտոր ուտելու, որով աշակերտների հետ իւր վերջին

Ընթրիքը արաւ: Խօսակցութեան ժամանակ Քրիստոս աշաց նոցա. «Ճշմարիրն եմ ասում ձեզ, որ տաներկուսիցդ մէկը որ իւր պատառը իմ ամանիս մէջ թաթախում է, ինձ պիտի մատնէ»: Աշակերտները սարսափած մէկը միւսի յետեից ասում էին. «մի՛թէ ես եմ:»—«Այո՛, գու ես», ասաց Քրիստոս Յուղային, բայց այնպէս կամաց, որ ո՛չ ոք չլեց. յետոյ մի պատառ ամանի մէջ թաթախելով նորան



տուաւ: Այն պատառի հետ սատանան մտաւ Յուղայի սրտի մէջ, որով նորա խղճմանքը նեղվում էր և չը թողնում որ սուրբ աշակերտների հետ մնայ: Քրիստոս ասաց նրան. «ի՞նչ անելու ես, գնա՛ շուտով արա՛»: Յուղան իսկըն դուրս եկաւ. իմացաւ թէ Քրիստոս ուր պիտի անց կացնէր այն գիշերը, և գնաց խոստացեալ արծաթն ստանալու: Յուղայի դուրս գալու վերայ աշակերտները ուշ-

դրութիւն չդարձրին: Որովհետեւ Յուղան գանձապետ և ծախսարար էր, ուստի կարծեցին թէ կարելի է Քրիստոս հրամայել է նորան մի բան գնել կամ ողորմութիւն բաժանել: Զատկի գառն ուտելուց յետոյ Քրիստոս բաղարջ հացն առաւ, օրհնեց, կտրտեց և աշակերտներին բաժանելով ասաց. «առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս, որ ձեր և մարդոց մեղքի թողութեան համար բաշխվում է:» Այսպէս ահա աշակերտները հացի տեսակով իւրեանց ուսուցչի և Տիրոջ մարմինը ճաշակեցին: Յետոյ բաժակ առաւ և աշակերտներին տալով, ասաց. «խմեցէ՛ք այս տեղից ամենքդ, այս է իմ նոր ուխտի արիւնը, որ ձեր և շատերի մեղքի համար է թափվում: Աշակերտները զինու տեսակով Քրիստոսի արիւնը ճաշակեցին: Յետոյ ասաց. «Ես կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար»: Այսպէս Քրիստոս հաստատեց Հաղորդութեան խորհուրդը: Այնուհետեւ իւր վերջին ողջոյնը տուաւ աշակերտներին և յիշեցրեց նոցա իւր զլսաւոր պատուերը, ասելով. «սիրեցէ՛ք միմեանց այնպէս, ինչպէս ես ձեզ սիրեցի: Եթէ դուք միմեանց սիրեք, ամենքը կ'իմանան, թէ դուք իմ աշակերտներս էք»: Ընթրիքը վերջանալուց յետոյ Զիթենեաց լեռան Գելթսեմանի պարտէզը գնաց:

Աւագ հինգշաբթի օրը, երեկոյեան ժամին, Հայատանեայց եկեղեցին կատարում է սանալուայի կարգը: Եպիսկոպոսը կամ պատուաւոր քահանաներից մէկը զգեստաւորուելով վերցնում է զենծակը (փէշտմալ) և ծունկ իջեալ (չրքած) լուանում է ամենքի սաները՝ մեծերից սկսեալ մինչև փոքրերը: Բայց երբոր զգեստաւորուած եպիսկոպոսը կամ քահանան հանդիսով դուրս է գալս խորանից, այդ միջոցին դպիմները երգում են հետեւեալ շարականը.

Այսօր կանգնեցաւ  
աւազան մըկրտու-  
թեան ՚ի թողութիւն  
մեղաց մերոց:

Այսօր Տէրն մեր  
լուանայր զոտս աշա-  
կերտացն և պատուի-  
րէր զայս՝ ասելով.

Մի ոմն ՚ի ձէնջ,  
եղքարք, մասնելոց է  
զիս ՚ի մահ և որոշե  
յաշակերտացդ:—

Զայն լուեալ Պետ-  
րոսի ակնարկէր առ  
Յովչաննէս հարցա-  
նել թէ ով իցէ:

Հանն, զոր ասաց  
Յիսուս, տրտմեցոյց  
զիւր զաշակերտն և  
խովեցան ամենե-  
քեան:—

Այսօր կանգնեցաւ  
(հաստատուեցաւ) լու-  
ացման աւազան մեր  
մեղքերի թողութեան  
համար:

Այսօր մեր Տէրը  
լուանումէր աշակերտ-  
ների ոտները և նոյնը  
պատուիրելով՝ ա-  
սում էր.

«Եղքա՞րը, ձեզանից  
մէ կը մատնելու է ինձ  
՚ի մահ և աչա նա  
հեռանում է ձեզանից-  
աշակերտներիցդ:»

Երբ այդլեց Պետ-  
րոսը աչք արաւ Յով-  
հաննէսին, որ հարցը-  
նէ, թէ ո՞վ է:


Յիսուսի ասած խօս-  
քը տրտմեցրեց նորա  
աշակերտներին և նո-  
քա ամենը շփոթ-  
ուեցան:

## 72. ՔՐԻՍՏՈՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՎԱՆԱՅԱՊԵՏ- ՆԵՐԻ ԱՏԵԱՆԸ ԴԱՏՈՒԵԼՈՒ:

Մատ. ԽԶ, 47—58. ԽԵ, 1. Դակ. ԽԲ, 66. ԽԳ, 1.

Յուղայ Խոկարիովտացին գիշերը քահանայապետ-  
ների ծառաներին Գեթսեմանի պարտէզը տարաւ. և այն-  
տեղ Քրիստոսին մօտենալով, համբուրեց և ասաց. «Ո՞ղջ  
լե՛ր, Վարդապե՛տ». որով ցոյց տուաւ ծառաներին թէ  
ում պէտք է բռնեն: Երբոր ծառաները սկսան Քրիստոսին  
կապել Պետրոսը կամեցաւ իւր վարդապետին պաշտպանել  
հանեց սուրը և կտրեց քահանայապետի ծառայի ականջը:  
Յիսուս ասաց նրան. «Թուրդ պատենի մէջ զի՞ր, ո՞վ որ  
թուր վերցնէ, թրով կըմեռնի: Մի՞թէ կարծում ես,  
թէ ես չեմ կարող Հօրից ինդրել որ տաներկու գնդից  
աւելի հրեշտակ ուղարկէ: Յետոյ մօտեցաւ Մազքոսին և  
առողջացրեց նորա ականջը: Ծառաները կապեցին Քրիս-  
տոսին և Կայիափայ քահանայապետի տունը տարան: Այն  
տեղ ժողով կազմեցին Հրէից ծերերը, որ ըստ տեղւոյն և  
ըստ ժամանակին հակառակ էր օրինաց. (որովհետեւ ժո-  
ղովը պիտի կազմուէր ցերեկ ժամանակ, տաճարի մէջ):  
Քրիստոսի դէմ դուրս եկան շատ սուտ վկաներ, բայց նո-  
քա չկարողացան մի այնակիսի բան ասել որով կարելի  
լինէր Քրիստոսին ՚ի մահ զատապարտել: Այն ժամանակ  
Կայիափան հալցրեց նրան—թէ. «Երդուեցնում եմ քեզ  
կենդանի Աստուծոյ անոււամբ, ասա՛ մեզ, գո՞ւ ես Աստուծոյ  
Որդին Քրիստոսը: Քրիստոս պատասխանեց. «Այո՛, ես եմ,  
և ասում եմ ձեզ թէ՝ այսուհետեւ պիտի տեսնէք Մարդու  
Որդուն նստած Հօր աջ կողմը, որ պիտի դայ երկնքի ամ-

պերի վերայից Կայիշափան պատառեց իւր հանդերձը և աղաղակեց. «այլ ևս վկաներ ի՞նչ հարկաւոր են մեզ. արդէն լսեցինք սորա հայհոյութիւնը. ի՞նչ կ'ասէք»: Ծերերի ժողովը, լի դժոխային չարութեամբ, աղաղակեց՝ ամհու արժանի՛ է»: Յետոյ Կայիշափայից հեռացան, իսկ Քրիստոս դուրսը մնաց քահանայապետների ծառաների



մէջ: Ծառաներն սկսան նրան ծաղը և յետոյ այն ծաղը գանահարութեան փոխեցին: Ոմանք ասլում էին խփում Քրիստոսին և երեսին թքում: շատերը ևս փակում էին նորա աչքերը և երեսին խփելով ասում էին. «իմացի՛ր, Քրիստոս մարդարէ, ո՞վ էր քեզ խփողը»: Իսկ Քրիստոս համբերութեամբ լուսում էր:

Որ և իցէ յանցաւորի վերջնական վճիռը տալով համար, ըստ օրինի, ծերերի ժողովը երեք օրից յետոյ երկրորդ անդամ պիտի հաւաքուէր, բայց այն անգամ երեք չորս ժամ միայն սպասեցին, և առաւոաը նորից Կայիշափայի մօտ հաւաքուեցան և Քրիստոսին ևս այնտեղ բերին: Կայիշափան հարցրեց նրանից. «Դու ես Աստուծո Որդին»: Քրիստոս պատասխանեց.—Այո՛: Այն ժամանակ նրան մահուան արժանի գատապարտեցին. այն պատճառով միայն, որ նա ինքն իրան անուանեց Աստուծոյ Որդի:

### 73. ՔՐԻՍՏՈՍ ՊՈՆՏԱՑԻ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ:

Յով. ԺՅ, 28—40. ԺԹ, 1—16. Մատ. Խէ, 1—31.

Քրիստոսի ժամանակ Հրէայք Հռովմայեցւոց իշխանութեան տակն էին, և կառավարվում էին Պոնտացի Պիղատոսի ձեռքով, որ Հրէից դատաւոր էր համարվում. այս պատճառով ծերերը չէին կարող Քրիստոսին մեռցնել այլ պարտական էին Պիղատոսի մօտ տանել նորան: Ուրբաթ օրը վաղ առաւօտեան նոքա Քրիստոսին դատաւորի մօտ տարան: Նրբ դատաւորը հարցրեց թէ. ի՞նչու էք դատապարտում այս մարդուն, նոքա պատասխանեցին. «Սա մորեցնում է ժողովրդին և արգելում է կայսեր հարկ տալ և ինքն իրեն թագաւոր է անուանում»: Պիղատոս առանձին հարց ու փորձ անելով Քրիստոսին, դուրս եկաւ և ասաց. «Ես այս մարդու վերայ յանցանք չեմ գտնում»: Ծերերը աւելի շարախօսիլ սկսան Քրիստոսի վերայ: Պիղատոսը չգիտէր՝ թէ ինչ անէ: Հրէից մէջ սովորութիւն կար, որ Զատկի տօնին աղատում էին որ և իցէ մահապարտի: Այս պատճառով Պիղատոս հարցրեց ժողովրդեան. «Ո՞ւ մի

էք կամլնում, որ արձակեմ, Բարաբբայի՛ն, թէ Յիսուսին,  
որ Քրիստոս է կոչվում: Բարաբբան աւաղակ էր: Ֆողովուր-  
դը ծերերից զրդուած լինելով, աղաղակեց. «Արձակի՛ր Բա-  
րաբբային»: Պիղատոսը հարցրեց. «Հապա ի՛նչ անեմ այս  
մարդուն, որին դուք Հրէից թագաւոր էք անուանում»  
Ժողովրդեան միջից աղաղակեցին. օխաչ հանի՛ր գորան: Պիղա-  
տոսն ասաց. «Ես մահուան արժանի ո՛չինչ չեմ գըտ-  
նում սորանում, ծեծելով կը խրատեմ և կ'արձակեմ»: Պիղա-  
տոսի հրամանով Քրիստոսին գանեցին: Հռովմայեցւոց զի-  
նուորները՝ Քրիստոսին մորակով ծեծելուց յետոյ, սկսան  
ծաղըել նորան: Ծիրանի պատմուճանը ձգեցին վերան,  
(կարմրագոյն կարձ հանդերձ), գլուխը փշեայ պսակ դրին,  
և թագաւորական գաւաղանի տեղ ձեռքը մի եղէդ տուին.  
յետոյ ծունր դնելով նորա առաջեւ ասում էին. ողջ լե՛ր,  
արքայդ Հրէից: Երեսին թքում էին և եղէգեայ գաւա-  
ղանովը զիսին խփում: Պիղատոսը այս կերպով Քրիստոսին  
ժողովրդի առաջ դուրս բերաւ, կարծելով թէ՝ Հրէյք  
կը խղճան նորա վերայ, որ անմեղ տեղը չարչարվում էր.  
բայց քարասիրտ ժողովուրդը կրկին աղաղակեց. «Խաչեր  
դորան: Իսկ եթէ թող կը տաս, կայսեր բարեկամ չես:»  
Պիղատոսը տեսնելով, որ ո՛չ մէկ բան օգուտ չունի և ժո-  
ղովրդեան մէջ խռովութիւնը առաւել սաստկանում է,  
ջուր առաւ և ձեռքերը լրանալով, ասաց. «Ես այդ ար-  
դար մարդու արիւնից քաւեալ եմ: Ֆողովուրդն աղա-  
ղակեց. «Դորա արիւնը մեր և մեր որդւոց վերայ թող  
լինի»: Այն ժամանակ Պիղատոս զիջաւ Հրէից պահանջ-  
ման, և գատապարտելով Քրիստոսին, նոցա ձեռքը տուաւ,  
որ խաչեն:

74. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱԶԻ ՎԵՐԱ ՉԱՐՉԱՐՈՒԻԼԸ ԵՒ  
ՄԱՀԸ:


Մատ. Ի. 31—54. Ղոկ. ԻԳ, 26—48. Յոկ. 16—30.

Զինուորները Քրիստոսին կառափելու՝ այսինքն՝ գըլ-  
խատման տեղը տարան, որ Եբրայեցերէն Գողգոթայ էր  
ասվում. այստեղ խաչեցին նրան և նորա աջակողմը և  
ձախակողմը խաչեցին երկու աւաղակներ: Դլիի վերելը  
խաչի վերայ մի տախտակ դրին, որի վերայ գրուած էր.  
«Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից»: Երբոր Քրիստոսին  
խաչում էին, նա աղօթք էր անում իւր չարչարողների  
համար, ասելով. «Հայր, ների՛ր սոցա, որովհետեւ չգիտեն  
թէ՝ ինչ են անում:

Քրիստոսի թշնամիները խաչի վերայ անդամ հան-  
գիստ չեն թողնում նրան. այլ ծաղրածութեամբ ասում  
էին. «Եթէ Աստուծոյ Որդի ես դու, փրկի՛ր քեզ և խաչեցդ  
իջի՛ր, որ քեզ հաւատանք»: Զինուորներն ևս հետեւում  
էին նոցա: Մինչև անդամ խաչուած աւաղակներից մէկն ևս  
ծաղըելով ասաց Քրիստոսին. «Եթէ դու Քրիստոսն ես, քեզ  
և մեզ աղատի՛ր»: Բայց միւս աւաղակը պատասխանեց  
նրան. «Աստուծուց չե՞ս վախենում, չէ՞ որ դու ևս նոյն  
պատժի մէջ ես: Մենք յիրաւի գատապարտուած ենք,  
բայց Սա ո՛չինչ չարութիւն չէ արել: Այս ասելով, աղօթ-  
քով դարձաւ դէպի Քրիստոս և ասաց. «Տէ՛ր, յիշեր ինձ,  
երբոր դաս քո արքայութեամբդ», — «Ճշմարիտն եմ ասում  
քեզ այսօր ինձ հետ պիտի լինիս դրախտի մէջ»: պա-  
տասխանեց Քրիստոսը:

Յերեկուան վեցերորդ (մեր հաշուով) երկոտասանե-

բորբ) ժամին երկրիս երեսը խաւար պատեց, այնպէս որ  
աստղեր երևեցան: Ծաղըածութիւնները դադարեցան, և  
շատերը վախենալով, խաչելութեան տեղից հեռացան:   
Քրիստոսի խաչի մօտ մնացին Տիրամայրը, Յովհաննէս ա-  
ռաքեալը և քանի մի Դալելիացի կանայք:



Քրիստոս տեսաւ իւր մօրը և Յովհաննէսի վերայ  
ցոյց տալով ասաց. «ահա քո որդին»: յետոյ նայեց իւր  
սիրելի աշակերտին և ասաց նրան. «ահա քո մայրը»:

ինն ժամի մօտ (մեր հաշուով երրորդ ժամին զկնի ձաշու)   
Քրիստոս աղաղակեց. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր  
թողեր զիս: Քանի մի րոպէից յետոյ ասաց. «Ճարաւի  
եմ»: Զինուորներից մէկը սպունգը թաթախեց քացախի  
մէջ, եղեգի ծայրն անցկացրեց և նորա բերանին մօտե-  
ցրեց: Քրիստոս քացախը ընդունելով ասաց. «ամենայն ինչ  
կատարեալ է. Հայր, իմ հոգիս Քո ձեռքդ եմ աւանդում:»  
Յետոյ գլուխը խոնարհեցրեց և հոգին աւանդեց: Այս-  
պէս ահա Գրկիչը իւր անձը վոհելով մարդկանց մեղքի  
համար, մեղ հաշուցրեց Աստուծոյ հետ: Այն ժամանակ  
արեգակը խաւարեցաւ, վտրագոյրը, որով Սրբութիւն  
Սրբոցը բաժանվում էր տաճարի միւս մասնից, երկու  
կտոր պատառուեցաւ, գետինը այնպէս շարժուեցաւ, որ  
քարերը պատառուեցան, և շատ մեռեալներ յարութիւն  
առան և գերեղաններից դուրս եկան: Այն հարիւրա-  
պետը, որ խաչի մօտ կանգնած էր, ասաց. «յիրաւի այս  
մարդը Աստուծոյ Որդի և արդար էր: Ժողովուրդը զար-  
հուրելով և կուրծքը բաղիւրով խոչի մօտից հեռացաւ:

**Խաչի քո Քրիստոս Երկիրապահնեմք.**  
և զսուրը խաչելութիւնդ քո մեծացուցա-  
նեմք և զսուրը թաղումնդ քո փառաւո-  
րեմք: Եկայք, հաւատացեալք, երկրապահն-  
ցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի  
եկն՝ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պար-

գեւա աշխարհի: Առորք Կատուած. սուրբ և  
Հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն  
մեր, ողջորմեա մեզ: —

### 75. ԹԱՂՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՒԻ:

Յով. մթ. 31—42. Մատ. իշ. 57—61. Ղուկ, իդ. 50—56.

Որովհետեւ Զատկի տօնի Նաւակատիքը Ռւրբաթ օրն  
էր, այս պատճառով հրէից ծերերը չկամեցան խաչուած-  
ներին խաչի վերայ թողնել ուստի խնդրեցին Պիղատոսից,  
որ հրաման տայ՝ նոցա սրունքները կոտրտել որ շուտով  
մեռնին: Պիղատոսի հրամանով զինուորները Դողգոթա-  
եկան և կոտրտեցին աւազակների սրունքները, բայց երբ  
եկան Քրիստոսի մօտ, տեսան, որ նա արդէն վախճան-  
ուած էր, այս պատճառով նորա սրունքները չկոտրտեցին:  
Միայն նոցանից մինը տէգով նորա կողը վերաւորեց, և  
վերքից արիւն և ջուր վազեց: Նոյն գիշերը Պիղատոսի  
մօտ գնաց ծերակուտի անդամներից մէկը, Յովսէփի Արե-  
մաթացին, և խնդրեց, որ հրաման տայ իրեն՝ Քրիստոսի  
մարմինը խաչեց իջեցնել և թաղել: Պիղատոս կատարեց  
նորա խնդիրը: Այն ժամանակ Յովսէփի թաղման պաստա-  
ռակալը բերաւ, և Քրիստոսի ծածուկ աշակերտ Նիկո-  
դիմոսն ևս խունկ և հալուէ բերաւ. Քրիստոսի մարմինը  
խաչեց իջուցին, անուշահոտ իւղերով օծեցին, պաստա-  
ռակալով պատեցին և Դողգոթայի մօտ եղած Յովսէփի  
պարտեզի մէջ մի նոր փորուած այրի մէջ թաղեցին, որը

Յովսէփի շինել էր իւր համար, իսկ այրի դուռը մի մէծ  
և ծանր քարով ծածկեցին: Այս բանս տեսան քանի մի  
Գալիլիացի կանայք, որոնք նկատելով, թէ շտապելու պատ-  
ճառով թաղման բոլոր ծէսերը չկատարուեցան, քաղաք  
գնացին, և անուշահոտ խունկեր և իւղեր պատրաստեցին  
որ երթան Քրիստոսի մարմինն օծեն:

Մէր հաւատու առ այն, թէ Քրիստոս մէր Աւազ համար  
չարչարուեցան, իսաշունեցան և Լաւառեցան, մէնտ այսուում էնք  
այսպէս.

### Չարչարեալ, Խաչեալ, Թաղեալ:

### 76. ՔՐԻՍՏՈՒԻ ԴԺՈՒՏ ԻԶՆԵԼԸ:

Մատ. իշ. 62—66.

Կաբաթ առաւօտեան Քրիստոսի թշնամիները, այս-  
ինքն՝ քահանայապեաները, Պիղատոսի մօտ գնացին և ա-  
սացին թէ. «այն մոլորեցուցիչը ասում էր, թէ երեք օ-  
րից յետոյ յարութիւն պիտի առնու, ուստի հրամայիր  
գերեզմանը պահպանել որ աշակերտները չգողանան մար-  
մինը և ժողովրդեան չասեն թէ՝ նա յարութիւն առաւ:»

Պիղատոս հրաման տուաւ նոցա և նոքա գերեզմանի  
վերայ պահպաններ դրին, գերեզմանի կափարիչ մէծ  
քարն ևս կնքեցին:

Երբ Քրիստոսի մարմինը գերեզմանի մէջ էր, նորա  
մարդկային հօգին, որ Աստուածութեան հետ միաւո-  
րուած էր միշտ, այն տեղը գնաց, ուր էին բոլոր մեռեալ


մարդոց հոգիքը: Տեղը դժոխք է կոչվում, որովհետև մեզաւոր մարդոց հոգիները Աստուծուց հեռացած լինելով այն տեղ էին գտնվում: Դժոխքի մեջ շատ հոգիներ ևս կային, որ ապագայ Փրկչին հաւատալով՝ անհամբեր սրբառվ նորա գալստեանը սպասում էին, և Փրկչի գալստեան յուսով միխթարիլում էին: Քրիստոս դժոխքը իջնելով, երբ քարոզեց իւր գալուստը, այն արդարների հոգիները իսկոց հաւատացին նրան: Դժոխքը քանդուեցաւ նոցա համար և նոքա արքայութիւն մոտան: Հաւատացող աւաղակի հոգին ևս արքայութիւն գնաց:

### 77. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Մատ. ի. 1—15. Մարկ. թ. 2. 1—8. Ղուկ. ի. 1—8. Յով. ի. 1—2.

Կարաթ գիշերը գերեզմանի մօտ կարգուած պահապանները յանկարծ շարժ զգացին և սպիտակ ու փայլուն հանդերձով մի հրեշտակ տեսան, որ եկաւ գերեզմանի քարը գլորեց և վերան նստաւ: Այս բանից զարհութելով, գողացով, գնացին և պատմեցին քահանայապետներին այն պատահմունքը: Քահանայապետները պահապաններին կաշառք տալով՝ խրատեցին նրանց, որ տսեն թէ՝ «գիշերը մեր քնած ժամանակը Քրիստոսի աշակերտներն եկան և նորա մարմինը գողացան»: Նոյն ժամանակ Գալիլիացի կանայք՝ Մարիամ Մագդաղենացի, Մարիամ Յակովեան, Սաղովմէն և ուրիշ կանայք՝ ի միասին Քրիստոսի գերեզմանն էին գնում, որ նորա մարմինը իւղով օծեն: Նոքա տեղեակ չէին այն պատահած անցքին, և չգիտէին անգամ թէ գերեզմանի մօտ պահապաններ դրուած էին: Այդին մըտ-

նելով, տեսան որ քարը գլորուած էր: Մարիամ Մագդաղենացին քաղաք վաղեց և ասաց աշակերտներին. «Տիրոջս հանել են գերեզմանից և չգիտեմ թէ ուր են դրել նորան»:



Այսու նւղարեր կանայք այրին մօտեցան և հրեշտակներին տեսան, որոնք նոցա ասացին. «Նազովրեցին Յիսուս յարեաւ ՚ի մեռելոց»: Նոքա քաղաք գարձան աշակերտների մօտ և պատմեցին նոցա, ինչ որ տեսան, բայց աշակերտները նոցա չէին հաւատում:

Քրիստոսի յարութեան օրը մենք աւելի շքեղութեամբ ենք տօնում, քան թէ միւս օրերը, որովհետեւ Քրիստոս իւր յարութիւնով շատ պարզ ցցց տուեց իւր Աստուածութիւնը և հաւասարի արեց մեզ, որ մենք ևս յարութիւն կ'առնունք: Այս տօնը մենք անուանում ենք գլուխ անապահ տօնից: Սա կոչվում է Զատիկի կամ Պատէք, որովհետեւ օրինակ է Հրէական Պատէքի: Բացի սորանից Քրիստոսի յարութեան յիշատակին մենք նուիրում ենք ամէն եօթնեկի առաջին օրը զինի շաբաթու և ասում ենք — Կի-բաէէ:

Քրիստոնէ յարութեան վերայ ռանեցած մէր հաւատը յայտնում էնք այսպէս.

### Յերլորդ աւուր յարուցեալ:

Իսէ մէր հաւատը մեսեւոշերի յարութեան մասին, մէսէ յայտնում էնք այսպէս.

### Հաւատամք 'ի յարութիւն մեռելոց:


Յարութեան ժամանակ.

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարզեեաց, նմա փառք յաւիտեանս ամէն:

### 78. ԵՐԵՒՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Դուկ. ԷԴ. 8—48. Յով. Ի. ԻԱ. Մատ. Խ. 16—20.

Լոյս կիւրակէ Քրիստոսը Յովսէփի պարտիզի մէջ Մարիամ Մագդաղենացւոյն երեւցաւ: Յետոյ իւր երկու աշակերտներին ձանապարհորդակից եղաւ մինչև Նմմառու գիւղը. իսկ երեկոյին Երուսաղէմի մէջ երեւցաւ բոլոր աշակերտներին Թովմասից զատ, որ այնտեղ չէր: Բայց մէկ



շաբաթ յետոյ, երբ Թովմաս ևս աշակերտների հետ էր, դարձեալ երեւցաւ: Զատկի տօնից յետոյ Քրիստոսի աշակերտները Երուսաղէմից Գալիլիայ գնացին, և այնտեղ Գալիլիացւոց ծովի եզերքի մօտ իւրեանց վարդապետին տեսան: Գալիլիայի լեռներից մէկի վերայ հինգ հարիւրից

աւելի մարդկանց երևեցաւ: Բացի սորանից երևեցաւ նաև  
Պետրոսին և Յակովոսին:


Այսպէս ահաքառասուն օրուայ մէջ աշակերտները  
քանի մի անգամ տեսան յարուցեալ Քրիստոսին: Այն  
ժամանակ Քրիստոս հաւատացրեց նոցա, թէ ինքն իսկա-  
պէս յարութիւն առաւ մեռելներից. ցոյց էր տալիս նոցա  
իւր վէրքերը և նոցա հետ կերակուր էր ուտում. բայց  
աշակերտները նկատում էին, որ նորա մարմինը առաջ-  
ուան նման չէր, որովհետեւ գոները փակ ժամանակ ևս  
երեսում էր իրենց: Աշակերտները տարակուսած էին նորա  
չարչարանքի և մահուան վերայ: Այս պատճառով Քրիս-  
տոս իւր աշակերտներին երեսում էր իւր յարութիւնից  
յետոյ, յիշեցնում էր նոցա, թէ այն մարդարէութիւն-  
ների համեմատ պիտի չարչարուէր նա և իւր փառքը  
պիտի մտնէր:

## 79. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ:

Դուկ. ին. 49—53. Գրծ. ա. 4—14.

Քրիստոսի յարութիւնից քառասուն օր յետոյ ա-  
շակերտները մի տան մէջ հաւաքուեցան: Քրիստոս այն-  
տեղ երևեցաւ նոցա և ասաց. «Ես կուղարկեմ ձեզ իմ  
Հօրս խոստացած Սուրբ Հոգին. իսկ դուք նրուսաղէմի  
մէջ մնացէք, մինչև որ ՚ի վերուստ զօրութիւն առնաւք»:  
Յովհաննէսը ջրով էր մլրտում, իսկ քանի մի օրից յետոյ  
Հոգով Սրբով պիտի մլրտուիք:» Աշակերտներն ուրախացան  
և ասացին Քրիստոսին. «Տէր, նոյն ժամանակին պիտի նո-  
րոգես նորայէլացոց թագաւորութիւնը»: Քրիստոս պա-

տասխանեց թէ. «Ձեզ հարկաւոր չէ գիտենալ այն ժա-  
մանակները, որ Հայր Աստուած սահմանել է: Բայց դուք  
զօրութիւն կառնուք, երբոր Հոգին Սուրբ ձեզ վերայ  
կ'իջնէ, և բոլոր աշխարհիս երեսին դուք ինձ համար վկայ



Կըլնիք:» Յետոյ Քրիստոս նոցա հետ Բեթանիա գիւղը  
գնաց և Զիթենեաց լերան վերայ կանգնելով օրհնեց նը-  
րանց, և նոցա աշքերի առաջ երկինքը համբարձաւ և  
Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ. (այսինքն՝ իւր հարդիւ-  
լէտիքն ևս Աստուծոյին էտու և պատիւ աստու):

Աշակերտները ապշած դէպի երկինք էին նայում,  
մինչև որ տեսան երկու հրեշտակ, որոնք նոցա ասացին.  
Ժ՞նչ էք կանգնել և դէպի երկինք էք նայում: Այս Յի-  
սուսը, որ համբարձաւ, դարձեալ պիտի գայ այնպէս, ինչ-  
պէս տեսանք նորա համբառնալը դէպի երկինք»: Առա-  
քեալք մեծ ուրախութեամբ լցուած, երուսաղէմ դարձան:

**Ս**եր հուառը Քըհսորոսի համբարչման և նորա երիրորդ գո-  
ւառութեան հոսկն մէնք յայտնում էնք այսպէս.

Ելեալ յերկինս նովին մարմնովն՝ նըս-  
տաւ ընդ աջմէ չօր: Գալոց է նովին մարմ-  
նովն և փառօք չօր 'ի դատիլ զկենդանիս  
և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ  
գոյ վախճան:

### 80. ԱՌԱՋԵԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՅ:

Մատ. Ժ. 1—8. Իէ. 18—20. Մրկ. Զ. 12—13. Դոկ. Ե. 13—16.  
Ցով. Ի. 21—23.

Քրիստոս համբառնալուց յետոյ աշխարհիս մէջ  
թողեց իւր աշակերտներին, որոց անուանեց առաջեալ, որ  
կընշանակէ ուղարկուած: Նոքա տաճաներկու հոգի ընտ-  
րուած էին, բայց մինը, Յուղա Խսկարիովացին, Քրիս-  
տոսի մատնիչն եղաւ: Միւս առաքեալների անունները սո-  
քա են. Ալման, որին Քրիստոս Պէտրոս անուանեց, նորա  
եղայր Անտրէասը, Յակովը և Յովհաննէս Զերեղիայի որդիիը,

Փէլիպոսը, Նալեանայէլը որ Բարդուշիմոս ևս կոչուեցաւ.  
Թամասը, Մատթէոս մաքսաւորը, Յակովը Ալփիայի որդին,  
Տեառն եղայրն Յուղա և Շմառն, որ նախանձայոյզ էր  
կոչվում: Սոքա ամէնքը հասարակ ժողովրդեան դասից էին  
և մեծ մասը Գալիլեացի ձկնորսներ:


Քրիստոս դեռ աշխարհիս վերայ եղած ժամանակ  
քարոզելու ուղարկեց նրանց, և իշխանութիւն տուաւ նո-  
ցա, որ իւր անունով բժշկութիւններ անեն: Այն ժամա-  
նակ շատ տկարներին իւղով էին օծում և նոքա բժշկվում  
էին: Քրիստոս իւր համբառնալուց առաջ նոցա երեելով,  
ասաց. «Գեացէք բոլոր աշխարհ, քարոզեցէք աւետարանը  
ամենայն արարածոց, մկրտեցէք նրանց յանուն Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա՝ պահէլ այն ա-  
մէն բաները, ինչ որ ես ձեզ պատուիրեցի: Ով որ կըհա-  
ւատայ և կըմկրտուի, ֆրկութեան կըհանի. իսկ ով որ  
չի հաւատալ, կըդատապարտուի: Եւ աչա ես ձեզ հետ  
եմ մինչև աշխարհիս վերջը: Առէք Հոգին Սուրբը, որոնց  
մեղքերը որ ներէք, ներուած լինի նոցա, և որոնց որ  
չներէք՝ նոքա իւրեանց մեղքի մէջ մնան»: Այսպէս աչա  
Քրիստոս իրաւունք տուաւ առաքեալներին, որ քարոզեն,  
մկրտեն, մեղքերի թողութիւն տան, և հիւմնդներ բժըշ-  
կեն, նոյնպէս հրամայեց նոցա որ արթուն կենան, որ ի-  
րեն հաւատացողները ծշդիւ կատարեն իւր պատուիրանները:

### 1. ԳԱԼՈՒՍ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՋԵԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՅ:

Գրձ. Բ. 1—41.

Քրիստոսի համբառնալուց յետոյ աշակերտները ն-

րուսակամում մնացին, ուր վերնատան մէջ հաւաքուեցան և ժամանակը անց էին կացնում աղօթքով, Սուրբ Հաղորդութեան խորհուրդը կատարելով և անդադար մխիթարիչն Սուրբ Հոգոյն սպասելով Պէտքէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալներ մի տան մէջ հաւաքուեցան: Ցերեկուան երրորդ ժամին (ըստ մեր հաշւոյն առաւտեան ինն ժամին) յանկարծ մի մեծ շարժում եղաւ, որ սաստիկ հողմոյ յուղման էր նմանում: Հաւատացեալների սիրար



գերբնական ուրախութեամբ լցուեցաւ: Իւրաքանչեւրի գլխի վերայ հրեղէն լեզուներ երեեցան, այն Հոգին Սուրբն էր, որ իջաւ նոցա վերայ, և Աստուածային զօրութեամբ հաստատեց նրանց:

Ժողովուրդը այն աղմուկը լսելով, խուռան բաղմու-

թեամբ հաւաքուեցան վերնատան մօտ: Հաւատացեալները սկսան խօսել զանազան լեզուներով, որի վերայ ամէնքը զարմանում էին: Այն ժամանակ Պետրոս ասաց ժողովը զեան: Քրիստոս, որին Հրէայք խաչեցին՝ յարութիւն առաւ մեռեալներից, և իւր Սուրբ Հոգին մեր վերայ ուղարկեց: Պետրոսի քարոզութիւնից յետոյ երեք հազար մարդ հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան: Այսպէս ահա հաստատուեցաւ երկիրս վերայ Աստուծոյ արքայութիւնը, այսինքն՝ Քրիստոսի Սուրբ Նկեղեցին:

Մէր հաւատամբ ու մէնտուրը նըրութութէն երրորդ անգը, այն է ունի Սուրբ Հոգին, թէս յայտնում էն այսպէս:

Հաւատամբ և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի սուրբն:

## 82. ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Քրիստոսի երկինք համբառնալուց յետոյ, Աստուածամօր կեանքը երկար չտեեց: Գաբրիէլ հրեշտակապետը յայտնեց, թէ մօտեցել է նորա մահուան ժամանակը և նա մեծ ուրախութեամբ պատրաստվում էր դէպի մահը: Մեռնելուց առաջ նա կամեցաւ տեսնել առաքեալներին, որոնք ցրուած էին զանազան երկիններում՝ Քրիստոսի խօսքը քարոզելու: Տէր Աստուած կարգադրեց այնպէս,

ինչպէս նորա կամբն էր՝ նորա մահուան օրը զանազան երկիրներից հաւաքուեցան բոլոր առաքեալները բացի Քարթուղիմէոսից, նորա տեսան նորա երանական վախճանը. տեսան, թէ ինչպէս երեւցաւ Քրիստոս, հրեշտակներով շրջապատուած, վեր առաւ նորա ամենամաքուր հոգին և երկինք վերացրեց նորան: Վառուած լապտերներով և սաղմոսերդութեամբ առաքեալները Աստուածամօր մարմինը տարան Գեթսեմանիա և այնտեղ մէկ այրի մէջ ամփոփեցին: Նորա թաղման երրորդ օրը Երուսալէմ եկաւ Քարթուղիմէոս առաքեալը: Սորա իննդրանքով առաքեալները բաց արին այրը, որում ամփոփած էր Աստուածամայրը և ոչինչ զգտան այնտեղ, բաց ՚ի նորա զգեստից: Առաքեալները մնացին տարակուսած: Այս ժամանակ երկնային լուսով երեւցաւ նոցա ամենասուրբ Կոյսը և յայտնեց, թէ Աստուած յարութիւն տուեց նորան մեռածներից:

Սուրբ Աստուածածնի Վերափոխման յիշատակը միշտ տօնում ենք Օգոստոս ամսի 15-ին մօտ հանդիպած կիւրակէ օրը. և այս տօնախմբութիւնը մեր եկեղեցին կատարում է ինն օր:

### 83. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՈՐԱ ԽՈՐՃՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՅ:

Սուրբ Հոգու իջնելուց յետոյ առաքեալներն իսկոյն սկսեցին աւետարանի քարոզութիւնը և շատերը ընդունեցին նորան: Քրիստոսի հաւատացեալներից կաղմուեցաւ մի ժողով (հասարակութիւն), որի մէջ ամէնքը սիրում էին մէկմէկու և միակերպ հաւատում էին: Այս ժողովը

ասվում էր Քրիստոնէական սուրբ եկեղեցի, իսկ նորան պատկանող մարդիկ՝ Քրիստոնեայք: Քրիստոսի եկեղեցին մէ է, որովհետեւ ունի մի գլուխ—Քրիստոս, մի հաւատ, մի օրէնք և բոլոր քրիստոնեաները, խորհուրդների միջնորդութեամբ, ստանում են Սուրբ Հոգու շնորհքը: Մահն անգամ չէ բաժանում քրիստոնեաներին: Մեռեալ արդարները, իւրեանց Աստուածուն ուղղած աղօթքով, օգնում են երկրիս վերայ ապրող մարդիկներին. և սոքա ևս աղօթք են մատուցանում մեռած մարդկանց համար: Եկեղեցին սուրբ է, որովհետեւ քրիստոնեաները մաքրուած են Քրիստոսի արիւնով, և խորհուրդների միջնորդութեամբ Սուրբ Հոգու շնորհքով սրբագործվում են: Ըստհանրական է, որովհետեւ նորան պատկանում են բոլոր հաւատացեալները, ուր և լինին նոքա: Առաջելան է, որովհետեւ նա պահպանում է առաքեալներից աւանդուած ուսումը և կառավարվում է առաքեալներից հաստատուած հովեւներով,

Խորհուրդ ասվում են այնպիսի սրբարար գործողութիւններ, որոնցով հաւատացեալներին գաղտնի, անտեսանելի կերպով մատակարարվում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը: Այս իսկ շնորհքն է այն Աստուածային գօրութիւնը, որը միաւորում է քրիստոնեաներին ՚ի մի ժողով և սրբագործում է նրանց: Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին առաքեալներից հետեւեալ խորհուրդներն ընդունեց: Մկրտութիւն, Պրում, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ քահանայութեան և 08ումն հիւանդաց: Մկրտութեամբ ընդունում է հաւատացեալը Հոգւոյն Սրբոյ շնորհքը, ստանալով նոր կեանք. Պրումով ընդունում է շնորհք—նոր, քրիստոնէական կեանքի մէջ հաս-

տատ մնալու համար։ Ապաշխարութեամբ ստանում է շը-  
նորհք, որով թողութիւն է արվում նորա մեղքերին։ Հա-  
զորդութեամբ քրիստոնեայն գաղտնի կերպով միանում է  
Քրիստոսի հետ։ Ամուսնութեամբ օրհնվում է այր և  
կնոջ միաւորութիւնը։ Ձեռնադրութեամբ արվում է Հոգ-  
ւոյն Սրբոյ շնորհքը, որով ընտրեալն սրբագործուելով,  
մատչում է եկեղեցուն ծառայելու։ Հիւանդների օձմամբը  
—արվում է շնորհք, որով մարդ առողջութիւն է գրա-  
նում ծանր հիւանդութիւնից։

Հաւատամբ՝ ի մի միայն ընդհանրական  
և առաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտ-  
տութիւն, յապաշխարութիւն, ի քաւու-  
թիւն և ի թողութիւն մեղաց:

#### 84. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ:

Ակրտութեան խորհրդով ընդունումէ մարդ Հոգ-  
ւոյն Սրբոյ շնորհքը, որով վերածնում է, այսինքն ստա-  
նում է նոր կեանք: Այս խորհուրդը կատարվում է  
միլրտուողին երեք անգամ ջրի մէջ ընկղմերով, որի հետ  
արտասանվում են այս խօսքերը. «Մկրտվում է ծառայն  
Աստուծոյ (այս անուն) յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
Սրբոյ»: Մկրտուողն աւազան մտնելով մեղաւոր, դուրս է  
գալիք այնտեղից, Հոգւոյն Սրբոյ շնորհիւ, արդարացած,  
իբրև մարդ Աստուծոյ:

Ակրտութիւն ընդունող մարդուց պահանջվում է,  
որ նա հրաժարուի իւր առաջուայ վատաբարոյ կենցաղա-  
վարութիւնից, սատանայից և ամէն չարութիւններից,  
յայտնէ իւր փափագը Քրիստոսի հետ միաւորուելու և  
դաւանէ զէպի Քրիստոս ունեցած հաւատը: Մկրտու-  
թիւնից յետոյ նորան հագնում են սպիտակ շոր, ՚ի  
նշան նորա մաքրութեան: Մկրտութեան խորհուրդը ան-  
կրինելի է:

**Ակրտուածին նոր կեանքի մէջ գաստիարակելու համար տրվում է կնքահայր, որը ընդունելով նորան աւազանից, նորա երաշխաւորն է գառնում: Երեխայի մկրտութեան ժամանակ կնքահայրը նորա տեղ յայտնում է սատանայից հրաժարուիլը և հաւատոյ գաւանութիւնը: Նապիտի հոգայ, որ երեխայն գաստիարակուի քրիստոնէական հաւատոի մէջ:**

85 ԳՐՈՒՄ :

Գրոշմի խորհրդով նոր մկրտուածը ընդունում է  
Սուրբ Հոգով շնորհքը, որով հաստատվում է քրիստոնե-  
ական կեսնքի մէջ: Գրոշմը կատարվում է խոյն մկրտու-  
թիւնից յետոյ: Քահանայն սուրբ մեռնով օծում է մլքր-  
տեալի ճակատը, աչքերը, հոտոտելիքը, բերանը, ականջ-  
ները, ձեռքերը և ոտները, արտասանելով այս խօսքերը:  
«Կնիք ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽԻ ՔԻՒՍՈՍԻՒ:» Մարմին  
զանազան անդամները օժվում են ՚ի նշան նորա, որ Հոգին  
Սուրբ սրբազործում է և զօրացնում մարդու ամէն զգա-  
յարանքները և գործերը:

զիկներից և խոտերից, որոնց մէջ զլիսաւոր մասը կաղմում է ձիթենու իւղը և ազնիւ բալասանը, և օրհնվումէ Սուրբ Եջմիածնում մեծ հանդիսով ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսից, և այնտեղից տարածվումէ Հայաստանեայց ամենայն եկեղեցիների մէջ:

### 86. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ:

Ապաշխարութեան խորհրդով քրիստոնեայն ստանում է Սուրբ Հոգու շնորհքը, որով սրբվում է նա մլրտութիւնից յետոյ գործած մեղքերից:

Ապաշխարութեան մատչողից պահանջվում է մեղքերի զղջումն և վարքը ուղղելու դիտաւորութիւնն: Որպէս զե քրիստոնեայք միջոց ունենան իւրեանց մէջ զղջման զգացմունքը արծարծելու, եկեղեցին նշանակում է ապաշխարութիւն՝ այսինքն պահք, աղօթք և առողջութիւն: Իսկ վարքը ուղղելու դիտաւորութիւնը աւելի հաստատ պահելու համար ապաշխարողին սահմանվում է ապաշխարանքը, որի կատարումն պիտի յիշեցնէ նորան իւր միտումը դէսի չարը և օգնէ նորանից հեռանալու: Քրիստոնեայն իւր զղջումը յայտնում է քահանայի առաջ, որ դառնում է նորա հոգեւոր հայր, բժիշկ նորա հոգու և դատաւոր խղճի: Զղջման այսպիսի արտայայտութիւնը կոչվում է խոստովանութիւն:

### 87. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ:

Հաղորդութեան խորհրդի մէջ քրիստոնեայն հացի տեսակով ճաշակում է Քրիստոսի մարմինը և գինու տե-

սակով ընդունում է նորա արիւնը, որով և միանում է Քրիստոսի հետ:

Պաշտօնը, որով կատարվում է Հաղորդութեան խորհուրդը, կոչվում է պատարագ, որ ասել է զոհ կամնուէր: Նա կատարվում է սովորաբար Ճաշու ժամին, այսինքն կէս օրից առաջ, շատ անգամ առաւօտեան ժամից յետոյ, և երկու Ճրագալուցի օրերում երեկոյեան ժամից յետոյ:

Պատարագ մատուցանելիս քրիստոնեայք յիշում են իւրեանց Փրկչի ծնունդը, քարոզութիւնները, չարչարանքը, մահը, յարութիւնը և համբարձումն: Որոնք արժանի են Քրիստոսի հետ միաւորուելու, հաղորդվում են. իսկ անպատրասաները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշխալք) են Ճաշակում: — Իւրաքանչեւր քրիստոնեայ, եկեղեցու կանոնների համեմատ, պարտաւոր է հաղորդուել տարին հինգ անգամ՝ հինգ տաղաւարաց օրերում, կամ գոնէ մէկ անգամ—անպատճառ:

### 88. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ:

Ամուսնութեան խորհրդով Քրիստոսի եկեղեցին օրհնում է ամուսնական միաւորութիւնը և խնդրում է Աստուծուց այր և կնոջ համար այնպիսի կատարեալ սիրոյ շնորհք, որով միաւորուած է Քրիստոս իւր եկեղեցու հետ: Այսպիսի շնորհքը խնդրվում է՝ զաւակ ծնանելու և նրանց քրիստոնէավայել կերպով մեծացնելու համար:

Ամուսնութեան խորհուրդը նոքա միայն կարող են ընդունել որոնք սորա համար սահմանեալ տարիքն ունին, կայ ամուսնացողների մէջ փոխադարձ համաձայնութիւն և պսակի գէմ սահմանուած արգելքներ չունին:

**89. ԿԱՐԳ ԿԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ:**

Կարգի խորհրդով ձեռնադրուողին տրվում է շնորհք և իշխանութիւն՝ ֆողովուրդը հովուելու և նկեղեցու սուրբ խորհուրդները կատարելու:

Կարգը եօթն բաժանումն ունի՝ առաջին երեքը մեծ, այսինքն քահանայութիւնը, սարկաւագութիւնը և կիսասարկաւագութիւնը յատկապէս կարգ են կոչվում: Խոկ մերջին չորսը փոքր, այսինքն՝ ջահճնկալութիւն, երգմնեցուցութիւն, ընթերցողութիւն և գոնապանութիւն, յատկապէս աստիճանք են կոչվում: Խպիսկոպոսութիւնընոր կարգ է, այլ գերագոյն իշխանութիւն է՝ աստիճանները և միւս կարգերը տալու:

**90. ՕՇՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՅ:**

Հիւանդաց օծման խորհրդով տրվում է Հոգւոյն սրբոյ շնորհքը, որով հիւանդը ընդունում է Աստուծուց մարմի առողջութիւն և ներելի մեղքերի թողութիւն:

Այս խորհուրդը կատարում է քահանայն այնպէս՝ որ ձեռը դնելով և իւղով օծելով, ազօթք է անում հիւանդի վերայ:

Ուէ և Յակոբոս առաքեալից կանոնադրուած է ազօթքը և օծումը միանդամյն կատարել բայց որովհետեւ խորհրդի գլխաւոր մասն այն աղօթքն է, որ գիշերաժամ ենք անուանում, այս պատճառով Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին սովորութիւն է արել՝ առանց օծման կատարել այս խորհրդը:

**91. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԽԱՏԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ:**

Ակզրում քրիստոնէութիւնը շատ թշնամիների հանդիպեցաւ: Ամէն տեղ քրիստոնեաներին հալածում էին արգելում էին բանտերի մէջ, տանջում էին և սպանում: Քրիստոնէական հաւատի համար առաջին նահատակ եղաւ Ստեփաննոս նախասարկաւագը՝ նրան քարկոծեցին: Բոլոր առաքեալները, բայց սուրբ Յովհաննէսից, կատարեցան մարտիրոսական մահուամբ: Սուրբն Պետրոս և Անդրէաս խաչուեցան, իսկ Սուրբն Պօղոս գլխատուեցաւ: Սոքանիկումն էլ այսինքն Պետրոս և Պօղոս առաքեալները Հռովմումը նահատակուեցան մի օրուայ մէջ, ինչպէս ասում է աւանդութիւնը: Թաղէոս և Բարթովիմէոս նահատակուեցան Հայաստանի մէջ Հայոց Սանատորուկ թագաւորի իշխանութեան ժամանակ: Բայց Քրիստոսի վարդապետութիւնը, ընացելով բոլոր հալածանքներին, աւելի և աւելի տարածվում էր երկրիս վերայ: Այս քաշած տառապանքներից Քրիստոնէութեան քարօնիները ամեններին չյուսահատուեցան և որբան աւելի չարչարփում էին, այնքան աւելի ուրախանում էին, հաստատ համոզուած լինելով, որ կարծատե տանջանքից յետոյ սպասում էնոցա արգարութեան պակը երկնային թագաւորութեան մէջ: Հալածուելով մի տեղից, նորա անցնում էին միւս տեղերը, ուր և գտնում էին իրանց հետեւողներին:

**92. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՍԿՃԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:**

Մինչդեռ քրիստոնէութիւնը հալածվում էր ամե-

նայն ուրեք, հեթանոսական Հայաստանը նորան պաշտպան հանդիսացաւ: Արգար Հայոց թագաւորը Քրիստոսի քարոզութիւնների և հրաշագործութիւնների միթարական լուրը առնելով և ինքը վարակուած լինելով անբուժելի հիւանդութեամբ (բորսոտութեամբ), դեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ նամակով և խնդրեց որ գայ Եղեսիս քաղաքը, բժշ է նորան հիւանդութիւնից և այնաեղ խաղաղական կեանք վարէ, հեռու թշնամիներից: Յիսուս հրամայեց Թովմայ առաքեալին՝ գրել նամակի պատասխանը, որի մէջ խոստացաւ իւր համբարձմանից յետոյ իւր աշակերտներից մէկին ուղարկել սրակէս զի բժշկէ թագաւորին հիւանդութիւնից և միանդամայն միհիթարէ նորան երկնաւոր միխթարութեամբ:

Ըրդարև Քրիստոսի համբառնալուց յետոյ, Թագէոսը, որ նորա եօթանասուն աշակերտներից մէկն էր, մտաւ Եղեսիայ քաղաքը և իւր առաքելական քարոզութիւնը սկսեց նոյն իսկ թագաւորական պալատից: Արգարը հաւատաց և բժշկուելով հիւանդութիւնից մկրտուեց ինքը և իւր գերգաստանը և նոցա հետ միասին Եղեսիայի ընակիները: — Նուտով փակուեցան կռատունները և նոցա տեղ փայլեց Քրիստոսի Սուրբ Խաչը: Թագէոսը հիմնելով եկեղեցիք, ձեռնադրելով իւր տեղ Ադրէ եպիսկոպոսին և կարգելով քահանաներ, ինքը գնաց Հայաստանի միւս աշխարհները աւետարանը քարոզելու:

Արգարի հօրաքեռ որդին Սանատրուկ, որ իշխում էր Հայաստանի Շատարշան կամ Արտազ գաւառում, իւր Սանդուխտ դատեր հետ թէեւ առաջ ընդունեց Քրիստոնէութիւն, բայց յետոյ ուրանալով նահատակեց Թագէոս առաքեալին և իւր դուստր Սանդուխտին:

Թագէոսից յետոյ 65 թուականին գալիս է Հայաստան Բարթուղմէոս առաքեալը, բերելով իւր հետ Աստուածածնի պատկերը, շատացնում է հաւատացեալների թիւը, հաստատում է եկեղեցիք և ապա նա ևս նահատակիվում է Սանատրուկից: Այսպէս ուրեմն Հայաստանեայց եկեղեցին կարող է բացարձակ կոչուիլ՝ Առաջին Քրիստոնէութիւն Եկեղեց:

Ուէւ Արգարի յաջորդները ընդդիմացան քրիստոնէութեան տարածմանը, բայց Թագէոսի և Բարթուղմէոսի առաքելական քարոզութիւնքը և թափած արիւնը անօգուտ շանցան Հայաստանի մէջ, այնպէս որ մինչեւ Գրիգոր լուսաւորչի օրերը (302 թ.) ոչ հովիւները պակասեցան և ոչ նահատակները:

### 93. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷջ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ:

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, որ հեթանոս ԱնակՊահաւունու որդին էր, ծնուեցաւ Վաղարշապատ քաղաքում 257 թ: Նւ երբ նորա Հայրը, Խոսրով թագաւորին սպանելուց յետոյ, Հարողանալով փախստեամբ ազատուել խեղդուեցաւ Երասխ գետի մէջ, իսկ նորա ընտանիքը սրով կոտորուեցան, այս կոտորածից ազատ մնաց երկը տարեկան մանուկը: Սորան, իւր գայեակ Սովիա անունով կինը, որ հաւատով քրիստոնեայ էր, տանում է Վեսարիա, և այն տեղ մկրտել տալով՝ անունը դնում են Գրիգոր: Նա Կեսարիայում սնաւ քրիստոնէական բարեպաշտութեամբ և 18 տարեկան հասակում ամուսնալով ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս և Արիստակէս:

Գրիգորը, բաժանուելով իւր կին Մարիամից, գնաց Հռովմ, ուր այն ժամանակ գտնվում էր Խոսրով թագաւորի որդին Տրդատը, որի մօտ նա ծառայ մտաւ, որպէս զե իւր հօր յանցանքը քաւի: Գրիգորը մնաց Տրդատի մօտ մինչև որ նա թագաւոր եղաւ ու Հռովմից մերագարձաւ Հայաստան 286 թ: Երբ նոքա հանում են Նկեղեաց գաւառի Նրէզ աւանը, Տրդատ շնորհակալու թեան գոհ է մատուցանում Անահիտ զիցուհուն և Գրիգորին պատուիրում է, որ ծաղկէ պսակ զնէ կուռքի գրւիսին, բայց նա չկատարելով թագաւորի հրամանը, յայտնից ցոյց է տալի իւր Քրիստոնէութիւնը, որ մինչև այն ժամանակ ծածուկ էր պահում: Ուստի Տրդատը սարսափելի տանջանքներ է հասցնում նորան և իմանալով, որ Գրիգորը իւր հօրն սպանող Անակի որդին է, հրամայում է ձգել Արտաշատ քաղաքի խորմիլրապի մէջ, ուր միայն մահապարտներին էին ձգում: Գրիգորը մնում է նորա մէջ՝ տարի, կերպակրուելով մի բարեպաշտ կնոջից:

Այս միջոցին (301 թ.) Տրդատի հրամանով կատարվում է Հռիփսիմեանց Սուրբ Կյոյսերի նահատակութիւնը. Աստուածային պատիմն էլ իսկօյն համում է թագաւորի, նորա ընտանիքի և նախարարների վերայ: Տրդատը կորցնում է բանականութիւնը և կատաղած դիմում է անհարդարնակ տեղերը: Յետոյ խորվիլրապից հանում են Սուրբ Գրիգորին, որի ազօթքով բժշկվում է թագաւորը և բոլոր այսահարները և կրկին նորոգվում է քրիստոնէութիւնը Հոյրց աշխարհում:

Այսուհետեւ նախարարներ, իշխաններ և հաւատացեալների բազմութիւնը հաւաքուելով Տրդատ թագաւորի մօտ՝ համակամ խորհրդով և հաւանութեամբ ընտրում են

Սուրբ Գրիգորին իրանց հովեւ և առաջնորդ և մեծ  
պատուով Վաղարշապատ քաղաքից տանում են Փոքր Հա-  
յաստանի Կեսարիա քաղաքը, որ Աւոնտիոս հայրապե-  
տից, որ Թագէոս առաքեալի յաջորդն էր, ձեռնադրվում  
է Հայրապետ բովանդակ Հայաստանի՝ Յ02 թուականին  
Փրկչի:

Սուրբ Գրիգորը վերադառնալով կեսարիայից Հայաստան, իւր քարոզութեամբ պատրաստում է բոլոր ժողովուրդին մկրտութիւնն ընդունելու համար, պատուիրում է աղօթել և պահք պահել (Առաջաւորաց պահք) և ապա Եփրատ գետի մէջ մկրտում է թագաւորին, Աշխեն թագուհուն, Խոսրովից խոտին և բոլոր բազմութեանը, — պատարագ է մատուցանում և ամենքը հաղորդվում են: Այստեղից թագաւորի հետ գալիս է Վաղարշապատ քաղաքը և 303 թուին սկսում է Էջմիածնի հոյակապ եկեղեցու շինութիւնը:

Յետոյ Սուրբ Խոսաւորիչը շըջելով Տրդամի հետ  
Հայաստանի ամէն կողմէրը, միրտում է ամենքին, բաց է  
անում դպրոցներ, կարգում է ուսուցիչներ, ձեռնազրում է  
եպիսկոպոսներ և քահանաներ, շինում է շատ եկեղեցիք,  
վանօրայք, կուսանոցներ և հիւրանոցներ, սահմանում է  
տօներ:

Եւ այսպէս Հայաստան աշխարհը քրիստոնէական  
լուսով՝ լուսաւորելուց յետոյ Սուրբն Գրիգոր 331 թուա-  
կանին առանձնանում է Սեպուհ սարի վերայ՝ Մանիայ  
այրը ուր և կնքում է իւր բաղմարդին կեանիքը:

՚ի պատիւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի  
Հայոց եկեղեցին սահմանած ունի երեք տօն:

ա. Մեծի պահոց Հինգերորդ եօթնեկի շաբաթօրը  
կատարւում է տօն՝ ՚ի յիշատակ շարչարանաց սրբոյն  
Գրիգորի Լուսաւորչի և մտին՝ ՚ի վիրասպն:

բ. Են նորա ՚ի վիրապէն: Սա լինում է ամառը  
Յունիս ամսին—շաբաթ օրը: Իսկ միւս օր, որ է կիւրա-  
կէն, միշտ կատարվում է Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբ-  
ոյ Էջմիածնի:

գ. Գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
մերոյ. սա ևս լինում է ամառը Յունիս կամ Յուլիս  
ամսիններին՝ գարձեալ շաբաթ օրը:—

Բաց յայսմանէ սուրբ Աստուածածնի պահոց եօթ-  
նեկին—շաբաթ օրը լինում է Տօն Շողակաթին սրբոյ  
Էջմիածնի ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
մերոյ:—Սոյն օրը առաւտօնեան ժամին հոգեորականաց  
դասը, ՚ի միջի այլոց, երգում է և հետեւեալ շարականը:

Եջ Միածինն ՚ի  
Հօրէ և լոյս փառաց  
ընդ նմա, ձայնը հըն-  
չեցին սանդարամետք  
անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ  
Հայրապետին Գրիգոր-  
ի պատմէր ցնծու-

Միածին Որդին ի-  
ջաւ Հօրից և Վորա-  
չետ փառաց լոյս—  
անդունդի խորքեր  
ձայներ հանեցին:

Գրիգոր Հայրապե-  
տք մեծ լոյսը տեսնե-  
լով, ուրախութեամբ

թեամբ հաւատու-  
ցեալ արքային: Եկեալ  
Եկայք շինեսցուք  
(Տրդատին):

սուրբ զխորանն լու-  
սոյ, քանզի ՚ի սմա  
ծագեաց մեզ լոյս ՚ի  
Հայաստան աշխար-  
հի:—

Եկէ ք շինեսք լու-

սոյ սուրբ խորանը  
(Եկեղեցին), որովհե-

այաստան աշխար-  
հի:—

այստեղ աշխարհում—

մեզ լոյս ծագեցաւ:

#### 94. ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՒ ՀԱԻԱՑՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ:

Աստուածային վարդապետութիւնը պարունակվում  
է Սուրբ Գրքի և սուրբ աւանդութիւնների մէջ: Սուրբ  
Գիրքը բաղկացած է շատ գրքերից, որոնց գրել են սուրբ  
մարդիկ, այսինքն մարգարէնները և առաքեալները Սուրբ  
Հոգու ազդեցութեամբ: Այս գրքերից մի քանիսը գրուած  
են Քրիստոսի ծնելուց առաջ և ասվում են գիրք Հին  
Ուխտի, կամ Հին Հրատարակ, —միւնները Քրիստոսի ծնուե-  
լուց յետոյ և ասվում են Գիրք Նոր Ուխտի կամ Նոր  
Հրատարակ: Խոկ բողոքն ՚ի միասին ասվում են: Ասպառածաշունչ  
Գիրք: Սուրբ աւանդութիւնը ասվում են Աստուածային  
այնալիսի վարդապետութիւնները, որոնք չեն գրուած  
մարգարէններից և առաքեալներից, այլ բերանացի են  
աւանդուած և քանի մի ժամանակից յետոյ միայն արձա-

նագրուած են եկեղեցու հովիներից և վարդապետներից։  
Քրիստոնեայ հասարակութեան մէջ շուտ երկեցան  
Ճշմարտութեան թշնամիք, որոնք իրենց ազատ մէկնու-  
թիւններով աղաւաղում էին Քրիստոսի վարդապետու-  
թիւնը։ Քրիստոնեայք նրանց հերետիկոս անուանեցին։  
Հաւատացեալների մէջ սկսուեցան վէճեր և անմիաբանու-  
թիւններ։ Այստեսակ վէճերը լուծելու համար նկեղեցու  
հովիները օկսեցին միասին հաւաքուել։ Այս կերպով  
կաղմուեցան ժողովներ։ Տէղական ժողով, ուր հաւաքվում  
էին մի գտառի եկեղեցու հովիները և Տէղական, ուր  
բոլոր տիեզերքից հաւաքվում էին եկեղեցու հովիներ։  
Ժողովների մէջ եկեղեցու Հայրերը բոլոր տարածայնու-  
թիւնները փարատեցին և կազմեցին հաւատոյ համառօտ-  
րովանդակութիւնը կամ արձանագրութիւնը, որ տասներ-  
կու մասն է բաժանվում։

1. Հաւատամք՝ ի մի Աստուած Հայրն  
ամենակալ, յԵրարին երկնի և երկրի ե-  
րեելեաց և աներեոյթից։

Ո՞նք հաւատում ենք որ կայ մը Աստուած, — որ մի  
է Աստուած երեւ անչուռութեան մէջ, որ Ամենասուրբ Յը-  
րորդութեան առաջին անչ Հայր Աստուածն է, որ Աստուած  
առեջեց երկինքը և երկիրը — ամենայն տեսանելի և ան-  
տեսանելի բաներով, որ բոլոր ստեղծուածներին նա պահ-  
պանում է իւր իշխանութեան ներքոյ և կառավարում է  
նրանց։

2. Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յոր-  
դին Աստուածոյ, ճնեալն յԱստուածոյ Նօրէ  
միածին, այսինքն յէռթենէ Նօր։ Աստ-  
ուած յԱստուածոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստ-  
ուած Ճշմարիտ՝ յԱստուածոյ Ճշմարտէ ծը-  
նունդ և ոչ արարած։ Կայ ինքն ՚ի բնու-  
թենէ Նօր, որով ամենայն ինչ եղև յեր-  
կինս և ՚ի վերայ երկրի երկելեք և ան-  
երևոյթք։

Մենք հաւատում ենք, թէ Ամենասուրբ Յըրորդու-  
թեան երկրորդ անչն է, մի Տէր Յիսուս Քրիստոսը, Աստո-  
ւածոյ որդին, թէ նա միածին է, այսինքն չկայ ուրիշ մէկը  
զրա նման։ թէ Որդին Աստուածոյ ճնուածն է Նօր Աստու-  
ծուց նոյն կան ոյտականուն, թէ նա ճնուած է ինչպէս լոյսը  
լուսից, այսինքն ինչպէս արեգակն ճառագայթը արե-  
գակից։ թէ նա Ճշմարիտ Աստուածն է ճնուած Ճշմարիտ Աս-  
տուածուց, թէ նա չէ սույնուած։ թէ նա համագոյակից է  
Նօր Աստուածոյ, այսինքն ունի Նօր Աստուածոյ Հետ մի գո-  
յութիւն։ թէ ամենայն բան նորանոր է սույնուած։ և ու-  
րեմն նա է Արարիչ աշխարհի։

3. Որ յաղագս մեր մարդկան և վասն մե-  
ռոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնա-  
ցաւ, մարդացաւ, ճնաւ կատարելապէս ՚ի

**Վարիամայ Արբոյ կուսէն Հոգւովն Արբով:**  
Արով էառ զմարմին, զշողի և զմիտ և զամենայն, որ ինչ է՝ 'ի մարդ, Ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ երկնքից իշտ մեզ հարդիանց իրեւեւեան համար, թէ նա մարմնացաւ, այսինքն մարդկային բնութիւն առաւ Մարիամ Կուսէնց Հռգեանց սրբոյ եկաւորութեամբ. թէ նա մարդացաւ, այսինքն եղաւ կատարեալ մարդ, չգագարելով և Աստուծած լինելուց:

#### 4. Չարչարեալ, խաչեալ թաղեալ:

**Մենք հաւատում ենք,** թէ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը շարժուեցած, այսինքն ցաւ էր պդում, ինչպէս ամեն մարդ. թէ նա կաշ հանուեցած մեր պատճառով, այսինքն թոյլ տուեց իրեն խաչելու, որպէս զի մեր մեղքի համար մեզ սպասելի յաւիտենական պատժից ազատէ. թէ նա մեռաւ խաչի վերայ և թարգմանաւ այս բայբար

#### 5. Եերօրդ առուր յարուցեալ:

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս մարդկային բնութեամբ մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը յարութիւն առաւ:

#### 6. Ելեալ յերկինս նովին մարմնովն նրատաւ ընդ աջմէ Հօր:

**Մենք հաւատում ենք,** թէ Աստուծոյ Որդին, Յիսուս Քրիստոսը, մարմնով համբարձու երկինքը, թէ նա նստած է Հօր Աստուծոյ աջ կռուն, այսինքն ունի նորա հետ հաւասար զօրութիւն և պատիւ:

#### 7. Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ 'ի դատեալ զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս Քըրափէն ընդոյ փառօքվ, թէ նա կրգայ նորա համար, որ դատէ էնուանիներն և մուշւերն, թէ այս դատաստանից յետոյ կը համնի նորա թագաւորութեանը որը կտիճռն չունի.

#### 8. Հաւատամբ և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդարէս և յաւետարանն: Որէջն 'ի Յորդանս, քարոզեաց զառաքեալն, և քնակեցաւ 'ի սուրբն:

Հաւատում ենք, թէ երրորդ անձն Ամենասուրբ երրորդութեան է Հոգին Սուրբ. թէ Հոգին Սուրբ Աստուծ էն ուրեմն և պարտական ենք Հօր և Որդւց հետ հաւասար փառք և երկրպագութիւն տալ նորան: Թէ Տարգուիները և առաքեալները Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և սուրբ Գիրքը գրելու ժամանակ՝ Հոգւոյն

Սրբոյ շնչմամբ էին խօսում և դրում. թէ երբ Քրիստոս  
մկրտվում էր Յահովանան գետի մջի, Հոգին Սուրբ իջաւ Նու-  
րա վերայ աղաւնու կերպարանքով և քարողեց, թէ Քրիս-  
տոս ուղարկուած է Հօրից, և թէ Հոգին Սուրբ բնակուաց-  
ուարէնք. Ազ:

9. Հաւասամք՝ ի մի միայն ընդհանրական և առաքելական Առողբ եկեղեցի:

Հաւատում ենք, թէ Յիսուս Քրիստոս Տէր բնակվում է իւր եկեղեցու մէջ, թէ եկեղեցին ն է, Սուրբ է, չորս հարսկան է և Առաջնական:

10. Հաւատամք՝ ի մի Վկրտութիւն, յէ-  
պաշխարութիւն, 'ի Քաւութիւն և 'ի Թո-  
ղութիւն մեղաց:

Հաւատում ենք, թէ մկրտութիւնով մարդս թողութիւն է գտնում սկզբնական մեղքից և արժանի է լինում Հոգւոյն Սրբոյ շնորհքն ընդունելու, թէ մարդս Ճշմարիտ ապաշխարութեամբ ազատում է և թողութիւն է ստանում այն մեղքերից, որ գործել է մկրտութիւնից յետոյ:

11. Հաւատամք՝ 'ի յարութիւն մեռելոց,  
'ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմ-  
նոց, յարքայութիւնն երկնից:

Հաւատում ենք, թէ ամէն մեռած մարդկանց մար-

միները վերջին դատաստանի օրը խւրեանց հոգիների հետ պիտի միանան և վերկենան Ասառուծոյ հրամանով և դատուին Քրիստոսից և ամենքը խւրեանց փարձը ստանան:

## 12. Եւ ՚ի կեանս յաւիտենականս:

Հաւատում ենք, թէ այս երկրաւոր կեանքից յետոց կը լինի մի ուրիշ—յաւիտենական կեանք:

ամէ պյանդիքը բանեցալ զրո Ամսասահմար միջոյն ուրեմնի  
շնոր և խոնակոյն լրճառասէ մանեթիզմ և մանափի վոյքը  
մասնաւ շնորի ընտեղոյն զգմնու և ընդունոյդ մէջ ա

ամսային մեռյալ տիրութիւն է այս է

բուհ ընդունութիւն դուայիլիմ սպա է այս ուղիղ նախաւա

## ՀԱՐՑՄՈՒԽԻՔՆԵՐ ԿՐԿՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ: Ո՞ւմ Ենք  
անուանում Աստուած: Կար ժամանակ, որ Աստուած չլինէք: Ո՞ւր է Աստուած: Ի՞նչ յատկութիւններ ունի: Ի՞նչ կընշանա-  
կեն Ա.Տ.Հ.Կ. Ա.Տ.Հ.Կ. և Ա.Տ.Հ.Կ. բաւեքը: Կարմղ ենք մենք Աստուածուն տեսնել: Ի՞նչ յալտնեց Աստուած իրան Համար: Ի՞նչ կընշանակէ Ամենասուրբ Երրորդութիւն: Ամենասուրբ  
Երրորդութեան երեք անձինքը: Հաւասար են միմեանց: Ի՞նչ անուն ենք տալիս Ամենասուրբ Երրորդութեան: Ի՞նչ  
պատուիրան տուաւ մեզ Աստուած իրեն պատուելու Համար: Մենք լինչպէս ենք փատարանում Աստուածուն: Ի՞նչ բառե-  
քով ենք յալտնում մեր ցանկութիւնը նորա անունով ապ-  
րելու:

2. Թէ Ի՞նչ Են ՀՐԵՇՏԱԿԱՆԵՐԸ: Աշխարհիս մէջ եղած  
ըուրը բաները ըստեղից յառաջ եկան: Ի՞նչ կընշանակէ ուրիշն  
բառը: Ամէն բանից առաջ Աստուած լինչ ստեղծեց: Ի՞նչ Են  
Հրեշտակները: Ի՞նչ կընշանակէ հրեշտակ: բառը: Ինչու Համար  
Հրեշտակներին ազդպիս անուն ենք տալիս: Իուրա Հրեշ-  
տակները Հաւասար են միմեանց: Ի՞նչպէս են բաժանվում:  
Հրեշտակների կարգերը կամ զատերը լինչ անուններ ունին: Բոլոր  
Հրեշտակները բարի են ստեղծուած: Արդեօք ըուրը  
Հաւատարիմ մնացին Աստուածուն: Զար Հրեշտակները լինչ  
են կոչվում: Բարի Հրեշտակները լինչ բարիք են անուն մեզ

և ի՞նչ վիաս Են տալիս չարեցը: Ո՞ր Հրեշտակներին ասում  
ենք պահուած հրեշտակները յետոյ: Քանի  
օրուաց մէջ ստեղծուեցաւ բոլոր տեսանելի աշխարհը: Ի՞նչ  
ստեղծեց Աստուած վեց օրուաց իւրաքանչլւրի մէջ: Ի՞նչպէս  
ստեղծեց Աստուած առաջին մարդը: Ինչով զանազանէց  
նրան կենդանինեցից: Ի՞նչպէս ստեղծեց Աստուած առաջին  
կինը: Ինչու նախարհօք կողքեց ստեղծեց նրան: Ի՞նչ էին  
առաջին մարդոց անունները: Աստուած ստեղծագործու-  
թիւննեց յետոյ աշխարհիս վերաց խնամք ունինք: Ի՞նչպէս  
անուններ ենք տալիս աշխարհս ստեղծող և նախախնամող  
Աստուածուն: Ի՞նչ պատուէր տուաւ Աստուած եօթներորդ  
օրուաց Համար: Ո՞րպիսի աղօթքով դիմում ենք դէպի Աս-  
տուած քարթնելուց յետոյ:—

4. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԻ ԴՐԱԽՏԻ Մէջ: Աստու-  
ած առաջին մարդկանց ուր բնակեցրեց: Ի՞նչ է դբախտը:  
Դբախտի մէջ լինչ երեսելիք բան կար: Աստուած առաջին  
մարդկանց դբախտը տանելու ժամանակ լինչ ասաց: Երջա-  
նեկ էին արդեօք մարդկէ դբախտի մէջ: Ի՞նչ Հոգեկան և  
մարմնական զրադմունք ունինք նոքա: Առաջին մարդկէը  
Հոգով լինչպէս էին: Աստուած նոցա լինչ պատուիրան տու-  
աւ և ենչու Համար: Տուամ մեզ արդեօք Աստուած ոյց և  
կարողութիւն ուսանելու: Ո՞րպիսի աղօթքով դիմում ենք  
դէպի Աստուած դասից առաջ և դասից յետոյ:

5. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՔԻ Մէջ ԸՆԿՆԻԼԻ: Առաջին  
մարդեկ միշտ իւրեանց երանելիք վիճակի մէջ մնացին: Նոքա  
լինչպէս կորցրեն իւրեանց երանութիւնը: Ո՞վ նըանչ եարեց  
և լինչպէս: Մարդեկ յանցանք գործելուց յետոյ լինչ գդա-  
ցին: Այն ժամանակ լինչ արին: Մեղքի պատճառով լինչ  
փոփոխութիւն եղաւ նոցա Հոգու մէջ: Ո՞րպիսի պատուի-

րան տուեց մեզ Աստուած ու քիչի քարութեան ճնախանձեւ բու համար և անյ ի խց վյօրս իսկայ Ու առջան զան

6. ԽՈՍՏՈՒՄՆ ՓՐԿՉԻ ԵՒ ՆԱԽԱՌՆՈՂԱՅ ՅԱՆՅԱՆՔԻ  
ՊԱՏԻԺԸ: Աստուած լնչպէս պատմեց մոլորեցնող սատանա-  
լին: Տրուած պատմեց մարդիկ լնչ էին գուշակում: Աստու-  
ած լնչպէս պատմեց մարդկանց: Ի՞նչ համայց նոցա որ  
կատարեն Փրկչին լիշելու համար: Մարդիկ գըախտի մէջ  
մնացին թէ ոչ: Աստուած մարդկիր գըախտից արտաքսե-  
լուց լուսու անխնան թողեց նրանց: Ի՞նչ էր կոզմում այն  
մէջոցը, որի մէջ մարդիկ պատմաստիւմ էին Փրկչին ընդու-  
նելու: Ի՞նչ ենք խնդրում Աստուծուց քնելուց առաջ:

7. ՄԱՐԴԿՈՅԻՆ ԱԶԳՈՒ ՄԻՆՉԻ ԶԲՀԵՂԵՂ: Աղամին և  
եւադի մահուամբը նոցա պատիքն ևս վերջացմաւ: Ի՞նչ ցոյս  
ժառանգեցին մարդիկ նախածնողներից: Աղամին և եւադի  
առաջին որդւոց անուններն լնչ էին: Նոքա ոկրովէին մէս  
մեանց հետ: Նոցա թշնամութեան հետևանքն լնչ եղաւ:  
Աստուած լնչպէս պատմեց կաէկնին և ինչով միսնթարեց  
նախածնողներն Արէլի մահուանց լուսու: Կայէնը իւր հոս  
տանը մնաց, թէ ոչ: Ի՞նչպիսի մարդիկ տառաջ եկան կաէ-  
նի և Սէլէի սեղունդներից: Մարդիկ լուրովին բամանուած  
մնացին: Նոցա միանալուց լնչ տուաջ էկաւ: Աստուծուն  
հաւատացող մարդ ևս գտնվում էր: Աստուածացն որ  
պատուիրանները արգելում են մեղ չարութիւններ անելը:

8. ԶԲՀԵՂԵՂ: Աստուած լնչպէս պատմեց մարդոց  
նոցա շարութեան համար: Զբհեղեղի ժամանակ ըոլոր մար-  
դիկ խեղդուեցան: Աստուած լնչպէս պատմեց նոյին և  
նորա ընտանեացը: Նոյի ընտանիքից զատ ով կար տապա-  
նի մէջ: Զբհեղեղ լնչպէս մկանուեցաւ: Զբհեղեղից լուսու  
նոյ բնչ արաւ: Աստուած նոյի զոհը բնդունեց: Ի՞նչ խոս-  
տացաւ նոյին: Ի՞նչ նշան տօւաւ իւր խոստման կատա-  
րուելուն:

9. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԸ ԶԲՀԵՂԵՂԻՑ ՅԵՏՈՅ: Զբհեղեղից  
շետու մարդիկ արդար մնացին: Ի՞նչ չարութիւն երկեցաւ  
նոցա մէջ: Ո՞վ եղաւ առաջին անպատկառութիւն անողը  
իւր ծնողաց գէմ: Քամը լնչպէս ծառըց հօր: Քամի եղ-  
քայըներն լնչպէս վարուեցան: Քամը լնչպէս պատմուեցաւ:  
Ի՞նչպէս վարձատրուեցան Աէմ և Յարէթ իւրեանց լաւու-  
թեան համար: Ի՞նչպէս է կարդացվում պատուիրանը ծնո-  
ղաց պատուելու մասին: Նոյի որդւոց սերունդները լնչպէս  
էին ապրում: Ո՞վ էր կառավարում նրանց: Նահապէտի  
պարտականութիւնն էնչ էր: Զար մարդիկ լնչ բան շինել  
մտածեցին: Կարողացան նոքա աշտարակը շինել վերջացնել:  
Մարդիկ լնչ արին, երբ Աստուած նոցա լեզուն խառնակեց:  
Զանազան աղգեր ձեանալուց յետու Ճշմարիս Աստուած-  
պաշտութիւն մնաց: Մարդիկ երբոր Աստուծուն մոռացան,  
լնչ բանել էին ընդունում Աստուծոյ տեղ: Ի՞նչ պատիւ  
էին տակիս սուտ աստուածներին: Սուտ աստուածներ պաշ-  
տողները լնչ էին կոչում: Ի՞նչ է կուռքը: Կուռապաշտու-  
թիւնը տարածուեցմաւ մարդկանց մէջ: Ի՞նչպէս է կարդաց-  
վում կուռապաշտութիւն արգելող պատուիրանը:

10. ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԻՍԱՀԱՊԵՏՆԵՐԸ: Բոլոր  
մարդկանց կուռապաշտութեան մէջ ընկած ժամանակ արդար  
մարդիկ ևս կային: Ո՞ւր էր բնակլում Աբրահամը: Աստուած  
լնչ խոստումներ տուաւ Աբրահամին: Աստուած լնչ պատ-  
ութիւնց իւր ժողովրդին: Կատարուեցաւ Աստուծոյ այն խոս-  
տումը թէ Աբրահամը որդի պիտի ունենայ: Աստուած  
լնչպէս փորձեց Աբրահամի հաւատոր: Ի՞նչ պատրաստու-  
թիւններ տեսաւ Աբրահամ Աստուծոյ կամքը կատարելու  
համար: Ճանապարհին քամի օր էին նոքա: Ի՞նչ պաց  
Աբրահամ ծառաներին երբ տեսաւ արք: Ի՞նչ ասաց Խա-  
հակը երբոր նա և իւր հայը բարձրանում էին սարի վերաց:  
Ի՞նչ պատասխան տուաւ Աբրահամը: Աբրահամը իւր որ-  
դին դոհեց, թէ ոչ: Ի՞նչ ձախն լսեց նա երկնքից և լնչ

արեց նորանից լւտոյ; Ամսուած թ' նչ վարձատրութեւմ տու-  
առ Սքըահամին նորա Հնաղանդութեան լիոխաթէն: —

11. ՅԱԿՈԲ ՆԱՀԱՊԵՏԻ ՈՐԴԻՔԲ: Քանի՞ որդի ունէք  
Յակոբ նահապետը; Որբ՞ն էր նա աւելի սիրում: Խո-  
չու եղացըները ատում էին Յովսէփին: Քանի՞ երազ տեսա-  
Յովսէփ և եղացըներին ու ծնողացը պատմելուց լետոց թ' նչ  
պատասխանները ստացաւ: Յակոբը ենչն ուղարկեց Յովսէփին  
եղացըների մօտ: Խոնչ ասացին եղացըները եթ նա մօտե-  
նում էր նոցա: Ո՞ր եղացը ուզում էր ազատել Յովսէփին  
և աջողեցան նորան արդ, թէ ոչ: Ուշեմն թ' նչ ասեցին  
Յովսէփի հետ: Խոնչ ասաց Հայըք երը տեսաւ Յովսէփի արիւ-  
նոտ շորերը: Վաճառականները մւը տարան Յովսէփին և  
մւմ վերաց ճախեցին: —

12. ՅՈՎԱԼՔԲ ԲԱՆՏՈՒՄ: Պետակիէսը սկզբումը թ' նչ-  
պէս ընդունեց Յովսէփին և լետոց ենչն ըանտը դրաւ նրան: Քանի տապէտը թ' նչպէս վարուեցաւ Յովսէփի հետ: Թագաւորի  
հը իշխաններին ըեւին ըանտը: Խոնչ էր նոցա տեսած երազը  
և թ' նչ մեկնութեւն տուաւ Յովսէփը: Խոնչպէս կատարուե-  
ցաւ Յովսէփի մեկնութիւնը: Յաջողութեան ժամանակ տա-  
կառապէտը միտը ըերեց Յովսէփին, թէ ոչ: —

13. ՅՈՎԱԼՔԲ ՓԱՌԻՔԸ: Խոնչ պատահմունքով Յովսէփը  
հանուեցաւ բանտից: Քանի՞ և թ' նչ երազներ տեսաւ Փարա-  
ւոնը: Ում խօսքով ըեւին Յովսէփին Փարաւոնի առաջ: Խոնչ  
մեկնութիւն տուաւ Յովսէփ Փարաւոնի երազներին: Փարա-  
ւոնը թ' նչպէս վարուեցաւ Յովսէփի հետ և մըպիսի փառքի  
հասցեց նորան: Խոնչ էր կանչում մունետիկը: Այն ժամա-  
նակ քանի՞ տարեկան էր Յովսէփը: —

14. ՅՈՎԱԼՔԲ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԳՅԼԻՄ ԵՆ ԵԳԻՊՏՈՒ: Թա-  
գաւորի երազները թ' նչպէս կատարուեցան: Խոնչպէս վարու-  
եց Յովսէփ այս գէպումը: Խոնչ ասաց Յակոբ իր որդոց երբ  
քաղացածութիւնը տիրեց նաև Քանանացոց երկըն: Յակոբ

մը որդիքը գնացին Եգիպտում և թօք միաց տանը: Յովսէփը  
թ' նչպէս ընդունեց եղացըներին: Խոնչ պատասխանն պուեն  
եղացըները Յովսէփի յաբանած կասկածանքին: Գորա գէմ  
թ' նչ ասաց Յովսէփը Ո՞ր եղացըր միաց Եգիպտոսու  
աւանդութիւնների պատմառով և արդ խօսքերը թ' նչ  
պատասխանը ունեցան: Յովսէփի վերաբ: Խոնչ արեցին  
եղացըները երբու երանց տաբած մաղերը զտան ցորենի պար-  
կերում: Խոնչ ասաց Յակոբը եթ որդիքը պատմեցին նրան  
այն առնէնը, ինչ որ Եգիպտոսումը պատահէւ էր նոցա հետ: —

15. ՅՈՎԱԼՔԲ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒԾՆ ԵԳԻՊ-  
ՏՈՒ: Յակոբը թ' նչ ասաց իր որդոց եթը Եգիպտոսից բերած  
ցորենը հատաւ: Նոքա թ' նչ պատասխաննեցին: Յակոբը թ' նչ  
երաշխաւորութեանի համաձայնեցաւ Բենիամինին Եգիպտոս  
արձակելու: Խոնչ ընծանեն տարան իրանց հետ եղացը-  
ները: Խոնչ կընշանակէ «Ուժին» բառը: Երկրորդ անդամ գա-  
լուս թ' նչպէս վարուեցաւ Յովսէփի իւր եղացըների հետ:  
Նոքա եթը մատուցին իրանց ընծաները: Խոնչ ասաց Յովսէփը  
երբու տեսաւ Բենիամինին: Խոնչն մեւս սենեակը հեռացաւ-  
նա: Այլ ևս մըպիսի փորձանքին ենթարկեց Յովսէփի իր եղ-  
ացըներին: —

16. Թէ ինջՊէՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՃԱՆՃԵՑԻՆ ՅՈՎԱԼՔԲԻՆ: Ում ուղարկեց Յովսէփի եր եղացըների ետեկը: Խոնչպէս սկսեց  
խօսել հաղաղապէտը և եղացըները թ' նչ պատասխաննեցին: Ում  
պարկի մէջ գտնուեցաւ սկիզբ: Խոնչ արբին եղացըները  
երը նորին Յովսէփի առաջ եկան: Յուղան թ' նչ խօսեց այս  
